Culture & Creativity
EU-Eastern Partnership Programme

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քրիստինա Ֆարինյա

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրն իրականացվում է Բրիտանական խորհրդի կողմից գլխավորվող կոնսորցիումի կողմից՝ Մոլդովայի Սորոս հիմնադրամի, Լեհաստանի մշակույթի ազգային կենտրոնի և Գյոթե ինստիտուտի հետ համատեղ

Culture & Creativity
EU-Eastern Partnership Programme

Զեկույցը մշակվել է ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ:

Սույն զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Զեկույցում զետեղված տեղեկատվության և տեսակետների համար ողջ պատասխանատվությունը կրում է հեղինակը:

Զեկույցը հրապարակվել է 2018 թվականի հունվարին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

1. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 4

2. ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԸ ԵՄ-ՈՒՄ 9

3. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 14

4. ՄՇԱՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՐԱՄԱՍՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 16

4.1 Ազգային իրավիճակի հակիրճ նկարագրություն 16

4.2 ՄՄՁ-ների համընդգրկուն բնույթի կարևորումը 19

4.3 Մասնակցային քաղաքականության ու հարթակների ձևավորում 27

4.4 Առաջացած ստեղծարար հանգույցների հետագա զարգացում և ընդլայնում 31

4.5 Նպատակային ֆինանսավորման ու աջակցության մատչելիության դյուրինացում 35

4.6 Ստեղծարար ձեռնարկատիրական կրթության և հմտությունների կատարելագործում 40

4.7 Թիրախ լսարանի ընդլայնում և շուկաների զարգացում 44

4.8 Միջազգայնացման ու համագործակցության խրախուսում 47

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 54

5.1 Քաղաքականության մշակում, մասնակցություն և հարթակներ: 54

5.2 Ենթակառուցվածք, ֆինանսավորում և քաղաքականության շրջանակներ 57

5.3 Հմտություններ, թիրախ լսարաններ և շուկաներ 60

5.4 Միջազգայնացում և համագործակցություն 62

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 65

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԵՒ ԱՅՑԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ 68

1. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Արդեն ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ մշակութային և ստեղծարար ճյուղերը (ՄՍՃ-ները) ԵՄ-ի կողմից ճանաչվել ու ներառվել են նրա քաղաքականության փաստաթղթերում ու ծրագրերում: Սույն զեկույցում ներկայացված է մշակութային ու ստեղծարար ճյուղերի ընդհանուր պատկերը ԵՄ-ի Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, սակայն ամենակարևորն այն է, որ այստեղ ներկայացված է կոնկրետ երկրի համար տեղայնացված՝ Հայաստանում ՄՍՃ-ների հետ կապված մարտահրավերների ու նպատակային առաջարկությունների վերաբերյալ ամփոփ նկարագրություն:

Հայաստանի հիմնական համընդհանուր հնարավորությունները	Հայաստանի հիմնական համընդհանուր մարտահրավերները
> Ուժեղ ՏՀՏ համայնքը՝ ծրագրային ապահովումների ու խաղերի մշակումն ամենաարագ զարգացող ոլորտներից են: > Աշխարհով մեկ սփռված հայկական մեծ Սփյուռքի որոշ ներկայացուցիչներ ակտիվ ներդրումներ են կատարում Հայաստանի զարգացման գործում, այդ թվում՝ կրթական, սոցիալական ու մշակութային ծրագրերում: > Համացանցի լայն օգտագործումն ու ՏՀՏ ոլորտի համար բարենպաստ պետական քաղաքականությունն օժանդակում են ստեղծարար ճյուղի զարգացմանը: > Միջազգային զբոսաշրջության տեմպերը կայուն կերպով աճում են, և մեծապես կարևորվել է մշակութային ժառանգության ու ժամանակակից մշակույթի և ստեղծարարության ռազմավարական նշանակությունը:	> Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին աղբյուրներից, ՄՍՃ-ների զարգացումը հիմնականում իրագործվում է միջազգային դոնորների ու Սփյուռքի ներդրումների օգնությամբ: > Գիտնականների, գիտահետազոտական ու փորձարարական կենտրոնների ու տնտեսության ճյուղի միջև համագործակցության պակասը խոչընդոտում է նորարարությանն ու գործարարության զարգացմանը: > Թերի զբոսաշրջային ենթակառուցվածքը և հյուրընկալության հմտությունները խոչընդոտ են դառնում զբոսաշրջության զարգացման համար: > Հարևանների հետ երկարատև հակամարտությունների պատճառով բարդացած տարածաշրջանային ու միջսահմանային շարժունակությունը խոչընդոտում է ՄՍՃ և զբոսաշրջության ոլորտում պոտենցիալ փոխգործակցություններին (սիներգիաներին):

Կոնկրետ հնարավորություններն ու մարտահրավերները

1. Հայաստանում ՄՄՁ-ների համընդգրկուն բնույթի կարևորումը

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Մշակութային քաղաքականությամբ մեծապես խրախուսվում են պետական-մասնավոր կառավարման մոդելները և դեպի մշակութային արտադրանք ու հաստատություններ շուկայական կողմնորոշումը: > Մշակութային ժառանգությանն ու զբոսաշրջությանն առնչվող բիզնեսի խթանման մտադրություն (ընդգրկվել է մշակույթի ոլորտի 2014 թվականի ծրագրում): > «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշների մշակում՝ ոլորտում արձանագրվող ազդեցությունների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու նպատակով:	> ՄՄՁ-ները գրեթե արտացոլված և կարևորված չեն պետության՝ արտահանմանը միտված արդյունաբերության ռազմավարության մեջ: > Ստեղծարար ճյուղերի ու կառավարմանը միտված մշակութային համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի և միջգերատեսչական ռազմավարության բացակայություն: > Մշակույթի նախարարությունը շարունակում է կենտրոնացված հովանավորչական դերակատարություն ունենալ մշակույթի քաղաքականության ու կառավարման հարցում: > Բնակչության լայն շերտերի համար մշակույթի հասանելիության ու դրանում մասնակցության պակաս: > ՏՀՏ-ի և ստեղծագործ ու գիտական մտավորականության միջև փոխգործակցության պակաս:

2. Մասնակցային քաղաքականության ու հարթակների ձևավորում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Պետության և ոլորտի մասնագետների միջև երկխոսության համար բաց լինելը:	> Քաղաքականության մշակման գործընթացին դեռևս պակասում է թափանցիկությունն ու համակարգված մասնակցային մոտեցումը: > Բավականին թույլ քաղաքացիական հասարակություն և համատեղ կոլեկտիվ կազմակերպությունների պակաս ՄՄՁ-ներում: > Արհեստակցական միություններն այդքան էլ լավ չեն ադապտացվել շուկայի նոր կանոններին ու մշակութային ոլորտում կառավարման տրամաբանությանը:

3. Առաջացած ստեղծարար հանգույցների հետագա զարգացում և ընդլայնում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Երևանում և մարզերում ի հայտ են գալիս բիզնես զարգացման նոր վայրեր: > Գիտելիքի կենտրոններ դառնալու համար վերանորոգվում ու վերազինվում են գրադարանները:	> Ստեղծագործ ու գիտական մտավորականության համար նոր տարածքների հասանելիության և դրանցից օգտվելու հնարավորության հարցում աջակցության պակաս: > Մշակութային հաստատություններին անհրաժեշտ են կառավարման և բիզնեսի նոր մոդելներ, որպեսզի դրանք փորձարարական աշխատանքների ու քարոզչության գլխավոր կենտրոններ դառնան: > Ժամանակակից սարքավորումների պակաս մշակութային հաստատություններում՝ հատկապես դպրոցներում և կինոթատրոններում:

4. Նպատակային ֆինանսավորման ու աջակցության մատչելիության դյուրինացում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> ՄՍՁ-ներում մասնավոր ներդրումների նկատմամբ հետաքրքրվածության աճ՝ մասնավորապես Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և ընկերությունների կողմից: > Գրականությանը և հրատարակչական գործունեությանն ուղղված նպատակային պետական ֆինանսավորումը վերջին ժամանակներում ավելի է կարևորվել:	> Արվեստին և մշակույթին ուղղված պետական ֆինանսական աջակցությունն իրականացվում է առանց ՄՍՁ-ների բազմաբնույթ շահագրգիռ կողմերի համար նախատեսված մրցակցային ընթացակարգի: > Հովանավորության խրախուսման համար բարենպաստ կարգավորիչ դաշտի բացակայություն: > Ստեղծարար ձեռնարկությունների համար մասնագիտացված օժանդակության ծառայությունների և ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների պակաս: > Ստեղծարար ձեռնարկությունները բախվում են հարկային վարչարարության և հաշվապահության բարդ ու ծանրացված ընթացակարգերի հետ: > Հեղինակային իրավունքների ոլորտում թերի իրազեկվածություն ու կառավարում: > Կինոարտադրության ու տեսալսողական ոլորտը խթանող՝ նպատակային ու արդիական իրավական դաշտի պակաս: > Լրատվությանն ու հեռարձակմանը վերաբերող իրավական դաշտը չի նպաստում շուկայում բազմակարծությանը:

5. Ստեղծարար ձեռնարկատիրական կրթության և հմտությունների կատարելագործում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Մշակութային կրթական համակարգի կատարելագործումը պետության առաջնահերթությունների թվում է: > Մասնավոր հատվածի մի շարք նախաձեռնություններ կրթական համակարգն առավել ստեղծարար են դարձնում:	> Ընդհանուր ուսումնական ծրագրերում չեն խթանվում ստեղծարարությունն ու ձեռնարկատիրությունը: > Գեղարվեստական կրթությունը և ուսուցումը չեն ապահովում կառավարման և հաղորդակցման համապատասխան հմտություններ և չեն արձագանքում շուկայի փոփոխություններին ու կարիքներին:

6. Թիրախ լսարանի ընդլայնում և շուկաների զարգացում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Բազմաբնույթ մասնավոր նախաձեռնություններ՝ ՄՍՁ-ները թիրախ լսարանի առավել լայն շերտերի հետ փոխկապակցելու համար:	> Թիրախ լսարանի ընդլայնմանն ու օգտվողների ներգրավվածությանն ուղղված ռազմավարության պակաս: > Մարզերում մշակութային ապրանքների առաջարկի խրթին հասանելիություն:

7. Միջազգայնացման ու համագործակցության խրախուսում

Հնարավորություններ	Մարտահրավերներ
> Միջազգայնորեն ամուր փոխկապակցված ՄՍՁ-ների համայնք: > Բանակցությունների փուլում է Ստեղծարար Եվրոպա ծրագրին պոտենցիալ անդամակցությունը: > Միջազգային ասպարեզում Հայաստանի բրենդավորման համար անհրաժեշտ՝ մշակույթի և մշակութային ինքնության պաշտոնապես ճանաչումը: > Երիտասարդ տաղանդների խրախուսմանը, նրանց ուսուցմանը և միջազգային հարթակներում նրանց ներկայությանն օժանդակող պետական քաղաքականություն: > Հայաստանի կինոարտադրության համար միջազգային կապերի ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված երաշխիքներ: > Փառատոնները ծառայում են որպես հանգույցներ՝ տարածաշրջանային և առավել ընդլայնված միջազգային համագործակցության համար:	> Միջազգային շարժունակությանն ուղղված օժանդակության ոչ կանոնավոր ու ոչ շարունակական բնույթը խոչընդոտում է միջազգային կապերի ու գործընկերային հարաբերությունների երկարաժամկետ պահպանմանը: > Փառատոնների անկանոն բնույթը թույլ չի տալիս լիարժեքորեն իրացնել դրանց ամբողջ ներուժը և դիտել դրանք որպես միջազգայնացման գլխավոր ուղղություններ: > ՄՍՁ-ների լայն բազմազանություն ներառող մշակութային դիվանագիտական ռազմավարության պակաս:

Առաջարկություններ Հայաստանում ՄՄՁ-ների զարգացման համար

1. Քաղաքականության մշակում, մասնակցություն և հարթակներ

- *Մշակել ՄՄՁ-ների գծով միասնական քաղաքականություն*
- *Ձևավորել ընդհանուր հարթակներ և ներգրավել շահագրգիռ կողմերին*
- *Խթանել փոխգործակցությունը ՄՄՁ-ների, գրոսաշրջության և ՏՏ ոլորտների միջև*

2. Ենթակառուցվածք, ֆինանսավորում և քաղաքականության շրջանակներ

- *Բազմազանեցնել ֆինանսավորման աղբյուրները*
- *Ստեղծել բարենպաստ, օժանդակող միջավայր*
- *Ուժեղացնել փաստացի տվյալների վրա հիմնված կառավարման համակարգը*

3. Հմտություններ, թիրախ լսարաններ և շուկաներ

- *Մեկնարկել ՄՄՁ-ների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ*
- *Խթանել ստեղծարար հմտությունների ու ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը*
- *Ձևավորել նոր թիրախ լսարաններ ու շուկաներ*

4. Միջազգայնացում և համագործակցություն

- *Առաջ տանել հայկական տաղանդն ու ստեղծարարությունն ամբողջ աշխարհում*
- *Ապահովել հնարավորություններ միջազգային համագործակցության և առևտրի համար*

Աշխատանքային թիմը. Երախտիքի խոսք

Քրիստինա Ֆարինյա, ավագ փորձագետ (Պորտուգալիա), հեղինակ

Զվիադ Մչեդլիշվիլի, կրտսեր փորձագետ (Վրաստան), ազգային խորհրդատու և համահեղինակ

Մենք ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Արևելյան գործընկերության բոլոր երկրների մշակութային և ստեղծարար ճյուղերի վերաբերյալ վեց զեկույցներն իրականություն դարձնելու գործում. ԵՄ-Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրից՝ Ռագնար Սիիլին, ով մտահղացել և ուղղորդել է ամբողջ գործընթացը, և Թիմ Ուիլյամսին՝ ճիշտ և տեղին վերլուծական գնահատականների համար, Ծրագրի ազգային համակարգող Նորայր Երզնկյանին՝ տեղերում այցերը կազմակերպելու, ինչպես նաև թարմացված տեղեկություններ ապահովելու և ճշտելու համար: Արևելյան գործընկերության բոլոր վեց երկրներում՝ տարբեր ոլորտների բոլոր շահագրգիռ կողմերին, որոնք մեծահոգաբար մասնակցել են հանդիպումներին և աշխատաժողովներին, ուղեկցել

են մեզ մեր այցերի ժամանակ (տե՛ս ցանկը Հավելված Բ-ում): Եվ վերջապես, մենք կցանկանայինք շնորհակալություն հայտնել բոլոր գործընկերներին և ընկերներին, որոնք մեծ պատրաստակամությամբ մեզ տրամադրել են հետաքրքիր հղումներ, կիսվել իրենց պատմություններով և խորհրդով:

2. ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԸ ԵՄ-ՈՒՄ

Արդեն ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ մշակութային և ստեղծարար ճյուղերը (ՄՍՃ-ները) ԵՄ-ի կողմից ճանաչվել ու ներառվել են նրա քաղաքականության փաստաթղթերում [1] ու ծրագրերում: Ստեղծարար տնտեսությունը, որն ավանդական արվեստի ու մշակույթի բնագավառներից ավելի լայն հասկացություն է և ներառում է փոխկապակցված գործողությունների ու ենթաոլորտների ավելի լայն սպեկտր, բավականին մեծ ներուժ ունի, որն արդեն իսկ ճանաչվել է այնպիսի միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհուրդը, Միավորված ազգերի կազմակերպության տարբեր կառույցները[2], ինչպես նաև ամբողջ աշխարհի ազգային, տարածաշրջանային և տեղական պետական մարմինների ու հաստատությունների կողմից:

Նախկինում այդ ոլորտի՝ ոչ շուկայական արժեքներ ստեղծելու կարողությունը երկար ժամանակ ուսումնասիրվում էր՝ հաշվի առնելով խորհրդանշական, ոչ նյութական ու կրթական գործոնները: Վերջին ժամանակներում ավելի ու ավելի է աճում այն համոզվածությունը, որ այս ոլորտը կարող է թե՛ ուղղակի, և թե՛ անուղղակի ազդեցություն ունենալ տնտեսության վրա՝ աճի հնարավորությունների ու նոր աշխատատեղերի ստեղծման, նորարարությունների խթանման, սոցիալական և կայուն զարգացման գործին նպաստելու միջոցով:

Համաշխարհային մասշտաբով կատարված ուսումնասիրություններն ու հավաքագրված տվյալները հիմնավորում են այս ենթադրությունը: ԵՄ-ում առանցքային ստեղծարար ճյուղերի շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ ստեղծված հավելյալ արժեքը կազմել է 558 միլիարդ եվրո, ինչը մոտավորապես ամբողջ ԵՄ-ի կտրվածքով ՀՆԱ-ի մոտ 4.4 տոկոսն է՝ ըստ 2011 թվականի տվյալների:[3] Այս ճյուղերն ապահովում են լրիվ աշխատաժամանակով զբաղվածությամբ մոտ 8.3 միլիոն աշխատատեղ կամ Եվրոպայի ընդհանուր աշխատուժի 3.8 տոկոսը: Վիճակագրական տվյալները նաև ցույց են տալիս, որ տոկոսային արտահայտությամբ ՄՍՃ-ներում երիտասարդների զբաղվածության ցուցանիշներն ավելի բարձր են, քան տնտեսության մնացած ճյուղերում, իսկ 2008 թվականին Եվրոպայում արձանագրված տնտեսական ու ֆինանսական

---

[1] Ինչպիսիք են օրինակ՝ «ԵՄ-ում աճի ու զբաղվածության ապահովմանն ուղղված՝ մշակութային և ստեղծարար ոլորտների խթանման վերաբերյալ հաղորդագրությունը» (2012թ.), «Մշակութային ժառանգության մասին հաղորդագրությունը» (2014թ.) և «Եվրոպական պառլամենտի բանաձևը մշակութային ու ստեղծարար ճյուղերի վերաբերյալ ԵՄ համաձայնեցված քաղաքականության մասին» (2016թ.):

[2] ՅՈՒՆԵՍԿՕ – Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, ՅՈՒՆԿՏԱԴ - Միավորված ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման համաժողով, ՄԱԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր:

[3] Տերա Քոնսալթանտս (Tera Consultants) (2014թ.) «ՀՆԱ-ի ու զբաղվածության մասով ստեղծարար ճյուղերի դերը ԵՄ-ում»

անկման ժամանակ այդ ոլորտը մյուսների համեմատ իրեն առավել կայուն դրսևորեց: 2013 թվականի համաշխարհային տնտեսական տվյալները[4] ցույց են տալիս, որ այս ոլորտում առաջատարը Եվրոպան է՝ դառնալով զարգացման գործընթացներն արագացնող հզոր ուժ: ՄՍՁ-ներն ապահովում են համաշխարհային ՀՆԱ-ի 3 տոկոսը (2,250 միլիարդ ԱՄՆ դոլար եկամուտ) և ամբողջ աշխարհում 29.5 միլիոն աշխատատեղ:

Չնայած կարևորությունն ընդունելու այդ միտումներին, դրանց զարգացման տեմպերն այնուամենայնիվ դանդաղել են, քանի որ ՄՍՁ-ների գործունեությունը համընկնում է քաղաքականության այնպիսի տարբեր բնագավառների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը, կրթությունը, տնտեսությունը, քաղաքաշինությունն ու տարածաշրջանային զարգացումը: Վերջին տարիներին ԵՄ-ում ՄՍՁ-ների նշանակության վերաբերյալ քննարկումների առարկա առանցքային հարցերը հետևյալն էին՝

- ***ԵՄ-ի ռազմավարական օրակարգում ՄՍՁ-ները որպես առաջնահերթություն ընդգրկելը՝ ամբողջական համաեվրոպական էկոհամակարգի զարգացմանը նպաստելու համար:*** *ԵՄ2020 ռազմավարությունը[5] մեծամասամբ չի ներառում և չի բացահայտում ՄՍՁ-ները և դրանց դերը: Ավելի բարձր մակարդակում որոշ ԵՄ կառույցների կողմից արդեն կարևորվում է մշակույթի դերը Կայուն զարգացման նպատակների իրականացման գործում, և ջանքեր են գործադրվում Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգում մշակույթը որպես շարժիչ ուժ դիտարկելու ուղղությամբ: ԵՄ-ին անհրաժեշտ է էլ առավել ճանաչել ՄՍՁ-ների նշանակությունն ու ներդրումներ կատարել այդ ճյուղերում, ուսումնասիրել դրանց՝ աճին ու աշխատատեղերի ստեղծմանը նպաստելու, նորարարությունների համար գործընթացներն արագացնող ուժ դառնալու և գլոբալ մրցակցության ու «փափուկ ուժի» ասպարեզում առանցքային տարր լինելու ներուժը: Նորարարությունը, ձեռնարկատիրությունն ու ՄՍՁ-ները պաշտոնապես ճանաչվել են որպես համապարփակ ոլորտներ[6] ԵՄ այնպիսի ծրագրերում, ինչպիսիք են՝ Հորիզոն-2020 հետազոտությունների և նորարարության ծրագիրը, ՓՄՁ-ների համար «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն» (COSME) ծրագիրը (այդ թվում՝ «Էրազմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիրը), «Start-up Europe» ծրագիրը, «Էրազմուս+» ծրագիրը, INTERREG Տարածքային համագործակցության ծրագիրը և ԵՄ կառուցվածքային ու համերաշխության հիմնադրամները:*

- ***ՄՍՁ-ների մրցակցային առավելության ինտեգրումը տարածաշրջանային զարգացման «խելացի մասնագիտացվածության» ռազմավարություններում՝ տարածաշրջանային առաջխաղացման, նորարարության և սոցիալ-տնտեսական զարգացման համար:*** *ՄՍՁ-ներն ունեն գործունեության այլ*

---

[4] «Էրնսթ ընդ Յանգ» (Ernst & Young) (2015թ.) «Մշակութային ժամանակներ. մշակութային և ստեղծարար ճյուղերի առաջին գլոբալ քարտեզը», CISAC «Հեղինակների և կոմպոզիտորների միությունների միջազգային կոնֆեդերացիա»

[5] https://ec.europa.eu/info/business-economy-euro/economic-and-fiscal-policy-coordination/eu-economic-governance-monitoring-prevention-correction/european-semester/framework/europe-2020-strategy_en

[6] 2015թ. Խորհրդի եզրակացությունները «Մշակութային և ստեղծարար կամուրջները՝ նորարարությունը, տնտեսական կայունությունը և սոցիալական ինտեգրումը խթանելու համար»:

տեսակների հետ փոխգործակցելու ներուժ, ինչը հաճախ առաջացնում է այնպիսի համալիր ու խմբավորված ազդեցություններ, որոնք լրջորեն նպաստում են տեղական մակարդակով հավելյալ արժեքի ստեղծմանը: ԵՄ մի քանի տարածաշրջաններ կառուցվածքային ու համերաշխության հիմնադրամների միջոցներն ուղղել են ՄՄՁ-ների զարգացմանը՝ հատկապես առկա ակտիվների բացահայտման, ռեսուրսների համախմբման, ռազմավարական գործընկերությունների ու կլաստերների ձևավորման և ենթակառուցվածքների ու ծառայությունների բարելավման ուղղությամբ:

- ***ՄՄՁ-ների ռազմավարական նշանակության ճանաչումը քաղաքաշինության ոլորտի քաղաքականության համար՝ մասնավորապես «Եվրոպական մշակութային մայրաքաղաքներ» (ԵՄՄ-ներ) նախաձեռնության միջոցով:*** *Քաղաքները միշտ հարմար վայրեր են եղել արվեստի բնագավառի գործիչների ու ստեղծագործողների բարգավաճման և առաջխաղացման համար: Ի հայտ եկած ստեղծարար հանգույցներն ու նոր հանրաճանաչ վայրերը, որտեղ մասնագետները կարող են ստեղծագործել, հանդիպումներ ունենալ, համագործակցել և ցուցադրել իրենց ստեղծագործությունները, խթանում են քաղաքների զարգացումը, նոր շունչ ու նշանակություն են հաղորդում լքված արտադրական տարածքներին կամ մինչ այդ չօգտագործվող շենքերին՝ այդպիսով գրավիչ դառնալով հարակից ծառայությունների ու բիզնեսների համար: ԵՄՄ-ն՝ ԵՄ-ի երկարամյա առաջատար նախաձեռնությունը, արվեստի ու մշակույթի միջազգային ծրագրից վերածվել է առավել կառուցվածքային նախաձեռնության, որը քաղաքներին ներգրավում է մշակութային զարգացումն ու ՄՄՁ-ներն իրենց զարգացման քաղաքականության ռազմավարության մեջ ներառելու գործում: ԵՄՄ-ները կամուրջ են հանդիսանում Եվրոպայում համագործակցությունն ու մշակույթը նորարարության, զբոսաշրջության ու քաղաքաշինության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ միավորելու համար:*

- ***ՄՄՁ-ների ներառումը նորարարության և գիտահետազոտական ծրագրերում:*** *Նորարարական գործընթացներին նպաստելու մասով ՄՄՁ-ների դերն ու նշանակությունը դեռևս աստիճանաբար է ճանաչվում ու խթանվում: 2010 թվականից ի վեր «Նորարարության միություն» նախաձեռնության (ԵՄ2020 առաջատար նախաձեռնություն)[7] կողմից շեշտվել է, որ գնալով նորարարության համար շարժիչ ուժ են հանդիսանում ոչ տեխնոլոգիական գործոնները, օրինակ՝ ստեղծարարությունը, դիզայնը, բրենդավորումը և նոր կազմակերպական գործընթացները: Նախաձեռնության կողմից նաև կարևորվել են օգտագործողների կողմից նախաձեռնված նորարարական գործընթացները և ՄՄՁ-ների դերը նպատակային հարաբերություններ ձևավորելու ու թիրախ լսարանների և քաղաքացիների հետ կապ ստեղծելու հարցում:*

- ***Այլ ճյուղերի և հասարակության վրա տարածվող ներգործության (spill-over effect) խթանումը:*** *Իրենց ռազմավարական նշանակության շնորհիվ ՄՄՁ-ները լրացուցիչ ներգործություն ունեն այլ ճյուղերի ու ոլորտների վրա, քանի որ դրանք համակցում են արվեստի, գիտության և տեխնոլոգիայի ոլորտները:*

---

[7] Եվրոպական հանձնաժողովի (2010թ.) հաղորդագրությունը «Նորարարության միություն. Եվրոպա - 2020 առաջատար նախաձեռնության մասին»

Մշակութային և ստեղծարար հմտությունները կարող են արժեքավոր լինել այլ մասնագիտական ոլորտներում, ՄՍՁ-ները կարող են բովանդակություն հաղորդել ՏՀՏ-ին, որոշակի ազդեցություն ունենալ գբոսաշրջության ոլորտում և ներառվել արժեքային շղթաների որոշ փուլերում, մասնավորապես՝ արտադրության և բարձր տեխնոլոգիաների ճյուղերում: Այս կատալիտիկ ներուժը նաև որպես ռեսուրս է ծառայում սոցիալական նորարարության, առողջապահության և սոցիալական ոլորտների մարտահրավերների, օրինակ՝ բնապահպանական հարցերի համար: Խոչընդոտների վերացումն ու քաղաքականության տարբեր ոլորտների միջև փոխգործակցության խթանումն անհրաժեշտ են նման միջճյուղային զարգացման ու համատեղ շահերով միավորված խմբերի խթանման համար, որտեղ տարբեր շահագրգիռ կողմեր կարող են արդյունավետ համագործակցություն իրականացնել:

> ***Կարողությունների զարգացում՝ թվային տեխնոլոգիաների միջոցով ՄՍՁ-ների արժեքային շղթաներ ներմուծվող նոր հնարավորություններին համապատասխանելու համար:*** *Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը համացանցը դարձնում է շուկայական գործարքների հիմնական վայր՝ հանգեցնելով ստեղծարար ճյուղերի արժեքային շղթաների բազմակողմանիությանը: Դա նշանակում է, որ ՄՍՁ-ներին անհրաժեշտ է մշտապես նոր հմտություններ ձեռք բերել ու համապատասխանեցնել վարձատրության միջոցները: ՏՀՏ-ի կողմից նույնպես նոր հնարավորություններ են ներմուծվում ՄՍՁ-ներ՝ կապված բիզնես մոդելների և թիրախ լսարանների հետ առավել սերտ շփումներ հաստատելու ձևաչափերի հետ, որոնք հիմնված են համատեղ ստեղծագործման և օգտվողների հետագա ներգրավման վրա: Ստեղծարար արժեքային շղթաներում թվային փոփոխությունները մոնիթորինգի են ենթարկվում ԵՄ-ի կողմից՝ շուկայում հետագա հավասարակշռության բոլոր խախտումներին արձագանքելու, կարողությունները զարգացնելու և տեղեկատվական բովանդակությունն ու դրա արտահայտման ձևերի բազմազանությունը խթանելու համար:*

> ***Ֆինանսավորումից օգտվելու հնարավորությունների դյուրինացում, հատկապես ԵՄ-ի նոր՝ ՄՍՁ-ների վարկավորման գործիքի միջոցով:*** *ՄՍՁ-ների համար բավականին լուրջ խոչընդոտ է ֆինանսավորման բազմազան աղբյուրների հասանելիությունը: «Ստեղծարար Եվրոպա» ծրագիրը (2014-20թթ.) 121 միլիոն եվրո գումար է նախատեսել ՄՍՁ նախաձեռնություններին վարկեր տրամադրող ֆինանսական միջնորդների (օրինակ՝ բանկերի) համար որպես ապահովագրում գործող ֆինանսական մեխանիզմի համար: Ֆինանսական միջնորդների համար նաև դասընթացների ծրագրեր են նախատեսվում՝ ՄՍՁ նախագծերի կարիքներն ավելի ճիշտ ընկալելու համար:*

> ***Միջսահմանային կապերի հաստատման և ստեղծարար հանգույցների ու ստեղծարար ձեռնարկատերերի խրախուսում:*** *Եվրոպական հանձնաժողովի կողմից օժանդակություն է տրամադրվում «Եվրոպական ստեղծարար հանգույցների ցանց»[8] (ECHN) և «Ստեղծարար ուղիներ» (Creative Tracks)[9] նախաձեռնություններին: Այս պիլոտային նախաձեռնությունները համայնքներ*

[8] http://creativehubs.eu
[9] http://www.creativetracks.org

են ձևավորում՝ տեղեկատվության տարածման, հավաքների խթանման, «հավասարը հավասարի հետ» ձևաչափով ուսումնական դասընթացների, կարողությունների բացահայտման, համատեղման և մրցույթների միջոցով՝ միևնույն ժամանակ գլոբալ մակարդակով ընդհանուր հարթակ ապահովելով օժանդակության այս հնարավորությունները կիսելու և միմյանցից սովորելու համար:

> ***ՄՄՃ-ների որակական և քանակական ազդեցության վերաբերյալ պատկերացման ձևավորում. Մշակութային և ստեղծարար քաղաքների մոնիթոր (Cultural and Creative Cities Monitor)[10]:*** *Եվրոպական հանձնաժողովը Եվրոստատի՝ Եվրոպական միության վիճակագրության ծառայության ու իր անդամ պետությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ու ՏՀԶԿ-ի հետ միասին աշխատանքներ է իրականացրել տնտեսության մեջ ու ընդհանրապես հասարակությունում ՄՄՃ-ների դերի ու նշանակության վերաբերյալ տվյալների հավաքագրման ու միջազգային մակարդակով ներդաշնակեցման ուղղությամբ: Ավելի ու ավելի է աճում ՄՄՃ-ների որակական ազդեցություններ արձանագրելու նոր մեթոդների բացահայտման անհրաժեշտությունը: Դիտարկվում են նաև տեղեկությունների հավաքագրման այլ մեթոդները, ինչպիսիք են՝ ձեռքբերումների վերաբերյալ պատմություններն ու հարցազրույցները: 2017 թվականին Եվրոպական հանձնաժողովն ու Հետազոտությունների համատեղ կենտրոնը միասին նախաձեռնել են «Մշակութային և ստեղծարար քաղաքների մոնիթոր» գործիքը: Այս հարթակն արձանագրում ու դիտանցում է ՄՄՃ-ների օգուտներն ու առավելություններն ընտրված քաղաքներում (որոնք ներկայումս 168-ն են) և համակարգված ու համադրական եղանակով գնահատում դրանց քանակական ու որակական արժեքն ու ազդեցությունը: Այս գործիքը ևս մի միջոց է, որը նպաստում է մշակույթը քաղաքների զարգացման հիմքում դնելու ջանքերի իրագործմանն ու ՄՄՃ-ների համար տվյալների ու տեղեկատվության վերլուծության ու ներկայացման նոր մեթոդների մշակմանը:*

> ***ԵՄ արտաքին հարաբերություններում ՄՄՃ-ների դերի կարևորումը՝ նոր շուկաների բացահայտման և համաշխարհային մակարդակով կայուն զարգացմանն ու մշակութային բազմազանության ապահովմանը նպաստելու հարցում:*** *Եվրոպական միության խորհուրդը վերջերս եզրակացություններ է ընդունել, որոնցով հաստատվում է միջազգային մշակութային հարաբերությունների մասով ԵՄ նոր ռազմավարական մոտեցման վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրությունը:[11] Կարևորելով Եվրոպայի հիմնադիր դերը ՄՄՃ-ների ոլորտում, այն կհանգեցնի նպաստավոր միջավայրի ձևավորմանը, որը ՄՄՃ-ներին հնարավորություն կտա շարունակել աճի ու աշխատատեղերի ստեղծման հնարավորությունների ընդլայնումը, մշակութային արտադրության՝ որպես զբոսաշրջության ու զարգացման շարժիչ ուժի խթանումը, միևնույն ժամանակ նոր ուղիներ հարթելով հաղորդակցության, մտավոր երկխոսության և խաղաղության կերտման գործում:*

---

[10] https://composite-indicators.jrc.ec.europa.eu/cultural-creative-cities-monitor/

[11] Եվրոպական հանձնաժողով (2016թ.) «Դեպի միջազգային մշակութային հարաբերություններին ուղղված ԵՄ ռազմավարություն»

3. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն զեկույցում ներկայացված է մշակութային ու ստեղծարար ճյուղերի [12] ընդհանուր պատկերը ԵՄ-ի Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, սակայն ամենակարևորն այն է, որ այստեղ ներկայացված է կոնկրետ երկրի համար տեղայնացված՝ Հայաստանում ՄՍՃ-ների հետ կապված մարտահրավերների ու նպատակային առաջարկությունների վերաբերյալ ամփոփ նկարագրություն:

Աշխատանքի նպատակն այդ երկրներում ՄՍՃ-ների ներկայիս վիճակի վերլուծությունն է, դրանց հիմնական մարտահրավերների և հնարավորությունների վերհանումը, առաջարկությունների ներկայացումը, ուղղությունների և կատարվելիք հետագա քայլերի սահմանումը: Այս մոտեցումն առավել լայն շրջանակ է ընդգրկում, քան պարզապես ազգային և ԵՄ մակարդակներում քաղաքականություն մշակողներին հասցեավորված լինելը: Այն նախատեսված է ՄՍՃ-ների բազմաբնույթ էկոհամակարգով հետաքրքրված և դրանում հավանական մասնակցություն ունեցող բոլոր անձանց համար: Հիմնական թիրախային խմբերն են՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանի քաղաքականություն մշակողները և իշխանությունները բոլոր՝ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում, նրանց ԵՄ և միջազգային գործընկերները, տարբեր ոլորտների մասնագետները բոլոր բնագավառներից և ենթաոլորտներից, նրանց կազմակերպությունները, ձեռնարկություններն ու հաստատությունները և բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը, մասնավորապես կրթության և գործարար համայնքից, որոնք առնչվում են ՄՍՃ-ների զարգացման խնդրի հետ:

Սույն զեկույցում արծարծվող՝ ՄՍՃ-ների շրջանակի մասով, «մշակութային և ստեղծարար ճյուղեր» եզրույթը ներառում է բնագավառների կամ ենթաոլորտների բազմազան և դինամիկ սպեկտր, որոնք յուրաքանչյուր երկրում տարբեր են: Այս բնագավառները մշտապես զարգանում և փոխներգործում են, ուստի ճշգրիտ սահմանումներ տալը և հստակ հասկացություններ սահմանելն իրատեսական չէ, այնուամենայնիվ զեկույցի պատրաստման համար որպես ուղեցույցներ օգտագործվել են հետևյալ կողմնորոշիչ սկզբունքները.

ա) Որպես ելակետ վերցվել է «Ստեղծագործ Եվրոպա» ծրագիրը սահմանող

---

[12] Բացի դրանից, ԵՄ-ԱլԳ «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրով սկսվել է ազգային ենթաոլորտային զեկույցների պատրաստումը՝ մշակութային ժառանգության, տեսալսողական արտադրանքի (ֆիլմերի), կատարողական արվեստի և գրականության վերաբերյալ լրացուցիչ հատուկ պատկերացումներ ձևավորելու նպատակով: Ավելին, ՄՍՃ-ների զարգացման տարածաշրջանային հեռանկարների մասին պատկերացում կազմելու համար այդ 6 երկրներից յուրաքանչյուրում «ստեղծարար քաղաք (շրջան)» նախաձեռնության պիլոտային շարունակական աշխատանքներ են իրականացվում, որոնք ներառում են հետևյալ քաղաքներն ու շրջանները. Սիսիան (Հայաստան), Շամքիր (Ադրբեջան), Սվետլոգորսկ (Բելառուս), Մցխեթա-Մթիանեթի (Վրաստան), Օրհեյ (Մոլդովա) և Կոսով (Ուկրաինա): Վերջում Ծրագրի կողմից ԱլԳ պետությունների մեծ մասում մեկնարկել է մշակութային ցուցանիշների զարգացման նախաձեռնությունը, որն իրականացվում է ԱլԳ երկրների մեծ մասում, ինչը հնարավորություն կտա ունենալ ՄՍՃ-ների մշակութային, տնտեսական և սոցիալական դերի մասին ամփոփ նկարագիր: Հավելյալ տեղեկությունները հասանելի են հետևյալ կայքում՝ http://www.culturepartnership.eu/

կանոնակարգում [13] ընդգրկված՝ «մշակութային և ստեղծարար ճյուղեր» հասկացությունը: Այն ներառում է համապարփակ սահմանում, որն ընդգրկում է մշակութային արժեքների և (կամ) գեղարվեստական կամ ստեղծագործական այլ արտահայտման վրա հիմնված գործունեության բոլոր տեսակները, որոնցից են, ի թիվս այլոց՝ ճարտարապետությունը, գրապահոցները, գրադարաններն ու թանգարանները, գեղարվեստական արհեստները, տեսալսողական արտադրանքը (այդ թվում՝ կինոֆիլմերը, տեսախաղերը, մուլտիմեդիան և հեռուստատեսությունը), նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը, դիզայնը (այդ թվում՝ նորաձևությունը), երաժշտությունն ու գրականությունը, կատարողական արվեստը, հրատարակչական գործը, ռադիոն և կերպարվեստը:

բ) Մշակութային և գեղարվեստական արտահայտման ձևերը յուրաքանչյուր երկրի համար յուրահատուկ են: Արևելյան գործընկերության վեց երկրներից յուրաքանչյուրում կարող են դիտարկվել գործունեության այլ հարակից տեսակներ, եթե դրանք համապատասխան ներուժ ունենան, որոնցից կարող են լինել օրինակ՝ ՏՀՏ-ները, լրատվամիջոցները, հաղորդակցությունն ու գովազդը, նորաձևությունը և պերճանքի առարկաները, խոհարարական արվեստը, գինու արտադրությունը և մշակութային զբոսաշրջությունը:

գ) Զեկույցում հիմնականում շեշտը դրված է ՄՄՁ-ներում այդ բնագավառների, ենթաոլորտների կամ գործունեության տեսակների զարգացման պայմանների խթանման և բարելավման վրա, որոնք մասշտաբային դառնալու և (կամ) եկամուտ ապահովելու և կենսունակ դառնալու հնարավորություն ունեն և ուղղակիորեն նպաստում են տնտեսական աճին և զբաղվածությանը:

Զեկույցի նախապատրաստման գործընթացի ժամկետը նախատեսվում էր տևել վեց ամիս՝ 2016 թվականի աշնանից մինչև 2017 թվականի գարունը: Տեղերում կատարվելիք աշխատանքները հիմնականում ներառում էին ակտիվ առաքելություններ դեպի տարածաշրջանի վեց մայրաքաղաքներ (Ուկրաինայում ներառված էր նաև Լվովը): Այս այցերի ընթացքում հարցազրույցներ, հանդիպումներ և քննարկումներ տեղի ունեցան հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների և ստեղծարար ճյուղի մասնագետների ու կազմակերպությունների հետ՝ անհատական և խմբային աշխատաժողովների ձևաչափով: Առաքելության շրջանակներում նախատեսված էին նաև այցեր ստեղծարար հանգույցներ, վայրեր և հաստատություններ: Տվյալների հավաքագրումից ու հետադարձ կապ ապահովող հաղորդակցությունից բացի իրականացվում էր նաև երկրորդային ուսումնասիրություն՝ առկա նյութերի և տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա:

Թեև ԱլԳ երկրներում շատ ընդհանրություններ կան, դրանք նաև զգալի տարբերություններ ունեն: Այս երկրներն իրենց ՄՄՁ օրակարգերի մշակման հարցում շատ ընդհանուր մարտահրավերների են բախվում և կարող են օգուտ քաղել ընդհանուր գործողություններից, սակայն դրանց իրագործման եղանակները և մեկնաբանումը կարող են տարբերվել: Սույն զեկույցում վեր են հանվում

[13] «Ստեղծագործ Եվրոպա» ծրագիրը (2014-2020 թթ.) սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1295/2013 կանոնակարգի (ԵՄ) 1-ին գլխի 2-րդ հոդված:

Հայաստանի ՄՄՁ-ների զարգացման հիմնական մարտահրավերներն ու հնարավորությունները: Մարտահրավերների մեծ մասն ընդհանուր են երկրագնդի այլ աշխարհամասերի մի շարք այլ երկրներում (և տարածաշրջաններում), այդ թվում՝ Եվրոպայի այլ մասերում և Եվրոպական միությունում: Քանի որ ՄՄՁ-ները սերտորեն կապված են տաղանդի և (կամ) մարդկային ռեսուրսների ու ստեղծարարության վրա հիմնված նոր տնտեսության հետ, ոլորտի զարգացումը պահանջում է մի ամբողջ նոր էկոհամակարգի ստեղծում: Պատրաստի լուծումներ չկան:

Յուրաքանչյուր մարտահրավերի համար զեկույցում առաջարկվում են օրինակներ Եվրոպական միության երկրներից: Որոշ դեպքեր արդեն իրենց արդարացրած երկարատև նախաձեռնություններ են, մյուսները դեռ նոր են մեկնարկել և դեռ ամբողջությամբ չեն գնահատվել: Այլ երկրներից բերվող այս օրինակները [14] ոգեշնչող են, դրանցով ներկայացվող գործելակերպերը կարող են կրկնօրինակվել անհրաժեշտ տեղայնացված համապատասխանեցումներով և (կամ) որպես ելակետ ծառայել ԱԼԳ երկրների համար ուսումնասիրություն իրականացնելու և դրա հիման վրա իրենց սեփական առանձին լուծումները մշակելու համար: Ոլորտի զարգացումը խթանելուն ուղղված առաջարկությունները ներկայացված են կարճաժամկետ, ինչպես նաև միջնաժամկետ հեռանկարի համար:

4. ՄՇԱՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՐԱՄԱՍՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

4.1 Ազգային իրավիճակի հակիրճ նկարագրություն

Հնարավորությունները

> *Ուժեղ ՏՀՏ համայնքը, ծրագրային ապահովումների ու խաղերի մշակումն ամենաարագ զարգացող ոլորտներից են:*

Հայաստանի ՏՀՏ ոլորտում գործում են թե՛ տեղական, և թե՛ օտարերկրյա ընկերություններ, որոնք հիմնականում տեղակայված են Երևանում և ունեն բարձր որակավորում ունեցող ու մատչելի մարդկային ռեսուրսներ: Ոլորտի գլխավոր ուղղվածություններից են հատուկ պատվերով ծրագրային ապահովումների մշակումը և արտապատվիրումը, խորհրդատվությունը, նախագծումը և փորձարկումը, ինչպես նաև ինտերնետ ծառայությունները: Հզոր ու կայացած ՏՀՏ ոլորտն արժեքավոր ռեսուրս է, որը լուրջ հիմք է ստեղծարար տնտեսության զարգացման համար:

[14] Օրինակներն ընտրվել են ելնելով նրանից, թե որոնք են վերլուծության համաձայն լավագույնս համապատասխանում մարտահրավերներին, ինչպես նաև հիմնվելով նյութերի ու փորձագետների փորձառության վրա:

> *Աշխարհով մեկ սփռված հայկական մեծ Սփյուռքի որոշ ներկայացուցիչներ ակտիվ ներդրումներ են կատարում Հայաստանի զարգացման գործում, այդ թվում՝ կրթական, սոցիալական ու մշակութային ծրագրերում:*

Աշխարհով մեկ սփռված հայկական մեծ Սփյուռքից (արտասահմանում ապրող հայերը թվով գերազանցում են հայրենիքում ապրող հայերին) մի շարք դոնորներ և հիմնադրամներ պատրաստակամ են Հայաստանի զարգացման գործում իրենց ներդրումն ունենալու հարցում: Աջակցությունը բազմազան է՝ սկսած բիզնեսի զարգացմանն ուղղված ներդրումներից մինչև տարբեր, այդ թվում՝ կրթական, մշակութային և ստեղծարար ճյուղերում կատարվող նվիրատվությունները: Կրթական ոլորտում, մասնավորապես, մի շարք դրամաշնորհային և ուսումնական ծրագրեր են առաջարկվում հայերին՝ ամբողջ աշխարհի կրթական հաստատություններում բարձրագույն կրթությունից մինչև հետդոկտորական աստիճան ստանալու համար: Սփյուռքի ակտիվ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս առավել մեծ հասանելիություն ունենալ կրթությանը և մշակույթին: Ավելին, Սփյուռքի երիտասարդ մասնագետները հետաքրքրված են և փաստացի տեղափոխվում են Հայաստան այդտեղ հաստատվելու նպատակով՝ նպաստելով նոր տեսլականների և բիզնեսների ձևավորմանը:

> *Համացանցի լայն օգտագործումն ու ՏՀՏ ոլորտի համար բարենպաստ պետական քաղաքականությունն օժանդակում են ստեղծում ստեղծարար ճյուղի զարգացմանը:*

Հայաստանում համացանցի և հաղորդակցության այլ տեխնոլոգիաների օգտագործման մակարդակը բարձր է՝ առցանց բովանդակության նկատմամբ քիչ սահմանափակումներ սահմանող իրավական դաշտով: Թվայնացման և տեղեկատվական տեխնոլոգիաների խթանումը և զարգացումը ներառված է կառավարության օրակարգում:

> *Միջազգային զբոսաշրջության տեմպերը կայուն կերպով աճում են, և մեծապես կարևորվել է մշակութային ժառանգության ու ժամանակակից մշակույթի և ստեղծարարության ռազմավարական նշանակությունը:*

2008 թվականին զբոսաշրջության ազգային ռազմավարության ընդունումից ի վեր արձանագրվել է զբոսաշրջիկների թվի, ինչպես նաև հյուրընկալման կարողությունների ավելացում: Ամբողջ աշխարհով մեկ մոտավորապես 8 միլիոնանոց Սփյուռք ունենալը բարձր ներուժ է ապահովում զբոսաշրջության ոլորտի համար: Ներկայումս առկա այն գիտակցումը, որ բնության և մշակութային ժառանգության հետ մեկտեղ պետք է ուշադրություն դարձվի նաև ժամանակակից քաղաքային մշակույթին՝ բազմազանեվցած և գրավիչ զբոսաշրջային առաջարկ ձևավորելու համար: Երևանը, որպես քաղաքային զբոսաշրջության վայր, պետք է գովազդվի իր ճարտարապետության, կատարողական արվեստի և կերպարվեստի, երաժշտության, գրականության, արհեստների, խոհանոցի, ինչպես նաև միջոցառումների և փառատոների միջոցով:

Մարտահրավերները

> *Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին աղբյուրներից, ՄՍՁ-ների զարգացումը հիմնականում իրագործվում է միջազգային դոնորների ու Սփյուռքի ներդրումների օգնությամբ:*

Երկրի տնտեսական շրջանառության զգալի մասն առաջանում է Սփյուռքի կողմից կատարվող դրամական փոխանցումներից և (կամ) ներդրումներից կամ զարգացման և մրցունակության ծրագրերի շրջանակներում միջազգային դոնորների կողմից տրամադրվող աջակցությունից: Իրավիճակը նույնն է նաև ՄՍՁ-ների համար՝ հատկապես անկախ և մասնավոր ծրագրերի և ձեռնարկությունների պարագայում, որոնք մեծապես կախված են միջազգային կազմակերպություններից և հիմնադրամներից: Հովանավորության համար բարենպաստ իրավական դաշտի պակասը վտանգի տակ է դնում վերջին ժամանակներում արձանագրված բազմաթիվ դրական զարգացումների կայունությունն ու կենսունակությունը:

> *Գիտնականների, գիտահետազոտական ու փորձարարական կենտրոնների ու տնտեսության ճյուղերի միջև համագործակցության պակասը խոչընդոտում է նորարարությանն ու գործարարության զարգացմանը:*

Չնայած նրան, որ Հայաստանը նախկինում հանդես էր գալիս որպես գիտության և հետազոտությունների համար խոշոր հանգույց լինելու դիրքերից, ներկայումս գիտահետազոտական և փորձարարական գործունեության արդյունքները հազվադեպ են վերածվում բիզնես մոդելների: Գիտակրթական ոլորտի և արդյունաբերության միջև չկան կապեր և փոխգործակցության մեխանիզմներ: Ավելին, ՏՀՏ ոլորտը բավարար կերպով կապակցված չէ ՄՍՁ-ների հետ:

> *Թերի զբոսաշրջային ենթակառուցվածքը և հյուրընկալության հմտությունները խոչընդոտ են դառնում զբոսաշրջության զարգացման համար:*

Հայաստանում չկա այնպիսի ենթակառուցվածք, որն անհրաժեշտ է զբոսաշրջության օբյեկտների պատշաճ պահպանում, ինչպես նաև համապատասխան ծառայություններ և եկամտի աղբյուրներ ապահովելու համար: Դեպի գյուղեր և (կամ) մարզեր ու դրանց միջև շարժունակությունը խրթին է և չկա պատշաճ ճանապարհային ցանց: Բացի դրանից, ապահովված չէ տեղեկատվական կենտրոնների և հյուրընկալության հմտությունների սփռվածությունն ամբողջ երկրով՝ հատկապես մարզերում:

> *Հարևանների հետ երկարատև հակամարտությունների պատճառով բարդացած տարածաշրջանային ու միջսահմանային շարժունակությունը խոչընդոտում է ՄՍՁ և զբոսաշրջության ոլորտում պոտենցիալ փոխգործակցություններին (սիներգիաներին):*

Հարևան Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ տևական հակամարտությունը և Թուրքիայի հետ փակ սահմանները նվազեցնում են ներքին շարժունակության հնարավորությունները, անկայուն միջավայր են ստեղծում տարածաշրջան այցելելու համար և խոչընդոտ են հանդիսանում զբոսաշրջության և մշակութային ժառանգության երթուղիների մասով հնարավոր համագործակցության համար:

4.2 ՄՍՃ-ների համընդգրկուն բնույթի կարևորումը

ՄՍՃ-ները տարատեսակ և համընդգրկուն բնույթ ունեն, որն իր ազդեցությունն ունի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս ներուժը դեռևս բավարար չափով չի գիտակցվում Արևելյան գործընկերության երկրների բոլոր մակարդակներում՝ սկսած քաղաքականություն մշակողներից և իշխանություններից՝ վերջացրած լայն հասարակությամբ, այդ թվում նաև՝ հենց ոլորտի մասնագետներով: Այս առաջնային (proto) ոլորտը դժվարությամբ է ընկալվում որպես տնտեսության անբաժանելի մաս՝ մասամբ ընդհանուր աճի և կյանքի որակի հարցում դրա ունեցած դերի ու նշանակության վերաբերյալ գոյություն ունեցող աղքատիկ տեղեկությունների պատճառով: Շատերի համար մշակույթը և տնտեսությունը երկու առանձին ոլորտներ են՝ առանց որևէ փոխազդեցության: Մշակույթը շատերի կողմից դեռևս շքեղություն է համարվում, ինչը նախկին Խորհրդային միությունում եղած ավանդույթի ուժով մնացած մոտեցում է: Այն ընկալվում է որպես ցածր արդյունավետությամբ և ռեսուրսներ պահանջող ոլորտ:

Դժվար է նաև ամբողջությամբ ընկալել ՄՍՃ-ների գաղափարը, քանի որ ոլորտը բաց է և բազմազան, այն ներառում է մի քանի տարբեր ուղղություններ, գործունեության տեսակներ և մասնագիտություններ, որոնք իրենց հերթին կարող են փոխազդել և հավելյալ արժեք ստեղծել շատ այլ տարբեր ոլորտների և բնագավառների համար: Այս հասկացությունը կարող է տարբեր լինել նույնիսկ տարբեր տարածաշրջանների, մշակույթների կամ քաղաքականության ոլորտների համատեքստում: Այդ պատճառով դժվար է ներկայացնել և ընկալել տվյալ ոլորտի բնույթը:

Մշակույթի բնագավառի շատ մասնագետներ այս ոլորտում դժվարությամբ են իրենց տեսնում ՄՍՃ-ների հետ կապված օրակարգում: Յուրաքանչյուր բնագավառ առանձնանում է իր ուրույն պատմությամբ և ուղիներով: Հետևաբար, առավել հաճախ բոլորն ընդունում ու շեշտադրում են դրանց տարբերությունները, այլ ոչ թե ընդհանրությունները: Քչերն են գիտակցում ՄՍՃ-ների համասփյուռ գաղափարի շուրջ միավորվելու առավելությունները, որոնք կարող են ոչ միայն նպաստել ոլորտում համաձայնեցված գործողություններին և փոխգործակցությանը, այլ նաև հնարավորություն տալ հանդես գալու միասնական դիրքերից և ձեռք բերել առավել ծանրակշիռ դեր: Մշակութային և ստեղծարար ճյուղերի շատ մասնագետներ այս փոփոխությունն ընկալում են որպես մշակութային ոլորտի առևտրայնացման միտում, որի հիմնական թիրախը նյութական արդյունքները կամ շահութաբերությունն են լինելու: Նրանց կողմից դա դիտվում է որպես խնդրահարույց փոփոխություն, քանի որ մտավախություն ունեն, որ մշակույթը կարող է գործիք դառնալ: Ըստ պրոֆեսոր Պիեռ Լուիջի Սակկոի[15] այս ընկալումն արտացոլում է մինչարդյունաբերական մշակույթի 1.0 տրամաբանությունը, որի համաձայն մշակութային արտադրանք ստեղծողների վարձատրությունն իրականացվում է ոչ թե շուկայական գործարքի, այլ ստեղծագործողի կամ մշակութային արտադրանք ստեղծողի և թե՛ որպես անհատ, թե՛ հանձինս պետության հանդես եկող հովանավորի միջև նվերների սիմվոլիկ փոխանակման

---

[15] *«Մշակույթ 3.0. Նոր տեսանկյուն ԵՄ Կառուցվածքային հիմնադրամների 2014-2020 թթ. ծրագրային պլանավորման համար», 2011 թվականի ապրիլ, Մշակույթի ոլորտի փորձագետների եվրոպական ցանց, Բրյուսել:*

ձևաչափով: Այս համատեքստում մշակութային արժեքների ստեղծումը և հասանելիությունը սահմանափակ բնույթ է կրում և կաշկանդված է սոցիալ-տնտեսական խոչընդոտներով:

Մշակույթ 3.0 գաղափարը՝ ըստ Պիեռ Լուիջի Սակկոի (2011 թ.)[16]

Մշակույթ 1.0	Մշակույթ 2.0	Մշակույթ 3.0
• Մեծապես հիմնված է հովանավորչության մոդելի վրա • Բնորոշ է մինչարդյունաբերական տնտեսության համար • Մշակույթը ո՛չ տնտեսության համապատասխան ճյուղ է, ո՛չ էլ հասանելի է հնարավոր թիրախ լսարանների մեծամասնությանը • Մշակութային արտադրանքը պահպանվում է բացառապես սուբսիդիաների հաշվին և այլ կերպ չի կարող գոյատևել	• Առկա են մշակութային և ստեղծարար ճյուղեր, որոնք ստեղծում են տնտեսական արժեք և նույնիսկ շահութաբեր են, սակայն ամբողջ տնտեսության միայն որոշակի ոլորտ են ներկայացնում • Թիրախ լսարանների կազմը զգալիորեն ընդլայնվում է, սակայն մշակութային արտադրանքի նկատմամբ խիստ սահմանափակումներ են կիրառվում շուկա մուտք գործելու արգելքների տեսքով • Բնորոշվում է մշակութային շուկաների ծավալների բուռն աճով	• Բնորոշվում է նորարարություններով, որոնք ոչ միայն ընդլայնում են պահանջարկի հնարավորությունները, այլ նաև ու հիմնականում արտադրության հնարավորությունները • Թիրախ լսարանների վերափոխում գործող մասնագետների (ինչի արդյունքում ձևավորվում է հեղինակության և մտավոր սեփականության նոր, աղոտ և գնալով առավել բազմակողմանի դարձող հասկացություն)

Տեխնոլոգիական և տնտեսական զարգացումն աստիճանաբար ձևափոխության է ենթարկել ոլորտի հիմքերը: Ինչպես շատ այլ երկրներում, Արևելյան գործընկերության երկրներում նույնպես արձանագրվել է «ստեղծարար» համարվող աշխատատեղերի աճ և նախկինում «առօրեական» կամ «մեխանիկական» համարվող աշխատանքներում ստեղծարար բաղադրիչների ավելացում: Այս փոփոխությունը զգալի ազդեցություն է ունեցել կրթական համակարգերի, հասարակության բարեկեցության, ինչպես նաև քաղաքականություն մշակողների՝ մարդկային կապիտալի զարգացման և պահպանման ուղիներ կերտելու վրա: Արևելյան գործընկերության երկրների մեծ մասում բարձր տեխնոլոգիաների արտապատվիրման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հաջողությունն ավելի տեսանելի և չափելի է դարձել, և հետևաբար ավելի մեծ ազդեցություն է ունեցել քաղաքականություն մշակողների և

[16] Պիեռ Լուիջի Սակկո, 2011 թ.: *«Մշակույթ 3.0՝ Նոր տեսանկյուն ԵՄ Կառուցվածքային հիմնադրամների 2014-2020 թթ. պլանավորման համար:» Մշակույթի ոլորտի փորձագետների եվրոպական ցանցի փաստաթուղթ, 2011 թվականի ապրիլ: http://www.interarts.net/descargas/interarts2577.pdf*

ներդրողների վրա: Ցավոք, ՄՍՁ-ները հիմնականում այս տեխնոլոգիական բուռն զարգացման ստվերում են մնացել:

Այս անցումային շրջանում մշակույթի ոլորտին անհրաժեշտ են նոր, դինամիկ կազմակերպական կամ բիզնես մոդելներ, նույնիսկ եթե վերջնանպատակը կամ խնդիրը շահույթը չէ: Պիեռ Լուիջի Սակկոն նկատում է, որ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել բարեկեցության, կայունության, նորարարության, ազգային ինքնության և հասարակության համախմբվածության հարցում մշակույթի ոլորտի կողմից ապահովվող ոչ նյութական արդյունքներին: Այնուամենայնիվ, մշակույթի ավանդական ոլորտը հաճախ դիմադրում է տրամաբանության այդպիսի փոփոխությանը: Նույնիսկ այս ոլորտում գործող բազում ձեռնարկատերերի և ընկերությունների դեպքում, որոնց համար շահույթ ստանալը համընդհանուր բնույթ է կրում և իրենց նպատակներից մեկն է հանդիսանում, օրինակ՝ երաժշտության, տեսալսողական, ԶԼՄ-ների, ՏՀՏ-ի, դիզայնի և ճարտարապետության բնագավառներում, ՄՍՁ-ների գաղափարը դեռևս այնքան «անսովոր» է մնում, որ նրանք այն իրենցը չեն համարում և չեն տեսնում դրան պատկանելու առավելությունները:

Ոլորտի տարբեր ճյուղերը հիմնականում անջատ-անջատ են աշխատում՝ միմյանց հետ մրցակցելու և ոչ այդքան համագործակցային եղանակով: Կոլեկտիվ կազմակերպական գործունեությունը (այսինքն ոչ պաշտոնական միավորումները և հարթակները, հավաքական կազմակերպությունները և այլ ոլորտային ասոցիացիաները) դեռևս սկզբնական փուլում է կամ թույլ է, իսկ մասնագետները չեն գործում համակարգված գործողությունների և ընդհանուր օրակարգերի համաձայն: Ոլորտում պակասում է «միասնական ձայնը», որի շնորհիվ կբարձրաձայնվեր այդ ոլորտի դերը և առաջ կմղվեին դրա շահերը: Նախկինում հեղինակություն վայելող և հզոր՝ խորհրդային շրջանի արհեստակցական միությունները, որոնք հանդես էին գալիս տարբեր գեղարվեստական և մշակութային ուղղությունների և մասնագիտությունների անունից, դեռևս գործում են, սակայն դրանց մեծամասնությունը կարծես թե չի համապատասխանում ոլորտի ժամանակակից պահանջներին և չի արձագանքում առկա խնդիրներին, չնայած որ մի քանիսը վերակազմակերպվել են՝ նոր սերունդների համար գրավիչ լինելու նպատակով: Ներկայիս շուկայական տնտեսությունն իր հետ նոր արժեքներ և դինամիկա է բերում, և առանձնացած ու սահմանափակ մտածելակերպն այդ կառույցների մեծամասնությանը թույլ չի տալիս բաց լինել և պարփակել դրանք: Մշակույթի ինստիտուցիոնալ հատվածն իր կարգավիճակը և առավելությունները կորցնելու մտավախություն ունի, իսկ ցիրուցան եղած անկախ մշակութային և ստեղծարար ճյուղն արագ անցում է կատարել դեպի շուկայական տնտեսություն՝ առանց ավելի ուժեղ և համախմբված կառույցներ ձևավորելու: Հետևաբար դրանցից ոչ մեկը չի գիտակցել ՄՍՁ-ների՝ որպես միավորող գաղափարի դերը և ամբողջական ներուժը: Ոլորտում դեռևս ավելի շատ հիմնական ուղղվածությունն անհատապես ու մրցակցելու եղանակով նախագծերի իրականացման՝ «ես» գաղափարն է, այլ ոչ թե առավել համագործակցային եղանակով աշխատելու «մենք» աշխատելակերպը:

ՄՍՁ-ների համընդգրկուն և միջոլորտային ներուժը՝ հատկապես տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման առումով շատերի համար դեռևս ակնհայտ չէ: Չկան փաստարկները հիմնավորող և շահագրգիռ կողմերի համար համոզիչ տվյալներ: Անհրաժեշտ են նոր մեթոդներ թե՛ քանակական, և թե՛ որակական

տվյալների ամբողջական համախմբեր հավաքագրելու և գնահատելու համար, որպեսզի հնարավոր լինի նոր պատկերացումներ ձևավորել ոլորտի հնարավոր՝ թվերից դեպի շատ ավելի հեռուն գնացող ազդեցության վերաբերյալ: Ներկայիս նոր տնտեսական դաշտին նոր ցուցանիշներ են անհրաժեշտ: Այլ ոլորտների համար հավելյալ արժեք ստեղծող՝ ՄՍՁ-ների բազմակողմանի բնույթը, դրա անուղղակի և անտեսանելի ազդեցությունները միջոլորտային և միջճյուղային վերլուծության անհրաժեշտություն են առաջացնում, ինչը կարող է նոր լույսի ներքո ներկայացնել այս երևույթը: Արևելյան գործընկերության երկրների մեծ մասում ընթացքի մեջ է «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշների (CDIS) մշակումը: Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Ուկրաինան այդ ցուցանիշները մշակել են ԵՄ-Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի, ինչպես նաև Մոլդովայի աջակցությամբ [17] : Այս ձևաչափը գերազանց պրակտիկա է, որը երկրներին հնարավորություն է տալիս մշակել հիմնական ցուցանիշները՝ մշակույթի տեղը տնտեսության և հասարակության մեջ նախանշելու համար, և հիմք է ապահովում ազգային և միջազգային մակարդակներում քննարկումների և քաղաքականության մշակման համար:

ՄՍՁ-ների համընդգրկուն բնույթն ընկալելու դժվարությունը կայանում է նրանում, որ այն ենթադրում է ազգային կառավարությունների, մարզային կամ քաղաքային խորհուրդների և հաստատությունների կազմակերպման և գործունեության եղանակի արմատական փոփոխություն: Առանց միասնական կամ համակարգված գործողություններ կամ բյուջեներ ունենալու քաղաքականության ոլորտների խիստ բաժանումն ամենաարդյունավետ եղանակը չէ մշակութային և ստեղծարար ճյուղերում հաջողված քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: Թվային տեխնոլոգիաների ներկայիս հասանելիությունը և օգտագործումը շատ աղոտ է դարձրել արտադրանք ստեղծողների և օգտատերերի միջև տարանջատումը: Ներկայումս արտադրությունը ներառում է նաև օգտագործողների կողմից ներդրվող որոշակի ելակետային ռեսուրսներ, ուստի նույնքան անհրաժեշտ է սխեմաներ և հաղորդակցման մեխանիզմներ մշակել, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան ակտիվորեն մասնակցել քաղաքականության մշակման գործընթացին:

Այսպիսով, տնտեսության վրա ներազդելու՝ ոլորտի հնարավորությունները գիտակցելու համար անհրաժեշտ է հետազոտությունների իրականացման ու նորարարությունների մասով դիրքորոշումների ու գործելակերպի փոփոխություն: Նորարարությունը ներկայումս ընկալվում է որպես բացառապես տեխնոլոգիապես պայմանավորված և արտադրության համատեքստում գոյություն ունեցող երևույթ, ուստի կարիք կա դիտարկելու ոչ տեխնոլոգիական նորարարության ներուժը: Գեղարվեստական և մշակութային գործընթացները նույնպես խարսխվում են հետազոտությունների վրա՝ ստեղծելով հատուկ գիտելիքներ, ինչի համար երկարաժամկետ ներդրումներ են պահանջվում: Ոլորտը մեծ ներուժ ունի ոչ միայն օգտագործողներ և (կամ) թիրախ լսարաններ ներգրավելու և նրանց համար

[17] Բացի այդ, Մոլդովայում վերջերս իրականացրած հետազոտությունը նույնպես նպաստել է ՄՍՁ-ների տնտեսական ազդեցության գնահատմանը՝ հաստատելով դրա ներուժը: «Աջակցություն Մոլդովայի մրցակցության առաջատարներին՝ երկու հավելյալ ոլորտների ընտրություն», ԱՄՆ ՄԶԳ Մոլդովա, 2016 թ.:

ինքնարտահայտվելու հնարավորություն ապահովելու, կազմակերպական կառուցվածքներ փոփոխելու, այլ նաև գիտելիքը կառավարելու և դրանից նոր արժեք ստանալու իր կարողությամբ: Հետազոտությունները և տեխնոլոգիաները կարող են ի հայտ բերել նոր գաղափարներ և արտադրանք, սակայն մշակութային գործընթացները կարող են փորձարկել, ստուգել և հանրայնացնել նոր տեխնոլոգիաները:

ՄՍՃ-ների ներուժի արդյունավետ օգտագործմանն ուղղված կոնկրետ քաղաքականության իրագործումը դեռևս վաղ փուլում է գտնվում: Զբոսաշրջության ոլորտում արդեն իսկ առկա է մշակույթի առանձնակի դերի գիտակցումը, սակայն շատ ավելի նախապատվելի է մնում մշակույթի և տնտեսության նախարարությունների միջև համաձայնեցված գործունեությունը, քան ՄՍՃ-ների առավել լայն հեռանկարային հնարավորությունների դիտարկումը: ՄՍՃ-ների քաղաքականության հեղինակը հաճախ մեկ շահագրգիռ կողմ է լինում՝ հիմնականում մշակույթի նախարարությունը, սակայն այստեղ անհրաժեշտ են քաղաքականության առավել շատ ոլորտներ ընդգրկող՝ համատեղ մշակվող և իրականացվող ծրագրեր և գործիքներ: ՄՍՃ-ներին ուղղված քաղաքականություն, ծրագրեր և գործիքներ մշակելիս պետք է հարցն ավելի լայն տեսանկյունից դիտարկել, բացի դրանից, պետք է ներգրավել և թիրախավորել ավելի շատ շահագրգիռ կողմեր:

Արևելյան գործընկերության շատ երկրներում գոյություն ունեն միջգերատեսչական աշխատանքային խմբեր, որոնք քննարկում և առանձնացում են ՄՍՃ-ների ունեցած դերն ու նշանակությունը: Ավելի արդյունավետ լինելու և համապատասխան ռեսուրսներ ներգրավելու համար տարբեր ռազմավարական ոլորտներ և համապատասխան ֆինանսական ռեսուրսներ կարող են համախմբվել՝ ՄՍՃ-ների համար միասնական ազգային այնպիսի ռազմավարություն ներկայացնելու համար, որը կտարածվի տնտեսության, ձեռնարկատիրության, հետազոտությունների, տեխնոլոգիաների և նորարարության, կրթության, մարզերի և քաղաքների զարգացման վրա: Կարող է օգտակար լինել ՄՍՃ-ները համակարգելու և զարգացնելու համար հատուկ և անկախ միջգերատեսչական հանձնախմբերի ստեղծումը, որոնք ներառում են նաև մասնավոր հատվածը, գործարար համայնքը և մասնագետների (մշակութային հաստատություններ, հասարակական կազմակերպություններ և ձեռնարկատերեր): Այս հանձնախմբերը կարող են փոխազդեցություն և փոխգործակցություն ապահովել: Դրանք նաև կարող են ներկայացնել ոլորտը քաղաքականություն մշակելու գործընթացում, աջակցել հետազոտություններին և իրականացնել քաղաքականության դիտանցում և գնահատում:

4.2.1 Միջազգային օրինակներ

ՄՍՃ-ների գերազանցության կենտրոնը Գերմանիայում

> ***Մշակութային և ստեղծարար ճյուղերի գերազանցության կենտրոնն*** [18] *ստեղծվել է 2007 թվականին՝ Գերմանիայի խորհրդարանի որոշմամբ և միջգերատեսչական, այսինքն՝ Տնտեսական հարցերի և էներգետիկայի*

[18] http://kreativ-bund.de

դաշնային նախարարության և Դաշնային կառավարության՝ Մշակույթի ու մեդիայի հարցերով հանձնակատարի նախաձեռնությամբ: Այն իր գործունեությունն իրականացնում է որպես Բեռլինում գործող միջնորդող, շահերը պաշտպանող և կապեր հաստատող գործակալություն, որը տեղեկություններ և աջակցություն է տրամադրում ու վստահություն ձևավորում քաղաքականություն մշակողների և վերարտադրող տնտեսության օբյեկտների, ՄՄՁ-ների, գիտակրթական և այլ ոլորտների միջև: Այն ապահովում է այնպիսի ծառայությունների և փորձագիտական խորհրդատվության լայն շրջանակ, որոնց հիմնական ուղղություններն են ՄՄՁ-ների մասնագիտացումը և կարողությունների զարգացումը (հատկապես՝ ձեռնարկատիրական կարողությունները խթանելը), ՄՄՁ-ների և այլ ոլորտների միջև համագործակցությունը, համապատասխան միտումների և զարգացումների ուսումնասիրությունը և ՄՄՁ մասնագետներին հաղորդակցման չեզոք հարթակ տրամադրելը:

Ավելի շատ օրինակների համար տե՛ս Ստեղծարար ճյուղերի հարցերով խորհուրդը[19] (ՄԹ) և Բրայնփորթ Էյնդհովենը[20] (Նիդեռլանդներ)

4.2.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Մշակութային քաղաքականությամբ մեծապես խրախուսվում են պետական-մասնավոր կառավարման մոդելները և դեպի մշակութային արտադրանք ու հաստատություններ շուկայական կողմնորոշումը:*

Իշխանությունները գիտակցում են, որ մշակույթի և ժառանգության հարցերում պետության կողմից տրամադրվող աջակցությունից բացի առկա է նաև պետական կարգավորմամբ մասնավոր հատվածի կողմից ներդրումները խթանելու անհրաժեշտություն (Մշակույթի ոլորտի 2014 թվականի ծրագիր): Մշակութային զարգացման 2008-2012 թվականների ռազմավարությունն արդեն իսկ պարունակել է այդ կողմնորոշմանը միտված որոշ թիրախ նպատակներ (թեև չի պարունակել համապատասխան գործողությունների ծրագիր և գնահատում), որոնցից են՝ մշակութային և ստեղծարար գործունեության ազատությունը, մշակութային կազմակերպությունների անկախությունը, կառավարման և ֆինանսների ապակենտրոնացման (մի քանի աղբյուրների առկայություն) նոր մոդելի մշակումը և բյուջեում տարեկան կտրվածքով պարտադիր տողի ներառումը՝ մշակութային և ստեղծարար արտադրանք ձեռք բերելու (գնելու) համար:

> *Մշակութային ժառանգությանն ու զբոսաշրջությանն առնչվող բիզնեսի խթանման մտադրություն (ընդգրկվել է մշակույթի ոլորտի 2014 թվականի ծրագրում):*

Մշակութային ոլորտի խթանումը 2014 թվականի մշակույթի ոլորտի ծրագրում ներառված նպատակներից է՝ հաշվի առնելով կինոարտադրության, լուսանկարչության և հրատարակչության զարգացումը: Մշակութային ժառանգությունը պահպանելու և ազգային ավանդույթները վերարտադրելու նպատակով քաղաքականությունն ուղղված է նաև ՄՄՁ-ներին առնչվող

---

[19] https://www.gov.uk/government/groups/creative-industries-council
[20] http://www.brainport.nl/

ծառայությունները և արտադրանքը խթանելուն, հատկապես՝ գինու և մշակութային զբոսաշրջության այնպիսի ուղղությունների շրջանակներում, ինչպիսիք են հուշանվերների պատրաստումը, ազգային խոհանոցի խթանումը, ազգային տարազների օգտագործումը և կիրառական արվեստի զարգացումը: Քաղաքականության այս նոր կողմնորոշումը կարող է կյանքի կոչվել նոր պիլոտային ծրագրերով, որոնցով նախանշվել են փոքր քաղաքներում և շրջաններում ՄՍՁ-ների քաղաքականությունն ուրվագծելու և մշակելու ուղիները: Հենց դրա օրինակներից է 2015-2017 թվականներին Գորիս և Գյումրի քաղաքներում իրագործված՝ «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) նախկին ծրագիրը (Եվրոպայի խորհուրդ), որի նպատակը մշակույթի օգնությամբ զարգացման մոդելի ստեղծումն էր, ու բացի դրանից նաև ստեղծարար քաղաքների և շրջանների համար նախատեսված՝ ԵՄ-Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի պիլոտային ծրագիրը, որի համար ընտրվեց Սիսիան քաղաքը:

> *«Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշների մշակում՝ ոլորտում արձանագրվող ազդեցությունների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու նպատակով:*

«Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ–ի ցուցանիշների կիրառման գործընթացը թույլ է տալիս հավաքագրել Հայաստանում այս ոլորտի ունեցած փաստացի ազդեցությանն առնչվող ապացույցներ և սահմանել միջազգային համեմատական շրջանակ՝ ոլորտի կատարողականի և ազդեցությունների մշտական մոնիթորինգ իրականացնելու համար: Այս մեխանիզմն առանցքային նշանակություն ունի՝ ոլորտի զարգացման համար քաղաքականություն մշակելու գործընթացում տեղեկատվություն ապահովելու և ապացույցներ ու փաստարկներ բերելու հարցում: Ըստ հրապարակված զեկույցի՝ մշակութային և ստեղծարար ճյուղին բաժին է ընկնում ՀՆԱ–ի առնվազն 3.3 տոկոսը, իսկ մշակութային մասնագիտություններին՝ ընդհանուր զբաղվածության 4.86 տոկոսը:[21]

4.2.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *ՄՍՁ-ները գրեթե արտացոլված և կարևորված չեն պետության՝ արտահանմանը միտված արդյունաբերության ռազմավարության մեջ :*

Պետությունը թանկարժեք քարերի և ոսկերչական իրերի արտադրությունը դիտարկում է որպես մի ոլորտ, որը, ի թիվս ծանր արդյունաբերության այլ ճյուղերի, արդեն իսկ արտահանման ծավալներում զգալի մասնաբաժին ու հետագա լուրջ ներուժ ունի: Կարևորված այլ առանցքային ոլորտներից են նաև զբոսաշրջությունը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, կրթությունը (որպես համընդգրկուն ենթակառուցվածք): Միևնույն ժամանակ, պետության՝ արտահանմանը միտված արդյունաբերության քաղաքականության մեջ ՄՍՁ-ները ո՛չ նախանշված են, ո՛չ էլ ընդգրկված:

> *Ստեղծարար ճյուղերի ու կառավարմանը միտված մշակութային համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի և միջգերատեսչական*

[21] https://www.culturepartnership.eu/en/article/cdis-armenia

ռազմավարության բացակայություն:

Չնայած ինստիտուցիոնալ մակարդակով միջգերատեսչական, այդ թվում՝ մշակույթի, էկոնոմիկայի, սփյուռքի և արտաքին գործերի նախարարությունների միջև խմբային քննարկումների պրակտիկայի առկայությանը, ՄՄՁ-ները դեռևս ճանաչում չեն ստացել և չեն ընդգրկվել կարևոր նշանակություն ունեցող հարցերի ցանկում: Քաղաքականության տարբեր ոլորտների կողմից դեռևս չի գիտակցվել այն գաղափարը, որ ՄՄՁ-ների համընդգրկուն առանձնահատկությունները և ներուժը հսկայական դեր ունեն տնտեսական և սոցիալական զարգացմանը հարցում: Մշակութային ոլորտի պաշտոնական ռազմավարությունը, որն ավելի շատ միտված է կառավարման համակարգին, ինչպես նաև զբոսաշրջությանն առնչվող բիզնեսների խթանմանը, չունի նախանշված նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և ծրագրերը սահմանող գործողությունների ծրագիր:

> *Մշակույթի նախարարությունը շարունակում է կենտրոնացված հովանավորչական դերակատարություն ունենալ մշակույթի քաղաքականության ու կառավարման հարցում:*

Մշակույթի նախարարությունը մշակութային արտադրությունը և այդ արտադրանքի տարածումն ընկալում է որպես ազգային ինքնությունը խթանելու միջոց և ամենամյա աջակցություն է տրամադրում շահույթ չհետապնդող պետական գործող հաստատությունների և որոշ հասարակական կազմակերպությունների ու միջոցառումների համար: Ֆինանսավորում տրամադրվում է նաև մարզային մակարդակով, սակայն մշակույթը դեռևս բավականին կենտրոնացված է, նույնիսկ չնայած մարզերում մշակույթի զարգացումը խթանելու և մշակութային կառույցներ ստեղծելու նպատակով իրականացվող՝ մարզերում մշակույթի զարգացման մասին 2007 թվականի իրավական ակտից բխող ապակենտրոնացման ընթացիկ գործընթացին:

> *Բնակչության լայն շերտերի համար մշակույթի հասանելիության ու դրանում մասնակցության պակաս:*

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի սոցիալ-տնտեսական լայնածավալ վերափոխմամբ պայմանավորված՝ երկրի տարածքում սփռված արվեստի և երաժշտական դպրոցների, թատրոնների, գրադարանների, մշակութային ակումբների շղթային նոր շունչ հաղորդելուն ուղղված ջանքերը դանդաղ ընթացք են ունեցել, մինչդեռ՝ դրան զուգահեռ մշակութային իրադարձությունների և դրանց իրականացման վայրերի, ինչպես նաև՝ գեղարվեստական կրթության (հիմնականում՝ երաժշտական կրթության) հասանելիությունը պակաս մատչելի է դարձել:

> *ՏՀՏ-ի և ստեղծագործ ու գիտական մտավորականության միջև փոխգործակցության պակաս:*

ՏՀՏ ոլորտում առկա ռեսուրսները, առավելապես՝ արագ զարգացող ՏՏ և գովազդի ոլորտները, բավարար չափով կապակցված չեն եղել ՄՄՁ լայն համայնքի հետ: ՏՀՏ ոլորտում պետության ունեցած ներդրումը չի ուղեկցվել համատեղ ուսումնասիրությունները և փոխգործակցությունը խթանելու նպատակով ՄՄՁ-

ներին զուգահեռ տրամադրվող աջակցությամբ: Կառույցների և միջոցառումների մասով առկա ՏՀՏ համայնքի դինամիկան փոխկապակցված չէ և չի փոխգործակցում ստեղծարար համայնքի հետ: Չնայած Հայաստանի մշակութային հաստատություններում վերջերս իրականացված թվայնացմանը և ՏՀՏ կարողությունների զարգացմանը, նորարարական արտադրանքի և ծառայությունների մասով համահունչ զարգացում չարձանագրվեց, և թվայնացման ու արտադրանքի տարածման ծավալի բարձր մակարդակ չապահովվեց:

4.3 Մասնակցային քաղաքականության ու հարթակների ձևավորում

ՄՄՁ-ների էկոհամակարգային մոտեցումն ավելի մեծ փոփոխություն է բերում, ինչը կարևոր նշանակություն ունի Արևելյան գործընկերության երկրների համար: Դա ենթադրում է պետական իշխանությունների և քաղաքացիների միջև գոյություն ունեցող անջրպետի կամրջում: Փոխադարձ վստահության պակասը խոչընդոտում է քաղաքացիական և մասնակցային մշակույթի զարգացմանը: ՄՄՁ-ների բարգավաճման և իրենց բազմակողմանի ներուժի իրացման համար անհրաժեշտ է տարբեր շահագրգիռ կողմերի օժանդակությունն ու փոխգործակցությունն այս հարցում: Ընդհանուր պատասխանատվություն ենթադրող այս կարևոր գործում բոլորն իրենց ուրույն դերն ունեն՝ թե՛ պետական և տարածքային կամ տեղական մարմինները, թե՛ գործարար և մասնավոր հատվածը, և թե՛ քաղաքացիական հասարակությունը:

«Վերևից-ներքև» սկզբունքով իրականացվող միակողմանի պետական քաղաքականությունն ու գործունեությունը բավարար չեն *որպես այդպիսին* նորարարությունն ու ստեղծարարությունը խթանելու համար: Ճիշտ նույն կերպ բավարար չէ նաև ոլորտի ընդհանուր մոտեցումը՝ «թողե՛ք, մենք ինքներս մեր գործը կանենք»: Թեև Արևելյան գործընկերության երկրներում որոշ հաջողված օրինակներ կան, այնուամենայնիվ, մասնակցային մշակույթ ձևավորելու հարցում դեռևս շատ անելիքներ կան, որոնք չպետք է պարզապես հիմնվեն միայն հազվադեպ կազմակերպվող միջոցառումների վրա: Մասնակցային քննարկումները և բաց խորհրդակցությունները կարևոր նշանակություն ունեն, սակայն դրանց արդյունքում պետք է ստեղծվեն կոնկրետ գործողությունների և իրականացման ծրագրեր (նույնիսկ եթե դրանք լիարժեք չեն և (կամ) կախված են քաղաքական հետագա բանակցություններից): Այս մոտեցումը ենթադրում է ոչ միայն քաղաքականության վերաբերյալ քննարկումներ և դրա ձևավորում, այլ նաև դրանցից բխող իրականացման, մոնիթորինգի և գնահատման համատեղ գործընթացներ՝ գերադասելի է արդյունավետ պետական-մասնավոր գործընկերությունների (ՊՄԳ) միջոցով, որոնք շատ երկրներում այս ոլորտում դեռևս լայն տարածում չունեն կամ նույնիսկ չեն կարգավորվում: Այսպիսի մշակույթը սնուցելու համար երկարատև ջանքեր են անհրաժեշտ, քանի որ այն ենթադրում է մտածելակերպի և գործելակերպի փոփոխություն: Այստեղ խոսքն այդ գործընթացների հիմքը դնելու և դրանք կայուն կերպով շարունակելու մասին է, որը շատ ավելի մեծ նշանակություն ունի, քան զուտ արդյունքներ արձանագրելը:

Տարբեր շահագրգիռ կողմերի միջև կապերի հաստատման նոր ուղիներ գտնելու համար նոր հարթակներ և համագործակցության նոր հնարավորություններ են

անհրաժեշտ։ Պաշտոնական կամ ոչ պաշտոնական հարթակները, տվյալների բազաները, վեբ-հարթակները կամ կլաստերները և համատեղ կառույցները կարևոր դերակատարում ունեն փոխադարձ ճանաչման գործընթացը բացահայտելու, միջնորդելու և խրախուսելու, ինչպես նաև համագործակցություն ու նոր կապեր ստեղծելու համար։ Այս հարթակները կարող են ոլորտի հավաքական և օրինական շահերն ու դիրքորոշումը ներկայացնող գործիք լինել՝ իշխանություններին դրանք ներկայացնելու և նրանց հետ երկխոսության մեջ մտնելու համար։ Արևելյան գործընկերության երկրներում նկատելի է ՄՍՁ-ների ոլորտում այդպիսի միջնորդ կազմակերպությունների պակաս, որոնք կարող են «մեկ տանիքի տակ հավաքել» պետական մարմիններին, արվեստագետներին/ստեղծագործողներին և քաղաքացիներին/օգտագործողներին։ Օրինակ՝ կլաստերային նախաձեռնությունները կարող են միավորող հարթակ լինել բոլոր նրանց համար, որոնք հետաքրքրված են կամ կարող են հետաքրքրված լինել այս, այդ թվում՝ կրթության, ուսուցման և գիտահետազոտության ոլորտներով, ինչպես նաև քաղաքային նախագծման և քաղաքաշինության ոլորտի իշխանությունների, օգտագործողների և թիրախ լսարանների համար։

ՄՍՁ-ների ոլորտի համար կարևոր նշանակություն ունեն իրազեկության բարձրացմանն ուղղված գործընթացներն ու կապերի հաստատումը, ջանքերի միավորումը և գործընկերությունների ստեղծումն իրենց իսկ ոլորտի և բիզնես զարգացման համար, ինչպես նաև՝ ավելի հստակ մոտեցում և դիրքորոշում ու առավել լավ քաղաքական ներկայացվածություն ունենալը։ Ստեղծարար հանգույցները նույնպես կարևոր դեր ունեն համայնքային զարգացման գործում։ Սա հատկապես վերաբերում է Արևելյան գործընկերության երկրներին, որտեղ դեռևս մեծ է վստահության պակասը։ Կապեր և կլաստերներ ձևավորող ազգային ֆինանսավորման ծրագրերը, ինչպես նաև ստեղծարար հանգույցները կարող են նպաստել ակտիվ ներգրավվածությանն ու մասնակցային մշակույթի զարգացմանը։

Ազգային, տարածքային և տեղական մակարդակով պլանավորումն ու հանրային քննարկումները պետք է ընդունված պրակտիկա դառնան ՄՍՁ-ների համար՝ ուղղված ռեսուրսների նախատեսմանը և քաղաքականության մշակման նախաձեռնությունների նախանշմանն ու դրանց քննարկմանը։ Կարող են նույնիսկ անցկացվել առցանց խորհրդակցություններ, աշխատաժողովներ և հանրային լսումներ։ Պլանավորումն ու մասնակցային սկզբունքով բյուջեների կազմումը քաղաքացիական մասնակցությունն ակտիվացնելու լավ փորձադաշտ կարող են լինել։ Օրինակ՝ մասնակցային սկզբունքով բյուջեների կազմումը Եվրոպայում, այդ թվում՝ Արևելյան գործընկերության երկրների որոշ քաղաքներում իրականացվում են քաղաքական տարբեր մակարդակներում, և դա այն գործիքն է, որը կարող է նպաստել քաղաքացիական պատասխանատվության ակտիվացմանը, տարածքային մասշտաբով ներգրավվածության մեծացմանը, քաղաքականության մշակման հարցում պատասխանատվության և վստահության մակարդակի բարձրացմանը։

4.3.1 Միջազգային օրինակներ

Նորվեգիայի նորարարական կլաստերներ[22]

> *2000-ականների սկզբին Նորվեգիայի կլաստերային ծրագրի համար որպես հիմք են ընդունվել այն նախադրյալները, որ համագործակցող ձեռնարկություններն առավել նորարարական են, գործում են ավելի արդյունավետ և մրցունակ են: Այս ֆինանսական սխեմայի միջոցով խրախուսվում են «ներքևից վերև» սկզբունքով իրականացվող համատեղ նախաձեռնությունները՝ դրանց համագործակցությունների ու համատեղ գործողությունների համաֆինանսավորմամբ: Տարեկան կտրվածքով անցկացվող բաց մրցույթների արդյունքում մինչև երեք տարվա աջակցություն է տրամադրվում՝ բիզնես ծրագրերի հիման վրա: Կլաստերային ռեսուրսների, աճի ներուժի և արդյունաբերության ոլորտում ունեցած դիրքի հետ կապված հարցերը նույնչափ կարևորվում են, որքան նախաձեռնության մասնակցային լինելու, ղեկավարության կողմից ընդհանուր շահեր ունենալու և կլաստերային նախագծում ընդհանուր ներգրավվածություն ունենալու հանգամանքները: Կլաստերները ֆինանսավորվում են ըստ զարգացման երեք մակարդակների՝ 1) զարգացող, 2) զարգացած՝ ազգային շուկայի առկայությամբ, 3) զարգացած՝ միջազգային շուկայի առկայությամբ:*

Ավելի շատ օրինակների համար տե՛ս. Բյուջեի համատեղ կազմում, Պորտուգալիա[23]*, և Մշակութային քարտեզ, Վալետա*[24]

4.3.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Պետության և ոլորտի մասնագետների միջև երկխոսության համար բաց լինելը:*

Մշակույթի նախարարության և ոլորտի մասնագետների միջև տեղի են ունեցել որոշ հանդիպումներ՝ համապատասխան հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ ստանալու նպատակով, այդպիսով առաջին քայլերը կատարելով այդքան անհրաժեշտ քննարկումների և փոխգործակցության ուղղությամբ: Մշակույթի նախարարության կայքէջը բարելավվել է՝ օգտագործողների համար այն առավել մատչելի դարձնելու համար, իսկ 2016 թվականին ստեղծվել է Մշակույթի նախարարության նոր հանրային խորհուրդը, որը կամուրջ հանդիսացող օղակ է Նախարարության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության համար:

Տեղական օրինակ. «Ուրբանլաբ» (Urbanlab_am) նախաձեռնություն[25]

Հիմնվել է 2011 թվականին երիտասարդ մասնագետների կողմից, որոնք որոշել էին ստանձնել իրենց սոցիալական դերը: Սա քաղաքաշինության ոլորտի ժողովրդավարացման գործընթացներին ուղղված եզակի կառույց է, որը սատարում է առողջ և բարձրորակ միջավայր ունենալու իրավունքը: Նրանց

---

[22] http://www.innovationclusters.no
[23] https://opp.gov.pt
[24] https://www.culturemapmalta.com/
[25] http://www.urbanlab.am/en/

նպատակներից են որոշումներ կայացնելու գործընթացում մասնակցության և Երևանում ու Հայաստանում բնության ու մշակութային արխիտեկտոնիկ ժառանգության պաշտպանությունը: Մի քանի վերականգնողական նախագծերից բացի նրանց ամենատեսանելի արդյունքներից մեկը Երևանի այլընտրանքային ժառանգության քարտեզագրումն է, ինչի վերաբերյալ բազմաթիվ դրական կարծիքներ են ստացվել, և արդյունքում ձևավորվել է էքսկուրսավարների ուղեկցությամբ էքսկուրսիաներ առաջարկող թվային հարթակ:

Տեղական օրինակ. 360stories.com / 360Armenia[26]

«360Stories» նախաձեռնությունը հայաստանյան թիմի կողմից մշակված սոցիալական զբոսաշրջային հարթակ է վիրտուալ պատմությունների համար, որը հնարավորություն է տալիս կիսվել պատմություններով և տեղանքի պատկերներով:

4.3.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Քաղաքականության մշակման գործընթացին դեռևս պակասում է թափանցիկությունն ու համակարգված մասնակցային մոտեցումը:*

Դեռ շարունակում է լուրջ խնդիր մնալ քաղաքականություն մշակողների և ոլորտի մասնագետների միջև առկա անջրպետը, ինչն էլ խոչընդոտում է քաղաքականության մշակման գործընթացում նրանց շահերի և տեսլականների քննարկմանն ու նրանց կարծիքների արտացոլմանն ու ներառմանը: Ոլորտում նկատվում է մշակութային նախագծերի, որոշումներ կայացնելու և ընտրության գործընթացների վերաբերյալ տեղեկատվության պակաս: Քաղաքականություն մշակողները հստակորեն չեն պատկերացում, թե որքան օգտակար կարող են լինել բոլոր շահագրգիռ կողմերի հետ բաց ու համակարգված մասնակցային հարաբերությունները:

> *Բավականին թույլ քաղաքացիական հասարակություն և համատեղ կոլեկտիվ կազմակերպությունների պակաս ՄՄՀ-ներում:*

ՄՄՀ-ներում չկան միասնական «հովանոցային» կազմակերպություններ տեղեկատվության փոխանակման, կապերի հաստատման ու տեղեկատվական-քարոզչական գործունեության համար: Ոլորտի՝ բազմակողմանի լինելու առանձնահատկությունն ու փոքր լինելն էլ ավելի են խորացնում առանձնացվածությունն ու բաժանվածությունը փոքր փակ համայնքների, որոնք հիմնականում կենտրոնացված են Երևանում՝ առանց ղեկավար օղակների և փոխադարձ վստահության: Բացի դրանից, առկա է նաև միջոլորտային և միջգերատեսչական հարաբերությունների պակաս, որոնք կարող էին կապող օղակ լինել ՄՄՀ-ների և տնտեսության այլ ոլորտների ու հասարակության լայն շերտերի միջև:

> *Արհեստակցական միություններն այդքան էլ լավ չեն ադապտացվել շուկայի նոր կանոններին ու մշակութային ոլորտում կառավարման տրամաբանությանը:*

---

[26] http://360stories.com/yerevan/ and http://www.360armenia.com/

Անցյալից ժառանգված արհեստակցական միությունները չեն համապատասխանում երիտասարդ մասնագետների և նոր ստեղծարար ոլորտների ակնկալիքներին և շահերին, ինչպես նաև չեն իրականացնում շահերի պաշտպանության անհրաժեշտ գործունեություն: Որոշ միություններում ներգրավվել են երիտասարդ մասնագետներ, սակայն փոփոխության գործընթացը դանդաղ է ընթանում, ուստի միությունների գործոնով պայմանավորված՝ համակարգի համարժեքության մակարդակը դեռ ցածր է:

4.4 Առաջացած ստեղծարար հանգույցների հետագա զարգացում և ընդլայնում

Բազմաթիվ նոր ՏՏ և ստեղծարար կենտրոններ կամ «ստեղծարար հանգույցներ» են ի հայտ գալիս ԱլԳ երկրներում, ինչպես նաև այլ եվրոպական երկրներում՝ ոլորտի ներկայիս կարիքներին համապատասխան: Այնուամենայնիվ, ԱլԳ որոշ երկրների համար այս երևույթը դեռևս նոր է, և այդպիսի հանգույցները մեծ մասամբ մասնավոր նախաձեռնություններ են, որոնց մասով պետական մարմինների կողմից աջակցություն գրեթե չի ցուցաբերվում: Այդ հանգույցները ծառայում են ստեղծարար և գործարար համայնքների ձեռնարկատիրական դինամիկ ոգու կերտմանն ու դրա ներկայացմանը համաշխարհային միտումներին համապատասխան:

Ստեղծարար հանգույցները տարբեր կառուցվածք և կազմակերպական ձև ունեն: Հիմնականում դրանք զուտ ֆիզիկական տարածք են իրենցից ներկայացնում, սակայն կարող են նաև թվային հարթակ և վիրտուալ ցանց լինել, կարող են ներառել համատեղ օգտագործման աշխատանքային տարածքներ, ինկուբատորներ և «արագարարներ», արտադրական լաբորատորիաներ և քաղաքային լաբորատորիաներ, սակայն այդ ամենից բացի դրանք առաջին հերթին իրենցից նոր համայնք են ներկայացնում: Շատ երկրներում դրանք զբաղեցնում են քաղաքի կենտրոնում գտնվող լքված շենքերը, լքված տարածքները կամ նախկին (ներկայիս) արդյունաբերական օբյեկտները կամ քաղաքամերձ տարածքները: Զբաղեցնելով և աստիճանաբար վերանորոգելով դրանք, այդպիսի հանգույցները նորից նոր շունչ ու կյանք են հաղորդում քաղաքի այդ լքված վայրերին, նպաստում բարեկարգմանն ու քաղաքաշինությանը: Դրանք աշխատելու, հանդիպումների, ուսուցման և շփման համար նախատեսված վայրեր են, որտեղ կիսվում են գիտելիքներով և փոխանցում դրանք: Ստեղծարար հանգույցներն ունեն տարբեր գործառույթներ և առաջարկում են տարատեսակ պրոդուկտներ և ծառայություններ՝ աշխատանքային տարածքներ և գրասենյակներ, վարպետության դասեր և սեմինարներ, վերապատրաստում և ուղղորդում, բիզնես ակումբներ, կապերի հաստատմանն ուղղված միջոցառումներ, ծրագրային ծրագրավորողների ֆորումներ (հաքաթոններ) և այլն: Բացի դրանից, այդ հանգույցները նպաստում են նախագծերի մշակմանն ու բիզնեսի զարգացմանը, ինչպես նաև համայնքների ստեղծմանը:

Այս նոր աշխատանքային տարածքները նպաստում են գիտության բնագավառների և դրանց միջև հիերարխիկ սահմանների վերացմանը: Մինչդեռ ստեղծարար ոլորտի մասնագետները հավաքվում են մշակույթների, գիտության բնագավառների, լեզուների և մասնագիտացումների գծով հանդիպումներ, քննարկումներ անցկացնելու, ստեղծելու և ստեղծագործելու համար, գնալով ավելի

շատ ուշադրություն է դարձվում փորձարարությանն ու մեթոդաբանությանը: Այդ հանգույցներում իրականացվող փոխգործակցությունը միայն իրենց անձի վրա կենտրոնանալու սովոր արվեստագետներին և ստեղծարար ոլորտի մասնագետներին խրախուսում է հաղորդակցվել և համագործակցել ստեղծարար համայնքի հետ և դրանից դուրս: Համախմբվելու այս միտումը կարևոր է՝ մշտապես փոփոխվող մրցակցային միջավայրում գոյատևելու համար: Ընդհանուր միջավայրում տեխնիկական գիտելիքներով (նոու-հաուներով) և ռեսուրսներով կիսվելն օգնում է հաղթահարել հմտությունների մասով բացերը: Ստեղծարար հանգույցներն այս ոլորտի համար նոր միջավայր կամ հաստատություն են հանդիսանում. դրանք փորձարկումների և փոխգործակցության հնարավորություններ ապահովող բազմագործառութային և ճկուն հանգույցներ են: ԱլԳ երկրներում շատ դեպքերում պետական մշակութային հաստատությունները մասնավոր գործիչների համար բարենպաստ պայմաններ չեն ապահովում այդ հաստատությունների տարածքներն օգտագործելու հարցում. օգտագործելու (վարձելու) համար դրանք թանկ են, ու հետևաբար այդ հաստատությունների ներուժն ու տարածքները բավարար չափով չեն օգտագործվում: Այդ տարածաշրջանում մեծաթիվ են թատրոնները, օպերային թատրոնները, թանգարանները, կինոստուդիաները, սակայն դրանցից շատերը պատրաստ չեն այն մարտահրավերներին, որոնք ի հայտ են գալիս նոր հնարավորություններով պայմանավորված:

Հանգույցներից շատերը հիմնականում ՏՀՏ-ներով են զբաղվում կամ դրանցում գերակշռում է ՏՀՏ բաղադրիչը, մինչդեռ ՄՍՁ-ները նույնպես այդ էկոհամակարգերի մասն են կազմում: Ավելի քիչ թվով հանգույցներ կենտրոնանում են արվեստի վրա կամ ներդրումներ կատարում այն նախագծերում, որոնք կարող են լինել ոչ շահութաբեր, բայց կենսունակ. այլ հանգույցներ որպես իրենց գործունեության հիմնական ուղղություն ընտրել են սոցիալական ձեռնարկատիրությունը և աջակցություն են տրամադրում այն նախագծերին կամ բիզնեսներին, որոնք ուղղված են փոխկապակցվածությանը և ներառականությանը. որոշ հանգույցներ էլ լաբորատորիաներ են, որոնք լուծումներ են առաջարկում քաղաքային խնդիրների համար:

ԱլԳ երկրներում ստեղծարար հանգույցներից շատերն ստեղծվել են «ներքևից վերև», մինչդեռ եվրոպական այլ երկրներում՝ «վերևից ներքև» սկզբունքով իրականացվող ինստիտուցիոնալ նախաձեռնությունների արդյունքում: Վերջինիս դեպքում շատ հաճախ երկար ժամանակ էր պահանջվում բոլորովին նոր տարածքները հաճախորդներով ապահովելու համար: Հանգույցներից շատերն էլ մի կողմից ակտիվ զարգացող և մարդաշատ քին, սակայն մյուս կողմից՝ «փխրուն»: Պահպանման ծախսերը մեծ են, և դժվար է միանգամից կայունության հասնելը, մշտական պայքար է մղվում աշխատողներին ու գործունեության առաջարկվող տեսակները պահելու համար, հանգույցների ղեկավարները հաճախ չունեն այս կոնկրետ ոլորտում բիզնեսով զբաղվելու համար անհրաժեշտ բոլոր հմտությունները. զարգացած չեն կապերն այդ հանգույցներից շատերի՝ և նույն քաղաքում կամ երկրում գործող նույնատիպ այլ հանգույցների, տարածաշրջանային այլ շահագրգիռ կողմերի՝ դպրոցների, քաղաքականություն մշակողների, ներդրողների, արտադրողների և միջազգային նմանատիպ նախաձեռնությունների միջև:

Ստեղծարար հանգույցները կարող են զգալիորեն նպաստել ՄՍՁ-ների բիզնեսի զարգացմանը, համայնքների ամրապնդմանը և քաղաքների վերականգնմանը: Ստեղծարար հանգույցները կարող են աշխուժություն բերել քաղաքամերձ բնակավայրերում և քաղաքի ոչ բավարար զարգացած շրջաններում: Չզբաղեցված կամ չօգտագործվող տարածքները և վայրերը ՄՍՁ-ների կողմից զբաղեցվելու համար հնարավորության ապահովումը կարող է շատ լավ ներդրում լինել: Տարածքների անվճար տրամադրման կամ ցածր վարձավճարների և պարզեցված ընթացակարգերի միջոցով կարող է աջակցություն ցուցաբերվել բազմաթիվ նոր նախաձեռնությունների: Սկզբնական տարիների ընթացքում այդ հանգույցներում գործող խմբերին ու նախաձեռնություններին աջակցելը և քաղաքային և (կամ) տարածաշրջանային ու ոլորտային զարգացման ավելի լայնամասշտաբ ծրագրերում դրանք ընդգրկելը կարող է մեծացնել դրանց կառուցվածքային կայունությունը և նպաստել դրանց զարգացմանը: Որպես նոր շահագրգիռ կողմեր, այդ հանգույցները կարող են իրենց հիմքում դնել ու զարգացնել իրենց ձեռքբերումներն ու սոցիալական կապիտալը և հենք դառնալ հնարավոր պետական-մասնավոր գործընկերությունների (ՊՄԳ-ների) համար, որոնք դեռևս իրավական կարգավորում չունեն ԱլԳ որոշ երկրներում:

4.4.1 Միջազգային օրինակներ

IncrediBOL![27] (Իտալիա)

> *«IncrediBOL!»-ը որպես փորձնական նախագիծ ծնունդ է առել է 2010 թվականին Բոլոնիա քաղաքում՝ նպատակ ունենալով գործիքներ տրամադրել ՄՍՁ-ներում ձեռնարկատիրությունը զարգացնելու համար: Այսօր այն ձևավորված կառույց է, ունի տարբեր գործընկերներ և գործում է Էմիլիա Ռոմանիա շրջանում: Այն սկսել է ամեն տարի հրապարակայնորեն հայտարարություն ուղղել ստեղծարար ձեռնարկատերերին՝ առաջարկելով փոքր դրամական ներդրումներ, առանց վարկերի տարածքներ և խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստում և գովազդ: Առաջարկները համապատասխանեցվել են քաղաքի տեղանքներին՝ հնարավորություն ընձեռելով զբաղեցնել փակ կամ դատարկ համայնքային տարածքները: Ստեղծարարությունը՝ քաղաքը վերստին զարգացնելու և դրա տնտեսական վերականգնմանը նպաստելու առանցքային գործոն է: Արդյունքում վերջերս մեկնարկել է նոր «միկրո-վերառորակավորման» ծրագիրը, որը նպատակ ունի արվեստի և ստեղծարար միջամտությունների միջոցով նոր շունչ հաղորդել հանրային տարածքներին:*

Ավելի շատ օրինակների համար տես՝ Սուբտոպիա [28] (Շվեդիա), Տելլիսկիվի ստեղծարար քաղաք [29] (Էստոնիա), Նովա Իսկրա [30] (Սերբիա) և Պոլիգոն [31] (Սլովենիա)

---

[27] http://www.incredibol.net/
[28] http://www.subtopia.se/
[29] http://telliskivi.eu
[30] http://novaiskra.com/

4.4.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Երևանում և մարզերում ի հայտ են գալիս բիզնես զարգացման նոր վայրեր:*

Ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում սկսել են հայտնվել որոշ նոր տարածքներ, որոնք արդիական միջավայր են ապահովում ձեռնարկատերերի համար, որպեսզի վերջիններս աշխատեն և օժանդակություն ստանան իրենց նախագծերի համար: Երևանում ստեղծվել է բիզնես կենտրոն, որին բիզնեսի զարգացման իր ծրագրերով աջակցում է Ամերիկյան համալսարանը՝ նպատակ ունենալով այն դարձնել սմարթ կենտրոն: Զանգվածային արտագաղթը կանխելու և տեղական զարգացմանը նպաստելու համար Դիլիջանում և Տաթևում հիմնվել են բիզնես կենտրոններ, որոնք ծառայում են որպես տեղեկատվական ու օժանդակության համակարգման կենտրոններ: Ավելին, շեշտը դնելով ՄՍՁ-ների վրա՝ Երևանում բացվել է «Իմպաքթ Հաբը» (Impact Hub), որտեղ իրականացվում են բազմաթիվ ստեղծարար նախագծեր, և «ուտոպեանլաբ» (UTOPEANLAB) [32] անվանումով համատեղ գրասենյակային տարածք է բացվել քաղաքի հենց կենտրոնում, թեև ներկա պահին այն նոր տարածք է փնտրում և պատրաստվում է վերաբացվել:

> *Գիտելիքի կենտրոններ դառնալու համար վերանորոգվում ու վերազինվում են գրադարանները:*

Գործող գրադարաններից շատերը պետության նախաձեռնությամբ արդիականացվում և վերազինվում են սարքավորումներով՝ իրենց ռեսուրսներով ու գիտելիքներով կիսվելու համար նախատեսված գլխավոր կենտրոններ դառնալու համար: Այս ենթակառուցվածքը հատկապես կարևոր է փոքր քաղաքներում և մարզերում, որտեղ մշակութային այլ ռեսուրսներ հասանելի չեն և որտեղ դրանք կարող են ծառայել նաև որպես առավել ընդգրկուն մշակութային և սոցիալական մասնակցության համար նախատեսված վայրեր:

Տեղական օրինակ. «Impact Hub», Երևան[33]

Լինելով միջազգային առավել ընդգրկուն ցանցի մի մաս՝ այն ֆինանսավորվում է սփյուռքի կողմից: Այն համատեղ գրասենյակային տարածքներ և գրասենյակներ է տրամադրում բազմաթիվ նորաստեղծ ձեռնարկություններին (սթարթափների), այդ թվում՝ որոշ ստեղծարար խմբերին, օրինակ՝ դիզայներներին, ինչպես նաև մարզերի արհեստագործ կանանց հետ աշխատող ՀԿ-ներին: Այն շեշտը դնում է հատկապես սոցիալական ձեռնարկատիրության զարգացման վրա:

4.4.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Ստեղծագործ մտավորականության համար նոր տարածքների հասանելիության և դրանցից օգտվելու հնարավորության հարցում աջակցության պակաս:*

---

[31] http://www.poligon.si/
[32] utopianlab.am
[33] https://yerevan.impacthub.net/

Թվային դարաշրջանում մասնագետները փոխել են իրենց աշխատանքի և դրա արդյունքները ներկայացնելու ոճը, հետևաբար աշխատավայրերը դարձել են փոխգործակցության դյուրացման, համատեղ աշխատանքի, փորձարարության և համայնքային զարգացման տարածքներ: Քաղաքականություն մշակողները, հատկապես տեղական մակարդակում, չեն գիտակցում աշխատանքային նոր վայրերի անհրաժեշտությունը, և ստեղծարար համայնքի՝ քաղաքային վայրերը վերականգնելու ու դրանք կրկին կյանքի կոչելու ներուժը: Ոլորտում գործունեություն իրականացնողներից շատերը ֆինանսական և վարչական արգելքների պատճառով բազմաթիվ դժվարությունների են բախվում աշխատելու, իրենց աշխատանքը ներկայացնելու և ցուցադրելու վայրերի հասանելիության առումով:

> *Մշակութային հաստատություններին անհրաժեշտ են կառավարման և բիզնեսի նոր մոդելներ, որպեսզի դրանք փորձարարական աշխատանքների ու քարոզչության գլխավոր կենտրոններ դառնան:*

Մշակութային հաստատությունները հիմնականում կառավարման հնացած մոդելներով են աշխատում, քանի որ չունեն ժամանակակից ու գիտական փաստերի վրա հիմնված կառավարման մոդելներ, որոնք ենթադրում են ոչ միայն արդյունավետ պլանավորում ու ծրագրավորում, այդ թվում՝ ֆինանսական միջոցների ներգրավում, այլ նաև թիրախ լսարանի և օգտագործողների, ինչպես նաև ամբողջ ստեղծարար համայնքի հետ նոր հարաբերությունների ձևավորում:

> *Ժամանակակից սարքավորումների պակաս մշակութային հաստատություններում՝ հատկապես դպրոցներում և կինոթատրոններում:*

Աշխատավայրերում ու կրթական հաստատություններում համապատասխան և ժամանակակից նյութերի ու սարքավորումների պակասը՝ առավելապես լուսանկարչության, տպագրության և ֆիլմարտադրության ոլորտներում, թույլ չի տալիս զարգացնել անհրաժեշտ հմտությունները: Այս բացը խոչընդոտում է նոր արտադրանքի ստեղծմանն ու հետագա կրթությանը, ինչի հետևանքով միջազգային շուկաներում հայկական արտադրանքը ոչ հավասար մրցակցության պայմաններում է հայտնվում: Ավելին, նախկինում Հայաստանում կինոթատրոնների երկարատև բացակայությունը (բացառությամբ Երևանում գտնվող մեկ կինոսրահի) բացասական հետևանքներ է ունեցել արտադրության և վարձույթի վրա: Ներկայումս Երևանում որոշ նոր սրահներ կան, իսկ հետագայում ամբողջ երկրում մի քանի կինոսրահներ կբացվեն:

4.5 Նպատակային ֆինանսավորման ու աջակցության մատչելիության դյուրինացում

Բազմաթիվ Եվրոպական երկրներում գիտակցում են, որ ՄՍՃ-ների համար ֆինանսավորում ստանալու դժվարամատչելիությունը լուրջ մարտահրավեր է,

ինչը կապված է դրանց յուրահատուկ բնույթի և ներկայացրած արժեքի հետ[34]: Հիմնական խոչընդոտներն են՝ ստեղծարար կազմակերպությունների մեծ մասի փոքր չափերը, դրանց հիմնականում ոչ նյութական ակտիվները, եկամտի աղբյուրները, աճի համար միայն մտավոր սեփականության իրավունքները հիմք վերցնելը, կառավարման հմտությունների ցածր մակարդակը և գործարար աշխարհի մասին գիտելիքների ու այդ գործարար աշխարհում կապերի պակասը:

Եվրոպայում բիզնեսի զարգացման հանրային ծառայությունները և մասնավոր ներդրողները՝ բանկերից մինչև «բիզնես հրեշտակների», ծանոթ չեն ՄՍՁ-ների գործունեությանն ու բիզնես մոդելներին: ՄՍՁ-ները հնարավորություն չունեն ՓՄՁ-ների ֆինանսավորման որոշակի ծրագրերով և սխեմաներով վարկեր ստանալ, քանի որ երաշխավորագրեր չունեն: Ֆինանսների հասանելիության առումով Արևելյան գործընկերության երկրներում նույնպես ՄՍՁ-ները նման խնդիրների են բախվում: Ֆինանսների դժվար և սահմանափակ հասանելիությունը, թերի ենթակառուցվածքները, անբարենպաստ օրենսդրական դաշտը, բարեգործական մշակույթը զարգացնելու թույլ խթանները և շատ այլ հարցեր ապացուցում են, որ դրանք հուսալի բիզնես գործընկերներ չեն համարվում:

Անկախ մշակույթի (ՀԿ-ների) պետական ֆինանսավորումը պետք է առավել հստակեցվի, և ընտրության գործընթացների թափանցիկության, օժանդակության պարբերականության և կայուն զարգացման առումով դրա համար պետք է առավել լավ մշակված չափորոշիչներ սահմանվեն: Պետության կողմից ՓՄՁ-ներին տրվող օժանդակությունը չի տրամադրվում ՄՍՁ-ների յուրահատուկ բնույթի հաշվառմամբ, ուստի այն լրացուցիչ բազմազանեցման կարիք ունի, հատկապես դրանց միկրո-ուղղվածությունը հարմարեցնելու տեսանկյունից: Ոլորտում գործունեություն իրականացնողների համար սահմանափակ է հասանելիությունը միջազգային համատեղ արտադրություններին ու գործընկերություններին, քանի որ նրանք հաճախ չեն ունենում դրանց համապատասխանող բավարար միջոցներ և պետության կողմից ապահովվող պատշաճ կարգավորիչ դաշտ: Ներկայումս ՄՍՁ-ներին տրվող մասնավոր նվիրատվությունների և դրանք հովանավորելու համար խրախուսող որևէ միջոցներ կամ հարկերից որևէ ազատումներ չեն տրամադրվում: Մտավոր սեփականության իրավունքները (ՄՍԻ) պաշտպանող օրենքները հաճախ անտեսվում են մասնագետների կամ ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմինների շրջանում իրազեկվածության պակասի պատճառով: Առցանց և արտացանց առևտուրն ու արտահանումը սահմանափակող կարգավորումները նույնպես խոչընդոտում են միջազգային մակարդակով բիզնեսին:

Ոլորտում գործունեություն իրականացնող անձանց մեծ մասի՝ ֆինանսական միջոցներ, հատկապես միջազգային դրամաշնորհներ ներգրավելու հմտությունը թույլ է: Երկարաժամկետ պլանավորման պահանջների հետ կապված ծախսերի համար ՄՍՁ-ներին ավելի շատ տեղեկատվություն, կապեր և շփումներ են հարկավոր ճիշտ գործընկերներ գտնելու և նրանց հետ աշխատանքի որոշակի

[34] «Դեպի առավել արդյունավետ ֆինանսական էկոհամակարգեր» թեմայով ԵՄ անդամ պետությունների ՀԲՄ աշխատանքային խմբի զեկույցում նկարագրվել է այս խնդիրը և ներկայացվել լավագույն գործելակերպերի օրինակներ:

փորձ ձեռք բերելու, ինչպես նաև երկարատև պլանավորման համար ռեսուրսներ ներգրավելու նպատակով: Ֆինանսավորման որոշ այլընտրանքային և հետաքրքիր նախաձեռնություններ են մշակվում ձեռնարկատերերի կողմից, որոնցից են օրինակ՝ համաժողովրդական դրամահավաքի (քրաուդֆանդինգ) հարթակները, սակայն անհրաժեշտ են կառուցվածքային բարեփոխումներ պետական համակարգերում և օրենսդրություն՝ հասանելիությունը դյուրացնելու և ոլորտի այլընտրանքային ֆինանսավորումը բազմազանեցնելու համար:

4.5.1 Միջազգային օրինակներ

PMV - Cultuurinvest [35] և STARTS – Մշակութային ձեռնարկությունների ներդրումային ֆոնդ[36] (Բելգիա)

> *Ֆլամանդական կառավարության կողմից աջակցություն են ստանում երկու տարածաշրջանային ֆոնդեր, համապատասխանաբար՝ PMV — Cultuurinvest, և Վալոնի կառավարության կողմից՝ STARTS ֆոնդերը: Երկու սխեմաներով էլ զարգացման տարբեր փուլերում գտնվող կազմակերպություններին հատուկ ուղղվածության վարկեր են տրամադրվում և բաժնետիրական կապիտալում ներդրումներ են կատարվում, բացի դրանից, ուղղորդում և համապատասխան խորհրդատվություն է տրամադրվում ձեռնարկություններին (ՓՄՁ-ներին) ինչպես նաև ՄՄՁ-ներում գործող ոչ առևտրային կազմակերպություններին:*

Ավելի շատ օրինակների համար տե՛ս AWS VINCI Vouchers in Creative Industry[37] (Ավստրիա) և National Lottery[38] (Միացյալ Թագավորություն)

4.5.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *ՄՄՁ-ներում մասնավոր ներդրումների նկատմամբ հետաքրքրվածության աճ՝ մասնավորապես Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և ընկերությունների կողմից:*

Ոլորտն աստիճանաբար ավելի հետաքրքիր է դառնում մասնավոր դոնորների համար: Ներդրումներ կատարող՝ Սփյուռքի և միջազգային կազմակերպություններից (ԱՄՆ ՄԶԳ, ՏՀԶԿ, ՄԱԿ) բացի կան նաև այլ դոնորներ, որոնք ակտիվ ներդրումներ են կատարում այս ոլորտում (ՀԲԸՄ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը և Գաֆեսճյան արվեստի կենտրոնը), և օտարերկրյա կորպորացիաներ (օրինակ՝ «Վիվասել ՄՏՍ» և «Օրանժ»)՝ նպաստելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության զարգացմանը: Այնուամենայնիվ, այս ոլորտում ներդրում կատարելու հարցում հետաքրքրված հայկական ընկերությունների ընդհանուր թիվը դեռևս շատ փոքր է:

> *Գրականությանը և հրատարակչական գործունեությանն ուղղված նպատակային պետական ֆինանսավորումը վերջին ժամանակներում ավելի է կարևորվել:*

---

[35] http://www.pmv.eu/nl/financiering-voor-ondernemers/leningen/cultuurinvest
[36] http://www.start-invest.be
[37] https://www.aws.at/foerderungen-1/vinci-voucher-in-creative-industries/
[38] http://www.lottery.culture.gov.uk/

Գրականությանը և հրատարակչական գործունեությանն ուղղված նպատակային պետական ֆինանսավորումն ուղղվում է՝ գրականությանը, նպաստելով հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, սփյուռքի և ազգային փոքրամասնությունների գրականությանը, երաժշտագիտական գրականությանը, որը հնարավորություն է տալիս ազգային երաժշտական դպրոցները, քոլեջները և կոնսերվատորիաներն ապահովել անհրաժեշտ դասագրքերով և նոտաների գրքերով: Հայերեն տառատեսակների պաշտպանությունը և օտարերկրյա գրականության թարգմանությունը սահմանվել են որպես կառավարության առաջնահերթ խնդիրներ:

4.5.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Արվեստին և մշակույթին ուղղված պետական ֆինանսական աջակցությունն իրականացվում է առանց ՄՄԱ-ների բազմաբնույթ շահագրգիռ կողմերի համար նախատեսված մրցակցային ընթացակարգի:*

Արվեստի ոլորտում պետական ֆինանսավորումը դեռևս կապված է ընդհանուր տնտեսական, հասարակական և մտավոր զարգացման հարցում մշակույթի և ստեղծարարության դերի և նշանակության մասին նեղ պատկերացումներ ունենալու հետ: Նկատելի է տրամադրված ֆինանսավորման և ակնկալվող արդյունքների մոնիթորինգի և գնահատման պակաս: Ֆինանսավորման համակարգում բացակայում է հետևողականությունն ու մրցակցային մոտեցումը, որը կարող էր իրականացվել, մասնավորապես, պետական պատվերներ տեղաբաշխելու, ընտրելու, բաշխելու և մոնիթորինգ իրականացնելու համար լիազորված անկախ մարմնի կողմից (օրինակ՝ Մշակութային բարեգործական հիմնադրամ, Արվեստի խորհուրդ և այլն): Պետական մշակութային հաստատություններից և մի քանի ճանաչված ՀԿ-ներից բացի, նոր ու ստեղծարար այլ ճյուղեր և ձեռնարկատիրական նախագծեր բավարար չափով ուշադրության չեն արժանանում: Մյուս կողմից, արդյունաբերական ոլորտը, հատկապես ՓՄՁ-ները խթանելուն ուղղված պետության գործիքներում չեն դիտարկվում և հաշվի չեն առնվում ՄՄԱ-ների առանձնահատկությունները:

> *Հովանավորության խրախուսման համար բարենպաստ կարգավորիչ դաշտի բացակայություն:*

Չնայած ընկերությունների (հիմնականում օտարերկրյա ընկերությունների) կողմից այդ ոլորտում ներդրումներ կատարելու հետ կապված՝ վերը նշված աճող հետաքրքրությանը, հովանավորությունը շարունակում է ոչ գրավիչ լինել, քանի որ չկան նախատեսված հարկային արտոնություններ և բարենպաստ իրավական դաշտ: Բացի դրանից, մասնավոր ֆինանսավորողները հիմնականում չգիտեն այս ոլորտի ներուժի մասին:

> *Ստեղծարար ձեռնարկությունների համար մասնագիտացված օժանդակության ծառայությունների և ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների պակաս:*

Ստեղծարար ձեռնարկատերերի համար նախատեսված չեն նպատակային ֆինանսավորման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ դրամաշնորհները, հասանելի վարկերը և երաշխիքով փոխառությունները, գործունեությունն սկսելու համար սկզբնական ֆինանսավորումը և այլ հարկային արտոնություններ: Ավելին,

մասնավոր ներդրողները ծանոթ չեն ՄՍՁ-ների հատուկ ուղղվածության, խրախուսման և զարգացման փուլերի հետ, որպեսզի կարողանան գնահատել դրանց արժեքավորությունը և համոզված լինեն այդ ոլորտների նախաձեռնություններին օժանդակելու նպատակահարմարության մեջ:

> *Ստեղծարար ձեռնարկությունները բախվում են հարկային վարչարարության և հաշվապահության բարդ ու ծանրացված ընթացակարգերի հետ:*

Շուկա մուտք գործելու ծանրաբեռնող արգելքները, ինչպես նաև եկամտահարկի բարձր շեմը, հատկապես երբ խոսքը գնում է ծավալների մեծացման մասին, խոչընդոտ են հանդիսանում ստեղծարար ձեռնարկությունների համար՝ դրանց փոքր լինելու պատճառով: Ոլորտի տնտեսական զարգացման համար նախատեսված ընդհանուր իրավական դաշտը վերանայման կարիք ունի, որպեսզի դրանում հաշվի առնվեն նաև ՄՍՁ-ների առանձնահատկությունները:

> *Հեղինակային իրավունքների ոլորտում թերի իրազեկվածություն ու կառավարում:*

«Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» օրենքը (որն ընդունվել է 2006 թվականին) ընդհանուր առմամբ համահունչ է ԵՄ ստանդարտներին, սակայն դեռևս կան հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության այլ իրավունքների որոշ սահմանափակումներ: Մշակութային և ստեղծարար արտադրանքի և ծառայությունների տարածման գործընթացի մոնիթորինգ և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրում չի իրականացվում: Ավելին, մասնագետներն իրազեկված չեն իրենց իրավունքների և պատշաճ կերպով վարձատրվելու եղանակների մասին, կոլեկտիվ կառավարման հարցում բացակայում է հաշվետվողականությունը, իսկ հսկիչ նշանների մասին օրենսդրությունը և մտավոր սեփականության իրավունքների կիրարկման ուղեցույցները չեն հրապարակվում Մտավոր սեփականության պետական գործակալության կողմից:

> *Կինոարտադրության ու տեսալսողական ոլորտը խթանող՝ նպատակային ու արդիական իրավական դաշտի պակաս:*

Չնայած կինոարտադրության մասին նոր օրենքի վերաբերյալ երկարատև քննարկումներին՝ դեռևս ուժի մեջ չի մտել կինոարտադրության և տեսալսողական ոլորտի խթանմանն ուղղված հատուկ իրավական շրջանակը: Ֆիլմարտադրության ենթակառուցվածքը և միջոցները հիմնականում պետական են. անհրաժեշտ է վերանայել ու ընդլայնել Ազգային կինոկենտրոնի գործունեության շրջանակը, բացի դրանից, ընդհանրապես ամբողջ տեսալսողական արժեքային շղթան վերանայման կարիք ունի՝ ֆինանսավորումից և արտադրությունից մինչև վարձույթ: Չնայած վերջին ժամանակներում միջազգայնացմանն ուղղված ջանքերին՝ պետական «ազգային ֆիլմ» հասկացության սահմանման ու նույնականացման հարցում հաստատման գործընթացների բացակայությունը հնարավորություն չի ստեղծում միջազգային համատեղ արտադրության՝ պաշտոնական դառնալու և համապատասխան առավելություններից օգտվելու համար: Ուստի, անհրաժեշտ է վերացնել այս արգելքը և ներդրողներ ներգրավել հարկային արտոնությունների և պատշաճ բիզնես միջավայր ապահովելու միջոցով:

> *Լրատվությանն ու հեռարձակմանը վերաբերող իրավական դաշտը չի նպաստում շուկայում բազմակարծությանը:*

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով (որն ընդունվել է 2000 թվականին և փոփոխվել 2010 թվականին) առաջարկվում է առնվազն 65 տոկոս տեղական արտադրության ապահովում, մինչդեռ հեռուստատեսությունը հիմնականում հեռարձակում է պետական հեռուստաալիքի և սահմանափակ քանակությամբ մի քանի այլ ընկերությունների կողմից ստեղծված արտադրանքը, ինչը, հետևաբար, չի խթանում ներքին արդար մրցակցությունը: Ավելին, վերջերս՝ 2016 թվականին թվային հեռարձակման անցնելու գործընթացում ներգրավվեց պետությանը պատկանող ընկերության հեռարձակման միայն մեկ գործող ցանց, ինչը, բնականաբար, չնպաստեց այլ պրովայդերների մասնակցությանն ու ոլորտի բազմազանեցմանը: Բացի դրանից, որոշ մարզային հեռուստաընկերություններին չի հաջողվել անցում կատարել մինչև սահմանված վերջնաժամկետը: Իսկ ինչ վերաբերում է ռուսական լրատվամիջոցների կողմից հեռարձակվող բովանդակությանը, որը մեծ ծավալներով մատուցվում է հայկական լսարանին, այն սահմանափակ բազմազանություն ունի արտահայտվելու և կարծիքներ ներկայացնելու տեսանկյունից՝ հատկապես քաղաքական նորությունների ու հարաբերությունների մասով:

4.6 Ստեղծարար ձեռնարկատիրական կրթության և հմտությունների կատարելագործում

Նոր ու ժամանակակից տնտեսաձևի առաջացումը նշանակում է, որ կրթական և ուսումնական հաստատությունները՝ դպրոցներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ, պետք է շատ ավելի բաց լինեն և առավել խորը կապեր հաստատեն մարզերի և համայնքների հետ: Կրթական հաստատություններին նոր մոտեցումներ են հարկավոր ակադեմիական և մասնագիտական կրթության այնպիսի ծրագրեր մշակելու և դրանցով սովորեցնելու հարցում, որոնք առավել գործնական են, ճկուն և ձեռնարկատիրական ուղղվածություն ունեն: Ցկյանս ուսումնառության մոտեցումը որդեգրելը կտար դրա հնարավորությունը: Արևելյան գործընկերության երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններից շատերը հեղինակություն են վայելում իրենց տրամադրած կրթության տեխնիկական որակի համար, մասնավորապես՝ կինոարվեստի, կատարողական արվեստների և երաժշտության ոլորտներում: Սակայն տեխնիկական և գեղարվեստական հմտությունները բավարար չեն, որ երիտասարդ մասնագետները զարգանան, նախագծեր մշակեն և ձեռնարկատիրական գործունեություն սկսեն գլոբալ շուկայում: Ավելին, ներկայումս ստեղծարարությունն ու նորարարությունն այլ մասնագիտացումներում նույնպես ճանաչվել են որպես կարևոր հմտություններ: Հետևաբար, կրթության բոլոր մակարդակներում պետք է ներառված լինեն մշակույթն ու ստեղծարարությունը, և վաղ մանկությունից զարգացվեն ստեղծարար հմտությունները, մտածելակերպը և մշակութային ու մասնակցային պրակտիկան: Անհրաժեշտ է խթանել ցկյանս ուսումնառության գաղափարը և բարելավել ուսուցման ստանդարտները բոլոր՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն ուսումնական, ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատությունների համար:

ՄՍՃ-ների վրա իրենց ազդեցությունն են թողել նաև թվային լրատվամիջոցների թվի աճը, գլոբալիզացումը, միջսահմանային և միջմշակութային համագործակցությունը: Սա առաջացնում է բազմաձև և բազմաշերտ շուկաներում աշխատելու հետ կապված ռազմավարական և փոխհարաբերական հմտությունների անհրաժեշտություն: Ստեղծարար ոլորտի մասնագետները պետք է ունենան ռազմավարական, կառավարման և հաղորդակցման հմտություններ: Ռազմավարական հմտությունների միջոցով կատարելագործվում են նախագծերի, բիզնեսների և մասնագիտական գործունեության ընկալման ու կառավարման ձևերը: Այսօրվա մասնագետը պետք է լինի ստեղծագործող, կառավարիչ, հետազոտող, հասարակության հետ կապերի մասնագետ և պոլիգլոտ: Բոլոր ստեղծագործողները պետք է ունենան գործընկերների հետ գաղափարները, նպատակները և ծրագրերը համաձայնեցնելու, առաջ տանելու և քննարկելու հմտություններ: Շարունակական վերապատրաստման անհրաժեշտությունն աճում է այս առավել պահանջկոտ և մրցակցային շուկայում: Մասնագետները պետք է մշտապես իրենց արհեստավարժության բարձունքում լինեն, հակառակ դեպքում նրանք կարող են կորցնել պայմանագրերը, հետ մնալ ժամանակացույցից, վերջնաժամկետներից, կորցնել կապերը և գործընկերներին: Հետևաբար, ժամանակի կառավարումը չափազանց կարևոր է, հատկապես այն դեպքում, երբ համատեղ ուսումնասիրություններ և քննարկումներ են պահանջվում հրատապ արդյունքներ պահանջող նախագծի իրականացման համար: Մասնագետներին անհրաժեշտ ամրապնդել հաղորդակցման իրենց հմտությունները, որպեսզի կարողանան հաղթահարել հիերարխիկ, բազմալեզու և բազմաոլորտ ժամանակավոր թիմերում աշխատելու ընթացքում ժամանակի սղության, վստահության և փոխադարձ ճանաչման պակասի հետ կապված խոչընդոտները:

Արևելյան գործընկերության երկրներում կան այլընտրանքային ուսուցման և վերապատրաստման ծրագրերի և նախաձեռնությունների մի շարք օրինակներ, որոնք լրացնում են բացերը և համապատասխանում այս նոր ի հայտ եկած կարիքներին: Դրանք իրականացվում են ՀԿ-ների և կայացած կրթական ու մշակութային հաստատությունների կողմից: Մարտահրավերն այն է, թե ինչպես ուսուցման այս նոր մեթոդներն ինտեգրել կրթական և վերապատրաստման համակարգերի կողմից պաշտոնապես առաջարկվող հիմնական ծրագրերում և ինչպես ներգրավել տարբեր շահագրգիռ կողմերին զարգացմանն ուղղված այս նախաձեռնությունում ակտիվ դերակատարություն ունենալու համար:

4.6.1 Միջազգային օրինակներ

Էսկալատոր՝ Կոշիցեի ստեղծարար ճյուղ (Escalator - Creative Industry Kosice)[39] (Սլովակիա)

> *Էսկալատորը «Կոշիցեի ստեղծարար ճյուղի» կողմից աջակցվող ինտենսիվ ծրագիր է, որն ուղղված է ստեղծարար ոլորտում գործող աշխատողների, անհատների կամ ձեռնարկությունների (խմբերի) վերապատրաստմանն ու ստեղծագործական ուժի, տաղանդի և մասնագիտական գիտելիքների զարգացմանը: Մասնակիցները նախապես ներկայացնում են իրենց կարիքները*

[39] http://cike.sk/en/project/escalator

և նախանշում են իրենց նպատակներն օտարերկրյա համակարգողների հետ հարցազրույցների միջոցով: Սա աշխատաժողովների, սեմինարների, ուսուցման, համակարգման, բիզնեսի և ռազմավարական պլանավորման, հետազոտությունների և նախագծման, ճանաչողական այցերի ու փորձնական (պիլոտային) իրագործման ոլորտներում նպատակային վերապատրաստման և աջակցության հիմքն է կազմում:

Ավելի շատ օրինակների համար տե՛ս Երիտասարդական ստեղծագործական կենտրոնների «OTELO» տարածաշրջանային ցանցը[40] (Ավստրիա), «Ստեղծարար գործընկերություններ» (Creative Partnerships)[41] (Լիտվա), Արվեստի ոլորտում նորարարությունների թագավորական քոլեջը (Royal College of Art Innovation)[42] (ՄԹ) և Տալլինի տեխնոլոգիաների համալսարանը՝ «Մեկտորի նորարարությունների և բիզնես կենտրոնը» (Էստոնիա)[43]

4.6.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Մշակութային կրթական համակարգի կատարելագործումը պետության առաջնահերթությունների թվում է:*

Մշակույթի վերաբերյալ 2014 թվականի ծրագրում նշվում է, որ ոլորտի համալրումը հմուտ, արհեստավարժ մարդկային ռեսուրսներով, մասնավորապես կառավարման հատվածում, հիմնական թիրախներից է: Ստեղծարար կարողությունների խթանումը բոլոր սոցիալական խմբերում նույնպես նախատեսված է: Միևնույն ժամանակ բարձրագույն ուսումնական հաստատությունների և դպրոցների հետ մշակվող գործողությունների կոնկրետ պլան դեռևս չկա:

> *Մասնավոր հատվածի մի շարք նախաձեռնություններ կրթական համակարգն առավել ստեղծարար են դարձնում:*

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտում առկա են մասնավոր հատվածի մի շարք օրինակելի նախաձեռնություններ, որոնք կարող են որպես նմուշ ծառայել հետագայում պետական ֆորմալ կրթության համակարգում ձևավորման և ներդրման համար: Դրանցից են օրինակ՝ Թումո կենտրոնը և «Dasaran» կրթական ծրագիրը (տե՛ս ստորև), «Այբ» դպրոցն իր «Իմացիր և արարիր» նշանաբանով առաջարկում է ուսումնառության նոր մշակույթ՝ նպատակ ունենալով 21-րդ դարի հայկական դպրոցի մոդելային միջավայր դառնալ, և «ԱԻԿԱ Հայաստան»-ի (Արվեստի քննադատների ազգային ասոցիացիա) կողմից կարողությունների զարգացման ծրագրերը նկարիչների ու համակարգողների համար:

Տեղական օրինակ. «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն»[44]

Շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն ստեղծվել է 2011 թվականին Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից: Այն արտադպրոցական

---

[40] http://www.otelo.or.at/
[41] http://www.kurybinespartnerystes.lt/
[42] https://www.rca.ac.uk/research-innovation/innovationrca/
[43] https://www.ttu.ee/mektory-eng
[44] https://tumo.org/

ուսումնառության միջավայր է, որտեղ 12-18 տարեկան պատանիներն իրենց անհատական ուսուցման ծրագիրն են անցնում հմուտ մանկավարժների և մեդիա մասնագետների ուղղորդման ներքո: Հատուկ մշակված ուսումնական հարթակը պատանիներին նախապատրաստում է գործնական աշխատանքների համար, որտեղ նրանք ազատ են զարգացնելու իրենց գաղափարները չորս հիմնական ուղղություններով՝ անիմացիա, խաղերի ստեղծում, ֆիլմերի ստեղծում և կայքերի մշակում: Մասնագիտացված դասընթացները, դասախոսություններն ու միջոցառումներն ուսանողներին հնարավորություն են տալիս կիրառել իրենց գիտելիքներն ու հմտությունները նաև առօրյա կյանքում: Թումոյի նպատակն է ընդլայնել երիտասարդների մտահորիզոնը և միջոցներ տրամադրել իրենց լիարժեք ստեղծագործական ներուժը բացահայտելու համար: Մասնակցությունն անվճար է և բաց բոլոր տեղացի պատանիների համար, որոնք երկժամյա պարապմունքներին մասնակցում են դպրոցի դասերի ավարտից հետո: Երևանում Թումոյի ուսանողների թիվը հասնում է մոտավորապես 7000-ի. այն բացվել է նաև ուրիշ երեք քաղաքներում՝ տեղի այլ շահագրգիռ կողմերի հետ գործընկերությամբ. Գյումրիում, Դիլիջանում՝ 400 գրանցված օգտվողների, և Ստեփանակերտում՝ 1000 ուսանողի համար նախատեսված հարմարություններով:

Տեղական օրինակ. «DASARAN" Գիտելիքի վրա հիմնված հարթակ և կրթական ծրագիր[45]

Առաջադեմ դպրոցական կառավարման համակարգ է, որն ստեղծվել է 2009 թվականին և միասնական կրթական համայնք ձևավորելու համար մեկ ընդհանուր առցանց հարթակում է համախմբում շուրջ 1495 դպրոց, այդ թվում՝ Արցախից: Այն առցանց ուսումնառության հարթակի տեսակ է, որն ուղղված է ուսումնառության, խաղերի միջոցով կրթության, քաղաքացիական կրթության, մարդու իրավունքների և սոցիալական ներառականության խթանմանը:

4.6.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Ընդհանուր ուսումնական ծրագրերում չեն խթանվում ստեղծարարությունն ու ձեռնարկատիրությունը:*

Ֆորմալ կրթության համակարգում բավարար չափով չեն խրախուսվում վաղ տարիքից ստեղծարարության ու ձեռնարկատիրական կարողությունները: Այս հմտությունները հույժ կարևոր են համընդհանուր հասարակական զարգացման և մշակույթի ոլորտում մասնակցության համար. բացի դրանից, դրանք նաև լավ հենք են հետագա մասնագիտական աճի համար:

> *Գեղարվեստական կրթությունը և ուսուցումը չեն ապահովում կառավարման և հաղորդակցման համապատասխան հմտություններ և չեն արձագանքում շուկայի փոփոխություններին ու կարիքներին:*

Ստեղծարար ոլորտի մասնագետները չունեն բիզնես կողմնորոշում և ռազմավարական ու կառավարման հմտություններ, որոնք նրանց հնարավորություն կտան լավ պատրաստված ու արդյունավետ կերպով նախագծել և իրականացնել իրենց ծրագրերը և նպաստել ընդհանուր սոցիալ-մշակութային

[45] https://www.dasaran.am/

զարգացմանը: Ֆորմալ գեղարվեստական կրթության ոլորտում այս հմտությունների պակասից բացի, չկա նաև ցկյանս ուսումնառության հնարավորություն, ինչը թույլ կտար մշտապես թարմացնել մասնագետների գիտելիքները, մասնավորապես ՏՀՏ-ի ոլորտում, որն անընդհատ զարգանում է, և փոխվում են հմտությունների կարիքներն ու միտումները: Ավելին, այն, ինչ առաջարկվում է կրթական և ուսումնական ծրագրերով, բավարար չափով չի արձագանքում շուկայի պահանջներին: Շուկայում հիմնականում ՏՏ ծրագրավորողների շատ մեծ պահանջ կա, չնայած ճարտարագիտության, ֆիլմարտադրության և թվային արվեստի գծով մասնագիտացումները նույնպես պահանջված են:

4.7 Թիրախ լսարանի ընդլայնում և շուկաների զարգացում

ՄՍՃ-ների ներուժն ու համընդգրկուն բնույթը դեռևս քիչ են հայտնի քաղաքականություն մշակողներին և ԱլԳ երկրների հասարակության զգալի մասին: Շատ ՄՍՃ մասնագետներ ոլորտի շահերը լավագույնս պաշտպանողները չեն: ՄՍՃ-ների մասին գրեթե ոչ մի անդրադարձ չի լինում լրատվամիջոցներում և հրապարակային քննարկումներում՝ բացառությամբ մայրաքաղաքներում կամ մեծ քաղաքներում փոքրաթիվ թիրախ լսարան ունեցող հարթակների: Շրջաններում և գյուղական վայրերում և նույնիսկ մայրաքաղաքների ծայրամասերում դժվար է գտնել ակտիվ ու ժամանակակից մշակութային վայրեր ու հաստատություններ, դրանց տարածվածությունը դեռ թերի է: Երկրի ամբողջ տարածքում գործող մշակույթի տները (ակումբները) ավելի շատ ռեսուրսների և մշտապես թարմացվող մշակութային ու ստեղծագործական բովանդակության կարիք ունեն: Թիրախ լսարան ու մշակութային բովանդակության պահանջարկ ձևավորելը նույնպես հույժ կարևոր է: Դրա համար պետք է ավելացնել տարածման ուղիները: ԱլԳ երկրներում տարբեր շուկաները և տարբեր նորմերն ու լեզուները դժվարացնում են միջազգայնացումն ու միջսահմանային փոխգործակցությունը:

Թվային հեղափոխությունն անորոշ է դարձնում ստեղծագործողի ու սպառողի միջև տարանջատումը, քանի որ բովանդակությունը կարող է թիրախ լսարանին փոխանցվել առանց միջնորդների: Ըստ Պիեռ Լուիջի Սակկոյի՝ մշակութային արտադրությունն ու նոր բովանդակության հասանելիությունը միևնույն գործընթացի երկու փուլեր են: Նրա՝ «Մշակույթ 3.0» մոդելում մասնակցությունը դառնում է արժեք ստեղծող գործոն, քանի որ դրա տնտեսական ու սոցիալական ազդեցությունը կարող է շատ ավելի մեծ լինել, քան շուկայում միջնորդավորված տարածումը: Օգտագործողների ներգրավվածության ու մասնակցության համար նոր տնտեսական ու սոցիալական միջավայրի և շրջանակի անհրաժեշտություն է առաջանում, ինչի համար տարբեր շահագրգիռ կողմերի միջև վստահություն և երկխոսություն է պահանջվում:

Մշակութային հաստատությունների ու ստեղծարար ձեռնարկությունների և մասնագետների մեծ մասը թիրախ լսարանի ներգրավվածության, նրա հետ հաղորդակցության ու շուկայավարման հմտությունների կարիք ունի: Դրամարկղային մուտքերն ու գովազդային միջոցառումները որպես առաջնահերթություն չեն դիտարկվում մի շարք ավանդական ու հեղինակություն վայելող հաստատությունների կողմից, քանի որ դրանց լսարանը մշակութային կյանքով ապրող և հայտնի էլիտային պատկանող մարդիկ են, որոնք հաճախ են

մասնակցում մշակութային իրադարձություններին: Անկախ լինելու համար ռազմավարական և պլանավորման հմտությունների բացակայությունն ու երկարաժամկետ ներդրումների պակասը հանգեցնում են թերի հաղորդակցական ռազմավարությանը: Շատ անկախ ստեղծագործողներ կարծես ինքնագովազդի, բրենդավորման ու շուկայում որոշակի դիրք զբաղեցնելու հարցում դժվարությունների են հանդիպում և հույսը դնում են առևտրի կետերում գովազդների կամ այլ կոմերցիոն նախաձեռնությունների վրա: Արժեքային շղթայի միջնորդների՝ մենեջերների, գործակալների, պրոդյուսերների և հատկապես շուկայի փորձագետների, հասարակայնության հետ կապերի մասնագետների ու տեղեկատվական ոլորտի մասնագետների պակասը զգալի բացասական ազդեցություն է ունենում ոլորտի զարգացման վրա, քանի որ նրանք են այն մասնագետները, որոնք փորձ ունեն բովանդակության ընտրության, թիրախավորման և տարածման, ինչպես նաև օգտագործողների ներգրավվածության ապահովման գործում:

Մեկ այլ մարտահրավեր է արտահայտման ու բովանդակության բազմազանությունն ազգային լրատվությունում: Հեռուստատեսությունը կարող է նշանակալից դեր ունենալ ՄՍՃ-ների խթանման գործում և նպաստել ճանաչման ու իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ դրանով իսկ ավելացնելով պահանջարկը: Այս հզոր գործիքն իր ամբողջ ներուժով չի օգտագործվում: ԱլԳ երկրներում կա քննադատության և մասնագիտացած լրագրողների ու մեդիա փորձագետների կարիք, որոնք կարող են իրազեկել ՄՍՃ-ներում գործող անձանց մասին, լուսաբանել նրանց պատմություններն ու հաջողությունները: Կան որոշ հետաքրքիր մեդիա հարթակներ, որոնք խթանում են քաղաքային մշակույթը, փառատոնները, կենսակերպը, մշակութային զբոսաշրջությունը և այլն:

ԱլԳ երկրները, որոնք օգտվում են իրենց՝ արևելքն ու արևմուտքը կապող աշխարհաքաղաքական դիրքից, հայտնի են կինոյի, երաժշտության ու թատրոնի ոլորտներում փառատոնների բազմազանությամբ ու որակով: Այս փառատոնները տեղեկատվության համակարգման կարևոր կենտրոններ են եղել թիրախ լսարանի, բիզնեսի զարգացման ու զբոսաշրջության գրավչության համար: Դրանցից շատերն ամբողջ տարվա ընթացքում իրականացվող ծրագիր ունեն և, որոշ դեպքերում, մշակվում են այնպիսի նախաձեռնություններ, որոնք, չնայած դժվարություններին, իրականացվում են նաև մայրաքաղաքների սահմաններից դուրս:

4.7.1 Միջազգային օրինակներ

Անվճար հեռուստաալիք (OSTV) - Canal180[46] (Պորտուգալիա)

> *OSTV անվճար հեռուստաալիքն ամբողջությամբ նվիրված է մշակույթին, արվեստին ու ստեղծարարությանը՝ հեռուստատեսությունն ու համացանցը համախմբելով մեկ հարթակի վրա: Այն հեռարձակում է արտիստների ու պրոդյուսերների նոր սերնդի կողմից ստեղծված նորարարական բովանդակությամբ ծրագրեր և գործընկերների հետ համագործակցության նախագծեր է մշակում ամբողջ աշխարհով մեկ:*

[46] http://canal180.pt/en/

Ավելի շատ օրինակների համար տե՛ս «HELMET» գրադարանների քաղաքային ցանցը [47] Հելսինկիում (Ֆինլանդիա), «Kinodvor» կինոթատրոնը [48] Լյուբլյանայում (Սլովենիա), երիտասարդ հանդիսատեսի համար նախատեսված "Opgang» թատրոնը [49] (Դանիա), «Laznia Nowa» թատրոնն ու մշակութային կենտրոնը [50] (Լեհաստան) և Գիտությունների պատկերասրահը [51] (Իռլանդիա)

4.7.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Բազմաբնույթ մասնավոր նախաձեռնություններ՝ ՄՍՁ-ները թիրախ լսարանի առավել լայն շերտերի հետ փոխկապակցելու համար:*

Գոյություն ունեն մի քանի մասնավոր անկախ նախաձեռնություններ արվեստի ու մշակույթի և համապատասխանաբար դրանց լսարանների միջև բացը լրացնելու համար: Կան սրճարաններ, որոնք առաջարկում են արվեստի և մշակութային ծրագրեր, և փոփ-ափ պատկերասրահներ, որոնք օգտագործում են հանրային նշանակության տարածքները թիրախ լսարանի հետ անմիջապես հանդիպելու և նրանց ներգրավելու համար (տե՛ս ստորև): Թանգարանային կրթության կենտրոնը մասնավոր կառույցի մեկ այլ օրինակ է, որը նպաստում է հայկական թանգարաններում կրթական ծրագրերի ներդրմանը: Ավելին, շատ փառատոններում նաև նոր ժանրեր կամ արտահայտման ժամանակակից մոտեցումներ են ներկայացվում, որոնք արտիստների համար նոր հորիզոններ են բացում, ինչպես նաև կազմակերպվում են միջոցառումներ առանձնահատուկ թիրախ լսարանների խմբերի համար, ինչպիսիք են՝ երեխաները և ընտանիքները:

Տեղական օրինակ. Տարատեսակ սրճարաններ, որոնք արվեստի և մշակութային ծրագրեր են առաջարկում Երևանում.

*- Բյուրոկրատ գրախանութ-սրճարանը (**Bureaucrat café and bookstore**) [52] առաջարկում է հատուկ մթնոլորտ, որը խոհանոցը և գինին միավորում է արվեստի և մշակույթի հետ: Այնտեղ կա ցուցասրահ, և կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ:*

*- Միրզոյան գրադարան-սրճարանը (**Mirzoyan cafe-library**) [53] տարածաշրջանի ամենամեծ լուսանկարչական գրադարանն է, որը բոլոր անհրաժեշտ ռեսուրսներն է առաջարկում հանրությանն այս արվեստի մեջ ներգրավվելու համար՝ մեծապես ուղղված լինելով երիտասարդությանը:*

*- «Արտ Բրիջ» գրախանութ-սրճարանը (**Artbridge bookstore café**)[54] նախատեսված է խոհանոցի և արվեստի միջև որպես կամուրջ ծառայելու համար. կազմակերպվում են նաև քննարկումներ, գրքերի շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, երաժշտության*

---

[47] http://www.helmet.fi/
[48] http://www.kinodvor.org/
[49] http://opgang2.dk/
[50] http://www.laznianowa.pl/
[51] https://dublin.sciencegallery.com/education
[52] https://www.facebook.com/CafeBooks/
[53] https://www.facebook.com/mirzoyanphotolibrary/
[54] http://artbridge.am/

երեկոներ:

*- «ՀԱՅՓ փոփ-ափ պատկերասրահ» (**Hayp Pop Up gallery**)[55] ժամանակակից արվեստի շրջիկ պատկերասրահ է, որը հանրային միջավայրում գովազդում է նոր երևան եկող երիտասարդ արվեստագետներին: Նախաձեռնության նպատակը հասանելի տարածքների օգտագործմամբ ու ներգրավման հնարավորությամբ՝ արվեստի և մշակույթի ոլորտի ներկայացուցիչների շրջանակն ընդլայնելու մտադրությունն է: Մշակում է արվեստագետներին արվեստանոցներով ապահովման ծրագիրը, իրականացնում է միջազգային փոխանակման ծրագրեր և հետազոտություններ Երևանում, իսկ ապակենտրոնացում ապահովելու նպատակով նաև թիրախավորում է մարզերը:*

4.7.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Թիրախ լսարանի ընդլայնմանն ու օգտվողների ներգրավվածությանն ուղղված ռազմավարության պակաս:*

Մշակութային հաստատությունների և ՄՍՃ-երի մեծ մասը չեն թիրախավորում իրենց լսարանը և օգտագործողներին և սահմանափակվում են միայն մշտական սակավաթիվ լսարանի շրջանակներով: Ավելին, ձեռնարկատերերի մեծ մասն իրենց ջանքերն ուղղում են միայն արտադրանքը շուկա դուրս բերելուն: Նրանք միջոցներ չեն ներդնում կամ ուղղակի չունեն հաղորդակցության բավարար հմտություններ զարգացնելու՝ իրենց գործունեությանը զուգահեռ իրականացվող ռազմավարություն՝ առավել լայն թիրախ լսարան և ավելի շատ հաճախորդներ ներգրավելու և նրանց հետ հարաբերություններ կառուցելու համար:

> *Մարզերում մշակութային ապրանքների առաջարկի խրթին հասանելիություն:*

Երևանից դուրս առկա է մշակութային և ստեղծարար արտադրանքի առաջարկի պակաս: Խորհրդային ժամանակաշրջանից մնացած՝ ներկայումս գոյություն ունեցող մշակութային ենթակառուցվածքը, սկսած արվեստի և երաժշտական դպրոցներից մինչև թատրոններ, գրադարաններ, մշակութային ակումբներ, չի նորացվել և հետևաբար չունի համապատասխան մարդկային ռեսուրսներ, սարքավորումներ և ծրագրեր:

4.8 Միջազգայնացման ու համագործակցության խրախուսում

ԱլԳ երկրներն աստիճանաբար դուրս են գալիս միջազգային ասպարեզ՝ մշակույթն օգտագործելով որպես իրենց ուրույն ինքնությունը ներկայացնող «փափուկ ուժի» դեսպան: Դրանցից շատերը նախաձեռնում են միջազգային զբոսաշրջության քարոզարշավներ և մշակույթն օգտագործում են որպես կենտրոնական տարր՝ հիմնված իրենց հարուստ մշակութային ժառանգության վրա: Այնուամենայնիվ, ՄՍՃ-երը՝ արտահանման և ներդրումներին վերաբերող քարոզարշավների մասով դեռևս չեն ներառվել տնտեսական և առևտրային դիվանագիտության

[55] https://haypopup.com/

շրջանակներում: ԱլԳ երկրները կարող են գովազդային նոր ազգային քարոզարշավների միջոցով զարգացնել տեղի ստեղծարար տաղանդի և մարդկային ռեսուրսի ներուժը և մեծացնել տնտեսության «ավելացված արժեքի» մեջ դրանց մասնաբաժինը: Այս երկրներից շատերի շուկաների փոքրածավալ լինելու պատճառով միջազգայնացումն անհրաժեշտ քայլ է դառնում՝ ՄՍՁ-ների թիրախ լսարանը և գործունեությունն ընդլայնելու համար:

Մասնագիտական շարժունակության և շրջանառության հնարավորություններն աստիճանաբար ավելի դյուրին են դառնում, սակայն ԱլԳ երկրներում այս հանգամանքները տարբերվում են: ԱլԳ երկրների քաղաքացիների համար տարածաշրջանով ճանապարհորդելու սահմանափակումներ չկան: ԵՄ երկրների քաղաքացիների համար ԱլԳ հինգ երկրներում չկան վիզայի կամ հրավերի պահանջներ: Այնուամենայնիվ, ԱլԳ երեք երկրների քաղաքացիները ԵՄ երկրներով ճանապարհորդելիս սահմանափակումների են բախվում: Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի համար շենգենյան գոտու վիզայի պահանջները հանվել են: ԱլԳ հինգ երկրներում ընթացող հակամարտություններն անկայունություն են սերմանում, ինչն ազդում է միջազգային փոխանակման նախաձեռնությունների, առևտրի և համագործակցության վրա:

Բոլոր ԱլԳ երկրներն անդամակցում են խոշոր միջազգային մշակութային կազմակերպություններին և ստորագրել են միջազգային մշակութային կոնվենցիաները, օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի շրջանակներում: Նրանք ակտիվ գործընկերներ են մշակութային ժառանգությանը, թանգարաններին, ֆիլմարտադրությանը, արհեստներին և հրատարակչական գործունեությանն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի և ԵՄ միջսահմանային մի շարք ծրագրերում[56]:

Տարածաշրջանի մեծագույն ձեռքբերումներից է ԵՄ-ի Ստեղծարար Եվրոպա ծրագրին մասնակցությունը: Ներկայումս դրան անդամակցում են ԱլԳ երեք երկրներ, իսկ մնացածը բանակցությունների փուլում են կամ քննարկում են իրենց մասնակցության հարցը: Ծրագրի առաջարկած օգուտը շատ ավելին է քան մշակույթի և լրատվության ոլորտներում համագործակցության տարբեր ուղղությունների ֆինանսավորումը: Ծրագիրն ԱլԳ երկրներին հնարավորություն է ընձեռում ընդգրկվել Եվրոպական հարևանների հետ միասին համատեղ ստեղծագործելու և արտադրելու գործում: Ստեղծարար Եվրոպա ծրագրին մասնակցելու համար ներկայացվող պահանջներից շատերի հիմքում ընկած է զարգացող գործընկերությունը: Ծրագրով ֆինանսավորվում է ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցումն ու «հավասարը հավասարի հետ» ուսումնառության ծրագրերը ոլորտային մասնագետների համար, ինչն օգնում է նրանց պահպանել կապերը և հարաբերությունները հնարավոր միջազգային գործընկերների հետ: Թերություններից են այն հանգամանքները, որ ԱլԳ երկրներում շատ են ոլորտում գործող այն անձինք, որոնք ավելի շատ միջազգային կապերի և ծրագրի կառավարման հմտությունների կարիք ունեն, իսկ մասնակցության համար պահանջվում է նաև 40-50% համաֆինանսավորում, ինչը խոչընդոտում շատերի ներգրավմանը:

---

[56]Գիկյան նախաձեռնություն», Ստեղծարար ճյուղերի զարգացումը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում. ժառանգական արհեստներ. զարգացման միասնական հարթակ», «Գիրք հարթակ», «Սնծովյան անիմացիա ծրագիր», «Եկեք խոսենք ֆիլմերի մասին Հարավային Կովկասում»:

ԱլԳ երկրներում փառատոնների միջոցով գովազդվում են տարածաշրջանները և խթանվում է ՄՍՁ-երի միջազգայնացումը: Մրցույթները, փառատոնային ծրագրերը, միաժամանակյա ցուցահանդես-շնորհանդեսները և բանախոսությունները՝ բոլորը միասին վերցրած առաջ են տանում բովանդակությունն ու ստեղծարարությունը երկրի ներսում և արտերկրում և նպաստում են, որ տեղացի արվեստագետները և պրոդյուսերները մասնակցեն արտերկրում կազմակերպվող նմանատիպ միջոցառումներին: Փառատոններին հյուրընկալվում են շատ օտարերկրյա մասնագետներ, պրոդյուսերներ, տնօրեններ և այլ ոլորտների ներկայացուցիչներ: Նրանցից որոշներն իրենց գաղափարներն «արտահանում են» օտարերկրյա այլ քաղաքներ և «նոր բիզնես ճյուղավորումներ» (pin-offs) ստեղծում: Շատ փառատոններ ներառվում են նաև միջազգային ցանցերում, ինչը տարածաշրջանի մասնագետների և կազմակերպությունների համար շարունակական կապերի պահպանման և հնարավորությունների հասանելիություն է ստեղծում: Ընդհանուր առմամբ, Ստեղծարար Եվրոպա ծրագրում ներգրավվելու և դրա հնարավորություններից օգտվելու համար առավել նախապատրաստվածը փառատոններն են:

ԱլԳ երկրների մեծամասնությունը[57] ակտիվ կերպով մասնակցում է «Ստեղծարար բիզնես գավաթ» (Creative Business Cup (CBC)) նախաձեռնությանը, որը Կոպենհագենում հիմնավորված հարթակ է նորարար բիզնեսի համար: CBC-ն շուրջամյա նախաձեռնություն է, որն օժանդակում է ստեղծարար ճյուղերի ձեռնարկատերերին և համակարգում ազգային մրցակցությունը: Տեղական համակարգողներն առաջ են տանում ազգային մրցույթները, իսկ հաղթողներն այնուհետև շարունակում են մրցել միջազգային միջոցառումներում: CBC-ի անդամները և մասնակից ձեռնարկատերերը հնարավորություն ունեն զարգացնելու իրենց հմտությունները և կապեր հաստատելու ներդրողների և համաշխարհային շուկաների հետ:

Միջազգային միջավայրում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ են մի շարք յուրահատուկ հմտություններ, ինչպես նաև նյութական ռեսուրսների մի ամբողջ համախումբ: Մասնագետներն ընդունում են, որ միջազգային շուկայում մրցելու համար անհրաժեշտ ծավալները չունեն, հետևաբար նրանց հարկավոր է ստեղծել ցանցեր, գտնել գործընկերներ, միասին մտածել և տեղեկատվություն տարածել: Այս մարտահրավերը պահանջում է ոլորտում կարողությունների զարգացման նոր մակարդակ, օրինակ՝ երկարաժամկետ ռազմավարությունների մշակման և կառավարման հմտությունների, ինչպես օրինակ՝ ֆինանսավորման ներգրավման և համապատասխան կապերի հաստատման գծով հմտությունների կատարելագործման մասով: Կառույցներին անհրաժեշտ է միջազգայանացումն ընդգրկել իրենց քաղաքականության առաջնահերթություններում և իրականացնել ծրագրեր ու կիրառել գործիքներ, որոնք ՄՍՁ-երին հնարավորություն կտան գործել վերազգային մասշտաբով:

[57] Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա

4.8.1 Միջազգային օրինակներ

«Go International» (Քայլիր միջազգայնորեն)[58] (Ավստրիա)

> *Սա միջազգայնացման նախաձեռնություն է, որն ստեղծվել է 2003 թվականին՝ ավստրիական գործարարների՝ որպես արտերկրում հուսալի և հետաքրքիր գործընկերների աջակցության և բրենդավորման նպատակով: Այն փորձագիտական աջակցություն, գործիքակազմ և միջազգային մասշտաբով իրենց արտադրանքը շուկայահանելու հնարավորություններ է տրամադրում առանձին ձեռնարկությունների: Նախաձեռնությունը համակարգվում է Ավստրիայի այլ առևտրատնտեսական կառույցների հետ համատեղ, որոնք նաև լրացուցիչ ուղղակի ֆինանսական օժանդակություն են տրամադրում:*

Երաժշտության շաբաթ Տալլինում[59] (Էստոնիա)

> *«Երաժշտության շաբաթ Տալլինում» նախագիծը մեկնարկել է 2009 թվականին որպես միավորվելու և տաղանդները ներկայացնելու փառատոնի միջոցով երաժշտության ճյուղը միջազգայնացնելու նախաձեռնություն: Այնուհետև դրա ձևաչափն ավելի է ընդլայնվել՝ վերածվելով մեկ շաբաթ տևող համապարփակ քաղաքային փառատոնի, որն իր մեջ ներառում է նաև արվեստ, դիզայն, տեխնոլոգիաներ, քաղաքային միջոցառումներ, խոհանոցային մշակույթ և բազմաթիվ այլ հասարակական հարցերի առնչվող միջոցառումներ: Ներկայումս այն որպես հանդիպման վայր է ծառայում Եվրոպայի ստեղծարար համայնքների համար:*

Ավելի շատ օրինակների համար տե՛ս.

ՄՄՁ-ների միջազգայնացումը խրախուսող կենտրոններ՝ Կատալանի մշակութային ձեռնարկությունների ինստիտուտ[60], «Flanders DC» կազմակերպություն[61] և «NOMEX Music Export Programme» հարթակ[62]

Եվրոպական և միջազգային ցանցեր և հարթակներ՝ «Ստեղծարար բիզնես գավաթ» (Creative Business Cup)[63], «Ստեղծարար ուղիներ» (Creative Tracks)՝ «Տաղանդներ առանց սահմանների»[64], Եվրոպական ստեղծարար հանգույցների ցանց[65], Եվրոպական փառատոնների հարթակ[66] և Ստեղծարար Եվրոպա ծրագիր[67]

---

[58] https://www.go-international.at/
[59] https://tmw.ee
[60] http://cultura.gencat.cat/ca/departament/estructura_i_adreces/organismes/icec/
[61] http://www.flandersdc.be/nl/promotie
[62] http://nordicmusicexport.com
[63] http://www.creativebusinesscup.com/
[64] http://www.creativetracks.org/
[65] http://creativehubs.eu/
[66] http://www.effe.eu/
[67] https://ec.europa.eu/programmes/creative-europe/

4.8.2 Հայաստանում առկա հնարավորությունները

> *Միջազգայնորեն ամուր փոխկապակցված ՄՄՀ-ների համայնք:*

Ընդհանուր առմամբ մշակութային և ստեղծարար համայնքն ամուր կապեր ունի ամբողջ աշխարհում ցանցերի միջոցով և մեծ սփյուռքի շնորհիվ: Մի քանի հայկական փառատոններ, թատրոններ, թանգարաններ և արվեստի հաստատություններ ներգրավված են այնպիսի եվրոպական ցանցերում, ինչպիսիք են՝ IFACCA, EFA, IETM, NEMO, Europa Nostra և ResArtis:

> *Բանակցությունների փուլում է Ստեղծարար Եվրոպա ծրագրին պոտենցիալ անդամակցությունը:*

Ստեղծարար Եվրոպա ծրագրին Հայաստանի անդամակցության վերաբերյալ բանակցությունները կառավարության և ԵՄ միջև ընթացքի մեջ են: Հայաստանի փաստացի մասնակցության պայման է այժմ հանդիսանում Եվրոպական հանձնաժողովի հետ Համաձայնագրի ստորագրումը և ծանուցումը: Այս քայլով առավել ընդլայնված Եվրոպական համագործակցության մեջ ներգրավվելու համար նոր դռներ կբացվեն տեղական օպերատորների առջև: Մասնակցությունը տալիս է համապատասխան համաֆինանսավորումից օգտվելու հնարավորություններ և ապահովում է տարատեսակ գործընկերությունների և միջազգային տեսանելիության ու գիտելիքների հասանելիություն:

> *Միջազգային ասպարեզում Հայաստանի բրենդավորման համար անհրաժեշտ՝ մշակույթի և մշակութային ինքնության ճանաչում պաշտոնական մակարդակով:*

Առաջնորդվելով «մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսով՝ պետությունն արժևորում է մշակույթի և մշակութային ինքնության ներդրումը հայ ազգի՝ համաշխարհային մակարդակով հանրահռչակման գործում՝ իր արժեքների, պատմության և ժառանգության միջոցով: Սփյուռքը թիրախավորելուց և ներգրավելուց բացի, այս նպատակը ներառվել է նաև Հայաստանում միջազգային զբոսաշրջությունն առավել զարգացնելու մտադրությունների մեջ:

> *Երիտասարդ տաղանդների խրախուսմանը, նրանց ուսուցմանը և միջազգային հարթակներում նրանց ներկայությանն օժանդակող պետական քաղաքականություն:*

Մշակույթի նախարարությունը խթանում է երիտասարդ կոմպոզիտորների և կատարողների մրցունակությունը միջազգային շուկայի ասպարեզում՝ աջակցելով նրանց կրթություն ստանալու, մրցույթներին մասնակցելու, ինչպես նաև արտասահմանում հյուրախաղերով հանդես գալու հարցերում:

> *Հայաստանի կինոարտադրության համար միջազգային կապերի ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված երաշխիքներ:*

Հետևելով Ոսկե ծիրան փառատոնի միջազգային հաջողությանը, որը համարվում է հայ կինոյի ամենատեսանելի դեմքն արտերկրում, Հայաստանը վերջերս միացել է

Eurimages ծրագրին (2016), ինչպես նաև՝ ի դեմս Ազգային կինոկենտրոնի, դարձել է Եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիայի (European Audiovisual Observatory) անդամ:

> *Փառատոնները ծառայում են որպես հանգույցներ՝ տարածաշրջանային և առավել ընդլայնված միջազգային համագործակցության համար:*

Ամենանշանակալի միջազգային փառատոնները որպես աջակցության և բիզնեսի զարգացման հարթակներ են հանդես գալիս տարբեր գեղարվեստական և ստեղծարար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ֆիլմարտադրությունը (Ոսկե ծիրան, Ռեանիմանիա), երաժշտական և կատարողական արվեստները (Հայ ֆեստ, ԱՐԷ, Արամ Խաչատրյանի անվան մրցույթ և Երևանյան հեռանկարներ) և գրականությունը (Գրական տապան): Փառատոնների շրջանակներում մասնագետներին խորհուրդներ են տրվում և (կամ) աջակցություն է տրամադրվում՝ արտերկիր մեկնելու և անկախ փառատոններում ու այլ մրցույթներում կամ խթանիչ միջոցառումներում, ինչպիսիք են տոնավաճառներն ու շուկաները, մասնակցելու նպատակով դրամաշնորհային հայտ կազմելու հարցում: Համագործակցությունն Արևելյան գործընկերության տարածաշրջանի անկախ փառատոնների հետ նույնպես տարածված է, մասնավորապես ամսաթվերի հստակեցման և միջազգային հյուրերի ծախսերը միասին հոգալու հարցերում: Ավելին, Ոսկե ծիրանը նույնպես կիսվում է իր գաղափարներով ու մեթոդներով՝ աջակցություն ցուցաբերելով նմանատիպ փառատոնների կազմակերպմանն արտերկրում, մասնավորապես Բրեմենում, Ամերսֆուրթում, Ռուսաստանում, Էդինբուրգում, Էստոնիայում և Ալմաթայում: Բացի դրանից, կան նաև միջսահմանային հաջողված ծրագրերի օրինակներ կինոարդյունաբերության շրջանակներում: ԵՄ կողմից ֆինանսավորված ծրագրերի կառավարումը, ինչպիսին է օրինակ՝ «Ռեժիսորներ առանց սահմանների» ծրագիրը, հաջողությամբ իրականացվել է Ոսկե ծիրան փառատոնի կողմից՝ Վրաստանի, Ուկրաինայի, Թուրքիայի և Իտալիայի գործընկերների հետ միասին՝ ներառյալ հայ-թուրքական կինոհարթակի ստեղծումը:

Տեղական օրինակ. Կինոաշխարհ[68]

Կինոաշխարհը վեբ հարթակ է, որին օժանդակում է Ազգային Կինոկենտրոնը: Այս հարթակը ծառայում է որպես հայ և համաշխարհային կինոյի ասպարեզում տեղեկատվության տարածման և գովազդային-տեղեկատվական «մուտքի դարպաս» և միասնական աղբյուր:

4.8.3 Հայաստանում առկա մարտահրավերները

> *Միջազգային շարժունակությանն ուղղված օժանդակության չնախատեսված ու չկապակցված բնույթը խոչընդոտում է միջազգային կապերի ու գործընկերային հարաբերությունների երկարաժամկետ պահպանմանը:*

[68] http://kinoashkharh.am/

Պետությունը չունի միջազգայնացմանն ուղղված արդյունավետ և համակարգված օժանդակության ծրագիր: Դեսպանատների, միջազգային կազմակերպությունների և դոնորների կողմից տրամադրվող օժանդակությունը ֆինանսավորման այլընտրանքային, սակայն այնուամենայնիվ ոչ կանոնավոր աղբյուր է իրենից ներկայացնում: Նման անկանխատեսելիությունը խոչընդոտում է երկարատև կտրվածքով պլանավորմանը, ինչպես նաև միջազգային կապերի ու գործընկերությունների երկարատև պահպանմանը:

> *Փառատոնների հետ կապված գործողությունների անկանոն բնույթը թույլ չի տալիս լիարժեքորեն իրացնել դրանց ամբողջ ներուժը, ինչը հնարավորություն կտար, որ դրանք հանդես գային որպես միջազգայնացման գլխավոր կենտրոններ:*

Փառատոններից շատերը բավականին ոչ կայուն ձևաչափ են ունենում ֆինանսավորման անկանոն բնույթի և բիզնես մոդելների բազմազանության բացակայության կամ այլ շահագրգիռ կողմերի հետ փոխադարձ կապերի բացակայության պատճառով: Դրանք շատ հաճախ դժվարությունների են հանդիպում՝ կապված պրոդուկտները ներկայացնելու համար պատշաճ վայրերի կամ տարածքների հասանելիության հետ: Դրանց ոչ կայուն բնույթը խոչընդոտում է, որ պատշաճ կերպով ուսումնասիրվի դրանց՝ իրենց համայնքի և երկրի համար որպես միջնորդ միջազգային հարթակներ հանդես գալու ամբողջ ներուժը:

> *ՄՄՁ-ների լայն բազմազանություն ներառող մշակութային դիվանագիտության ռազմավարության բացակայություն:*

Միջազգային ասպարեզում ազգային մշակույթն առաջ տանելուն ուղղված նպատակների շարքում ներառված չէ կանոնավոր կերպով ներդրումների հատկացումն ավելի լայն ու ժամանակակից ՄՄՁ-ների հետ կապված տեսլականի ու ռազմավարության շրջանակներում: Հայաստանի դիվանագիտության, առևտրի և արտահանումների հետ կապված քաղաքականություններում ՄՄՁ-ները պետք է ավելի շատ ընդգրկվեն՝ երկրի տաղանդների ու արդյունաբերության համար միջազգային հնարավորությունները բաց անելու նպատակով:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

5.1 Քաղաքականության մշակում, մասնակցություն և հարթակներ:

- ***Մշակել ՄՄՃ-ների գծով միասնական քաղաքականություն***
- ***Ձևավորել ընդհանուր հարթակներ և ներգրավել շահագրգիռ կողմերին***
- ***Խթանել փոխգործակցությունը ՄՄՃ-ների, զբոսաշրջության և ՏՏ ոլորտների միջև***

5.1.1. Կարճաժամկետ գործողություններ

ա) Մշակել մշակութային քաղաքականության իրականացմանն ուղղված գործողությունների ամենամյա ծրագրեր:

Մշակութային քաղաքականության վերաբերյալ ներկայումս գործող ամենամյա փաստաթղթերը պետք է համալրվեն գործողությունների ծրագրերով, որոնցով հստակեցվում են կոնկրետ նպատակներն ու հետագա գործողությունները կամ այն գործիքները, որոնք պետք է կիրառվեն կոնկրետ ժամկետներում:

բ) Առավել ամուր կապ ստեղծել ՄՄՃ-ների և զբոսաշրջության զարգացման միջև:

ՄՄՃ-ները պետք է դիտարկվեն զբոսաշրջության աջակցության ծրագրերի շրջանակներում: Տեղացի ձեռնարկատերերին՝ արդյունաբերողներին, գինի և սննդամթերք արտադրողներին և հյուրանոցային ծառայություններ մատուցողներին պետք է օժանդակություն տրամադրվի ՄՄՃ մասնագետների և ձեռնարկությունների հետ համատեղ արտադրանք ու ծառայություններ մշակելու և իրենց գործունեության և առաջարկների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով կապեր հաստատելու հարցում: ՄՄՃ-ները կարող են նպաստել նաև զբոսաշրջային առաջարկների բարելավմանն ու ընդլայնմանը՝ փորձի, ակտիվ և ստեղծարար զբոսաշրջության առումով, և մասնակցել հաղորդակցության գործիքների մշակմանն ու քարոզարշավներին:

գ) Ապակենտրոնացման գործընթացին աջակցելու համար իրականացնել տեղի մշակութային և ստեղծարար ռեսուրսների «քարտեզագրում»:

Հիմնվելով Գորիսում և Գյումրիում իրականացված «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագրի վրա՝ ապակենտրոնացումը խթանելու նպատակով տեղական և (կամ) մարզային մակարդակով պետք է իրականացվեն «քարտեզագրման» աշխատանքներ՝ ենթակառուցվածքները, տեղանքը, կազմակերպությունները, միջոցառումները, շարժիչ ուժ հանդիսացող գործոններն ու ակտիվները գնահատելու համար: Այս գործընթացը կհանգեցնի առկա ռեսուրսների վերաբերյալ պատկերացման ձևավորմանը և պլանավորման գործիք կդառնա այն շահագրգիռ կողմերի ու պետական մարմինների համար, որոնք

ցանկանում են զարգացնել իրենց մարզերն ու համայնքները, բարելավել քաղաքային կամ մարզային ենթակառուցվածքները և զարգացնել տեղի տնտեսությունները: Այս աշխատանքները կնպաստեն նաև համայնքային ներգրավվածությանն ու իրազեկվածության բարձրացմանը: Տվյալները կարող են «քարտեզագրվել» և ինտերակտիվ կերպով ցուցադրվել: Քարտեզները կազմելիս կարող են օգտագործվել ԵՄ-ի Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի «Ստեղծարար քաղաքներ և մարզեր» նախաձեռնության [69] քարտեզագրման աշխատանքները, որի շրջանակներում հրատարակվել է քարտեզագրման աշխատանքներն իրականացնելու վերաբերյալ ձեռնարկ:[70]

դ) Խրախուսել ՄՍՁ-ների մասնագիտական միության ստեղծումը:

ՄՍՁ-ների համայնքը պետք է ոչ պաշտոնական ազգային հարթակ ձևավորի, որում կընդգրկվեն ընկերություններ, ՀԿ-ներ, հանրային մարմիններ և վայրեր: Այս գործընթացը շատ կարևոր է ոլորտի մասնատվածությունը վերացնելու և այնպիսի միասնական հարթակ ստեղծելու առումով, որը կկարողանա ներկայացնել ոլորտը և կառուցողական երկխոսություն վարել համապատասխան մարմինների հետ:

ե) Կազմակերպել տեխնոլոգիական ստեղծարար լաբորատորիաներ և ծրագրավորողների ֆորումներ (հաքաթոններ):

Պետք է պարբերաբար կազմակերպվեն ՏՏ ոլորտն ու ՄՍՁ-ները միավորող համատեղ լաբորատորիաներ ու հաքաթոններ՝ նպատակ ունենալով խթանել կապերն այս երկու համայնքների միջև՝ հատկապես գործող բիզնես կենտրոնների և ստեղծարար հանգույցների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ու այլ կրթական և ուսումնական կենտրոնների միջոցով: Այս նախաձեռնությունները կարող են թեմատիկ բնույթ կրել և անդրադառնալ քաղաքների և հասարակության խնդիրներին, ինչի շրջանակներում ինժեներներն ու ծրագրային ապահովում մշակողները միասին են աշխատում նախագծողների, ստեղծարար հեղինակների և մեդիա արվեստագետների հետ:

5.1.2 Միջնաժամկետ գործողությունները

ա) ՄՍՁ-ների զարգացման համար պատրաստել և որդեգրել պետական միասնական քաղաքականություն:

Մշակույթի նախարարությունը պետք է ՄՍՁ-ների հետ կապված ազգային այնպիսի քաղաքականություն մշակելուն ուղղված մասնակցային գործընթաց սկսի, որով կկարևորվի ոլորտի նշանակությունը մշակութային, սոցիալական և տնտեսական զարգացման հարցում և կխթանվի դրա առաջընթացը: Այս

[69] Հայաստանում պիլոտային քաղաքը Սիսիանն է:
[70] Մշակութային և ստեղծարար ռեսուրսների առավելագույնս օգտագործում: Քարտեզագրման և ռազմավարության մշակման ձեռնարկ ստեղծարար քաղաքների և մարզերի համար, Լիա Ղիլարդի, ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագիր, 2017թ.: https://www.culturepartnership.eu/upload/editor/2017/2017/170809%20Creative%20Towns%20and%20Regions%20Handbook%20FINAL.pdf

ռազմավարությունը պետք է իրականացվի առկա տվյալների (հատկապես «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ–ի ցուցանիշների) հիման վրա, ինչպես նաև ոլորտի մասնագիտական և այլ ոլորտների, այդ թվում՝ տնտեսական, կրթական, տարածաշրջանային զարգացման, ինչպես նաև սփյուռքի և արտաքին գործերի հետ կապված ոլորտների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների և հաղորդակցման գործընթացի հիման վրա:

բ) Հայաստանի զբոսաշրջային ռազմավարության մեջ, այդ թվում՝ միջազգային թվային հարթակի ստեղծման գործում ներառել ՄՍԱ-ներն ու ՏՀՏ-ները:

Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ռազմավարությունն ու բրենդավորումը պետք է հիմնված լինեն նրա ուրույն մշակութային ժառանգության և ժամանակակից տեխնոլոգիական ու ստեղծարար տաղանդի վրա՝ համատեղելով նրա բնական և քաղաքային միջավայրերը որակյալ ծառայությունների և գործելակերպերի հետ՝ ստեղծարար ձեռնարկությունների զարգացման միջոցով: ՏՀՏ և ՄՍԱ համայնքները պետք է բաց մրցույթների միջոցով խթանեն զբոսաշրջության այնպիսի թվային հարթակի ստեղծումն ու պահպանումը, որը որպես գովազդային-տեղեկատվական «մուտքի դարպաս» և ամրագրման համակարգ կծառայի:

գ) Մշակել հատուկ տեսալսողական ու մեդիա քաղաքականություն և իրավական դաշտ:

Տեսալսողական և մեդիա ոլորտում հմտությունների և արտադրական տարածքների մասով ներկայիս կարողություններից բացի անհրաժեշտ է նաև ենթաոլորտային ազգային քաղաքականություն, որն այս լայնածավալ ճյուղում որոշակիորեն կդյուրացնի անկախ արտադրության և իրացման հնարավորությունները: Անհրաժեշտ է էլ ավելի խորացնել ՏՀՏ ոլորտի հետ փոխգործակցությունները: Ավելին, այդպիսի քաղաքականությամբ Ազգային կինոկենտրոնին պետք է հստակ լիազորություններ տրվեն և անհրաժեշտ ռեսուրսներ հատկացվեն:

դ) ՏՀՏ և ՄՍԱ-ների համար մշակել համատեղ կրթական, գիտահետազոտական և զարգացման ծրագիր՝ կապ ստեղծելով գիտնականների ու ճյուղի միջև:

Անհրաժեշտ է նախաձեռնել ՏՀՏ-ի ոլորտը և ՄՍԱ-ներին միավորող՝ հետբուհական կրթությունը, գիտահետազոտական աշխատանքներն ու զարգացումը խթանելուն և դրան աջակցելուն ուղղված համատեղ ծրագիր՝ որակավորումների բարձրացման, գործընթացների և արտադրանքի նորարարության ոլորտում ներդրումների խրախուսման և ոչ միայն գիտնականների ու արդյունաբերության, այլ նաև ՏՀՏ ոլորտի և ՄՍԱ-ների համայնքների միջև կապերի հաստատման համար:

ե) ՄՍԱ-ներում ստեղծել գիտահետազոտական և մոնիթորինգի մարմին:

Այս մարմինը պետք է հետևի «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ–ի ցուցանիշների ներդրման աշխատանքների իրականացմանը, ինչը շատ կարևոր է միջազգային ասպարեզում տվյալների զանգվածների համեմատությունը հնարավոր դարձնելու համար: Այս գործընթացում պետք է ներգրավվեն ոլորտի կառույցները, կազմակերպությունները և տարբեր շահագրգիռ կողմեր, որպեսզի

ապահովվի որակի վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու մոնիթորինգի գործընթացների համապարփակ բնույթը: Պետք է նախատեսվի նաև պետական քաղաքականության, ինչպես նաև աջակցության գործիքների և ծրագրերի մոնիթորինգ և գնահատում: Տվյալների ազատ հասանելիությունն ու տարածումը պետք է դյուրին լինի:

5.2 Ենթակառուցվածք, ֆինանսավորում և քաղաքականության շրջանակներ

- ***Բազմազանեցնել ֆինանսավորման աղբյուրները***
- ***Ստեղծել բարենպաստ, օժանդակող միջավայր***
- ***Ուժեղացնել փաստացի տվյալների վրա հիմնված կառավարման համակարգը***

5.2.1. Կարճաժամկետ գործողություններ

ա) Խթանել փաստերի վրա հիմնված կառավարումն ու համագործակցությունը պետական հաստատությունների և անկախ ու նոր ձևավորվող համայնքի միջև:

Աստիճանաբար ներդնել ՄՍՃ-ների ծրագրերի, կազմակերպությունների և հաստատությունների՝ առավել ճկուն և փաստերի վրա հիմնված կառավարման համակարգ, որից պետք է կախված լինի պետական ֆինանսավորման տրամադրումը: Այն կօգնի հնարավորություններ ստեղծել որակավորման բարձրացման, մասնագիտական առաջընթացի և ցկյանս ուսումնառության համար, ինչպես նաև ղեկավարության և անձնակազմի գնահատման, ռազմավարական, այդ թվում՝ իրացման և հաղորդակցության մասով պլանավորման և բիզնես մոդելների խթանման համար: Պետական մշակութային հաստատությունների դեպքում անհրաժեշտ է խրախուսել, որ նրանք բաց լինեն անկախ հատվածի և այլ ստեղծարար ձեռնարկատերերի հետ համագործակցելու և աշխատելու համար: Մշակութային հաստատությունների միջև կապերի և համագործակցության խթանումը՝ կապված զբոսաշրջային երթուղիների համատեղ մշակման հետ, նույնպես կարևոր նշանակություն ունի փոխգործակցությունների ձևավորման հարցում:

բ) Դյուրացնել ստեղծարար ծրագրերի համար հասարակական վայրերի և տարածքների հասանելիությունը և օժանդակություն տրամադրել այդ հարցում:

Ծրագրային առաջարկների և (կամ) պետական մրցույթների հիման վրա ֆինանսական օժանդակություն պետք է տրամադրվի փոքր անկախ նախաձեռնություններին, հատկապես նրանց կողմից համաֆինանսավորման հնարավորությունների առկայության դեպքերում՝ ՄՍՃ-ների ոլորտի մասնագետների համար հասարակական (օրինակ՝ մշակութային հաստատությունների ներսում) կամ չօգտագործվող տարածքների հասանելիությունը դյուրացնելու և այդ հարցում նրանց օժանդակելու նպատակով: Այդ գործընթացից պետք է օգտվեն նաև կայուն դինամիկա և կառավարման կարողություններ ունեցող ստեղծարար հանգույցները, արվեստի և մշակութային վայրերը: Սա դրական ազդեցություն կունենա քաղաքների վերածնունդին ուղղված

նախաձեռնությունների վրա:

գ) Խրախուսել ՄՍՁ-ներում հովանավորությունն ու ներքին և օտարերկրյա ներդրումները (հատկապես ֆիլմարտադրության ոլորտում):

Անհրաժեշտ է ընդունել իրավական ակտեր, որոնք ՄՍՁ-ներին օժանդակություն տրամադրող հովանավորների, դոնոր կազմակերպությունների և այլ ներդրողների համար հարկային արտոնություններ են սահմանում: Այդ արտոնությունները կարևոր են ոլորտն առավել գրավիչ դարձնելու հարցում՝ հատկապես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) քաղաքականություն որդեգրած ընկերությունների համար: Օրենսդրության ցանկացած այդպիսի փոփոխություն պետք է ուղեկցվի գործարար համայնքում իրազեկվածության բարձրացմանն ուղղված տեղեկատվական քարոզարշավով: Պետք է սահմանվեն արտոնությունների հատուկ փաթեթներ ՄՍՁ-ներում, հատկապես ֆիլմարտադրության ոլորտում օտարերկրյա ներդրողների ներգրավման համար: Հայաստանը՝ Վրաստանի նման, կարող է իր բազմազան տարածքը ներկայացնել որպես գրավիչ հարթակ և վայր՝ արտասահմանյան ֆիլմերի արտադրությունը խրախուսելու համար:

դ) Խթանել ՄՍՁ-ների համաժողովրդական դրամահավաքի (քրաուդֆանդինգ) քարոզարշավներն ու հարթակները:

Քրաուդֆանդինգն անհրաժեշտ է խթանել ՄՍՁ-ների համայնքին և առավել լայն թիրախ լսարաններին նպատակաուղղված՝ տեղեկատվական և իրազեկության բարձրացման քարոզարշավներ սկսելու միջոցով:

5.2.2 Միջնաժամկետ գործողությունները

ա) Օժանդակել երկրի ամբողջ տարածքում գործարար, ՏՀՏ և ստեղծարար հանգույցների ցանցի ստեղծմանը:

Պետությունը պետք է դրամաշնորհներ տրամադրի գործարարության և նախագծերի մշակման համար պայմաններ տրամադրող գործարար, ՏՏ և ստեղծարար հանգույցների հիմնադրման և դրանց գործունեության, ինչպես նաև ՄՍՁ-ների առավել լայն ոլորտի և ՏՀՏ համայնքի միջև փոխգործակցության համար: Խրախուսման հատուկ միջոցներ պետք է տրամադրվեն Երևանից դուրս մեկնարկած բոլոր նախաձեռնությունների համար:

բ) Ստեղծել ՄՍՁ-ների համար պետության կողմից ֆինանսավորման մշտական մրցակցային համակարգ:

Պետությունը պետք է գործարկի դրամաշնորհային ծրագրի թափանցիկ և համակարգված գործընթաց, որը ներառական և հարմարեցված կլինի այնպիսի տարբեր մասնակիցների համար, ինչպիսիք են մշակութային հաստատությունները, անկախ կազմակերպությունները, ՀԿ-ները, ստեղծարար ընկերությունները, ստեղծարար ձեռնարկատերերը: Դրա հիմքում պետք է ընկած լինի «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքը (օրինակ՝ Գեղարվեստական խորհուրդ, Մշակութային հիմնադրամ և այլն)՝ ապահովելով հավասար

հասանելիություն և մոնիթորինգի գործընթաց: Այն պետք է խարսխվի ծրագրային առաջարկների և փաստերի վրա հիմնված գնահատման վրա: ՄՍՁ-ների բիզնեսների ֆինանսավորմանն առնչվող կոնկրետ դեպքում ՄՍՁ-ներում բիզնես հիմնել և զարգացնել ցանկացող սուբյեկտների համար նախատեսված ֆինանսավորման ծրագիրը պետք է մշակվի Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ՝ ՓՄՁ-ներին ուղղված դրա քաղաքականության և ծրագրերի շրջանակներում:

գ) Սահմանել ՄՍՁ-ների բիզնեսների ստեղծման և զարգացման համար բարենպաստ կարգավորումներ և խրախուսման միջոցներ:

Հարկային համակարգն անհրաժեշտ է պարզեցնել՝ գործունեության դյուրին և սահուն մեկնարկը հնարավոր դարձնելու համար, ձեռնարկատերերի համար նախատեսելով ավելի քիչ պարտավորություններ՝ հատկապես արտադրական ծավալների ավելացման տարիներին: Հարկային համակարգի վերանայմամբ պետք է ապահովվի նաև առավել կայուն պետական բյուջետային օժանդակության հատկացումը ստեղծարար և նորարարական քաղաքականության ոլորտին՝ այդ նպատակի համար ուղղելով ծխախոտի, ոգելից խմիչքների կամ վիճակախաղերի կազմակերպման համար վճարվող հարկերը և (կամ) հեռուստաալիքների համար գանձվող և DVD սկավառակների վաճառքից ստացվող գումարները: Պետությունը նաև պետք է որպես միջնորդող և խթանող օղակ լինի ներդրողների և մասնավոր հատվածի՝ միկրովարկերի, «բիզնես հրեշտակների» և վենչուրային կապիտալի հարցում երաշխիքների ապահովման գործում:

դ) Իրականացնել դիտանցում և բարձրացնել հեղինակային իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունն ու բարձրացնել կոլեկտիվ հիմունքներով կառավարման հաշվետվողականությունը:

Անհրաժեշտ է ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում բարձրացնել հեղինակային իրավունքի հետ կապված ընթացակարգերի մասին իրազեկվածությունը և բարեփոխել ու պարզեցնել հեղինակային և հարակից իրավունքների մասին օրենքները՝ ՄՍՁ-ների զարգացմանը նպաստելու համար: Կոլեկտիվ հիմունքներով կառավարման հաշվետվողականության մեխանիզմը պետք է էլ ավելի կատարելագործվի՝ մասնավորապես ռոյալթիների հավաքման և բաշխման առավել թափանցիկ մեխանիզմներ մշակելու հարցում կոլեկտիվ հիմունքներով կառավարման կազմակերպություններին օժանդակելու միջոցով: Պետք է խթանել հեղինակային իրավունքի ոլորտի ազդեցությունների և զարգացումների գնահատումն ու դիտանցումը՝ տվյալների հավաքագրումը դյուրացնելու նպատակով իրավասու մարմինների միջև միջգերատեսչական հարաբերությունները զարգացնելու միջոցով: Վերջապես, պետք է դիտարկվեն և ուսումնասիրվեն նաև բաց աղբյուրների և հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործությունների անվճար տարածման արտոնագրի (commons licensing) վրա հիմնված վարձատրության նոր ձևերը և բիզնես մոդելները:

ե) Վերանայել իրավական դաշտը՝ արդար մրցակցություն և լրատվամիջոցների բազմազանություն ապահովելու համար

Անհրաժեշտ է վերանայել իրավական դաշտը՝ պետական և ոչ պետական լրատվամիջոցներին բաշխման պետական համակարգերի հասանելիության, հաճախականության ռեսուրսների տեղաբաշխման, լիցենզավորման և գովազդի հավասար հնարավորություններ ընձեռելու համար: Պետությունը կարևոր դերակատարություն ունի ոչ միայն թափանցիկության, հաշվետվողականության և արդար մրցակցության ապահովման հարցում, ինչը կարող է նպաստել ընդհանուր ՄՍՃ-ների զարգացմանը, այլ նաև տեղական բովանդակությամբ արտադրության ու բաշխման խթանման և աջակցության հարցում:

5.3 Հմտություններ, թիրախ լսարաններ և շուկաներ

- ***Մեկնարկել ՄՍՃ-ների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ***
- ***Խթանել ստեղծարար հմտությունների և ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը***
- ***Հնավորել նոր թիրախ լսարաններ և շուկաներ***

5.3.1 Կարճաժամկետ գործողությունները

ա) Ստեղծարար ձեռնարկատերերի և մշակույթի ոլորտի մասնագետների համար նախաձեռնել «հավասարը հավասարին» մեթոդով ուսուցման և փոխանակման ծրագիր:

Մշակույթի նախարարության և Կրթության նախարարության կողմից համատեղ աջակցվող՝ ՄՍՃ-ների ամբողջ համայնքին ուղղված ինստիտուցիոնալ և անկախ այս ոչ պաշտոնական ուսուցման ծրագիրը պետք է խթանի ոլորտում աշխատող մասնագետների՝ հմուտ միջազգային վերապատրաստողների և ձեռնարկատերերի ուղղորդմամբ և խորհրդատվությամբ ուղեկցվող փոխանակման ծրագրերը: Այն պետք է մշակվի համակարգված հարթակի, տվյալների բազայի, վերապատրաստողների և շրջանավարտների կազմի հետ միասին՝ կապերի և ծանոթությունների հաստատումը խթանելու համար:

բ) ԲՈՒՀ-երի՝ ՄՍՃ-ների գծով ուսումնական պլանների շրջանակներում ծրագրային զարգացման ֆոնդերի հետ կապված միջգիտակարգային և ինտերակտիվ պիլոտային ծրագրեր իրականացնել:

Այս ծրագրերի շնորհիվ մեկ միասնական հարթակում կմիավորվեն ՄՍՃ-ների, բիզնես և տեխնոլոգիաների գծով ավարտական կուրսերում սովորող ուսանողները՝ հասարակական և քաղաքային խնդիրներին, ինչպես նաև գործարար համայնքի կողմից մատնանշված մարտահրավերներին լուծումներ առաջարկելու համար: Ծրագրի շրջանակներում արտադրական պրակտիկա անցած ուսանողները կարող են նաև աշխատանքի ընդունվել:

գ) Ամբողջ երկրով մեկ հիմնել խանութների և արվեստանոցների ցանց՝ տեղի ՄՍՃ-ների՝ «Արտադրված է Հայաստանում» բրենդի ներքո ներկայացված արտադրանքի համար:

Այս խանութները և արվեստանոցները կծառայեն որպես ստեղծարար աշխատանքներն ու արտադրանքը՝ արհեստագործական իրերը, տեղական

արտադրության ապրանքները, թանկարժեք քարերն ու ոսկերչական իրերը, այլ դիզայներական ապրանքները, հրատարակված աշխատությունները, խաղերը տարածելու համար։ Թանգարաններում և այլ մշակութային վայրերում պետք է տեղադրվեն վաճառասեղաններ, որոնք Հայաստանի ՄՍՃ-ների արտադրանքի համար կծառայեն որպես ցուցադրության և վաճառքի կետեր։

դ) Մշակութային թեմաներով լրագրողների, քննադատների և բլոգերների համար ներդնել կարողությունների զարգացման և շարժունակության ծրագիր։

Այս ծրագրի նպատակն է ձևավորել որակավորված և կոսմոպոլիտիկ լրագրողների և արվեստի քննադատների խումբ՝ գրելու և քննադատական մեկնաբանություններ ներկայացնելու ՄՍՃ-ների աշխատանքի և արտադրանքի վերաբերյալ։

5.3.2 Միջնաժամկետ գործողությունները

ա) ԲՈՒՀ-երում արվեստի և մշակույթի վերաբերյալ ուսումնական ծրագրերի շրջանակներում ներդնել ձեռնարկատիրական և հաղորդակցական հմտությունների զարգացման ծրագիր։

Բարձրագույն ուսումնական հաստատություններն արվեստի, մշակույթի և ստեղծարարության վերաբերյալ իրենց տարբեր ուսումնական ծրագրերի մեջ պետք է կառավարման, այդ թվում՝ ռազմավարական և հաղորդակցական հմտությունների և թիրախ լսարանի ընդլայնման հմտությունների զարգացման դասընթացներ ներառեն։ Այս դասընթացների օգնությամբ անհրաժեշտ կապեր պետք է հաստատվեն ոլորտի կազմակերպությունների և հաստատությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության հետ՝ գործնական աշխատանքի համար ուսանողներին կոնկրետ դեպքերի վերաբերյալ նյութեր ապահովելու նպատակով։ Արվեստի ու ստեղծարար ճյուղային ուղղությունների ուսանողների և բիզնեսի ու կառավարման գծով սովորող ուսանողների միջև կապերն ու համատեղ աշխատանքային խմբերը պետք է խրախուսվեն։ Դա կնպաստի նաև ՄՍՃ-ների ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, տվյալների հավաքագրմանը, հրավերով դասախոսությունների կազմակերպմանը, բաց համալսարանների, առցանց դասընթացների և մրցույթների կազմակերպմանը։

բ) Դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերում նախատեսել տարածքներ աշխատարանների ու ակումբների համար։

Սկիզբ առնելով որպես պիլոտային ծրագրեր՝ աշխատարաններն ու ակումբները պետք է աստիճանաբար ներդրվեն դպրոցներում ուսումնառության դեռ վաղ տարիներից։ Արվեստագետները, ՏՀՏ փորձագետներն ու այլ ստեղծարար ձեռնարկատերերը պետք է օժանդակող դեր ունենան ստեղծարար կարողությունների և գործընթացների, ինչպես նաև թիմային աշխատանքների համար շարժիչ ուժ հանդիսացող գործոնների վերհանման և ուսումնասիրության գործում։

գ) Աջակցել ՄՍՃ-ների բովանդակության վերաբերյալ մեդիա հարթակների ստեղծմանն ու պահպանմանը։

Պետությունը պետք է աջակցի ՄՍՁ-ների բովանդակության վերաբերյալ մեդիա հարթակների՝ բլոգերի, թվային հարթակների, ռադիո և հեռուստաալիքների ստեղծմանն ու պահպանմանը՝ ոլորտի ներուժի և շարժիչ ուժ հանդիսացող գործոնների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և ոլորտում գործող սուբյեկտներին ու նրանց պատմությունները ներկայացնելու նպատակով:

5.4 Միջազգայնացում և համագործակցություն

- ***Առաջ տանել հայկական տաղանդն ու ստեղծարարությունն ամբողջ աշխարհում***
- ***Ապահովել հնարավորություններ միջազգային համագործակցության և առևտրի համար***

5.4.1 Կարճաժամկետ գործողությունները

ա) Մշակութային ու ստեղծարար ուղղությունները ներառել արտերկրում դիվանագիտական և սփյուռքի քաղաքականության ու առաքելությունների շրջանակներում:

Հայկական հարուստ մշակութային ժառանգությունը, արվեստներն ու ստեղծարար ճյուղերը պետք է ներառվեն նրա դիվանագիտական հարաբերությունների և արտահանման ու առևտրային առաքելությունների շրջանակներում, ինչպես նաև սփյուռքի ներգրավման ծրագրերում: Մշակութային ինքնությունն ու ժամանակակից արտադրությունը պետք է փոխկապակցված լինեն այլ մշակույթների հետ, և խրախուսական միջոցներ պետք է նախատեսվեն ներդրումների ներգրավման, ինչպես նաև նոր շուկաների բացման համար:

բ) Ավարտին հասցնել Ստեղծարար Եվրոպա ծրագրին անդամակցելու շուրջ բանակցությունները:

Այժմ Հայաստանը պետք է ավարտին հասցնի ԵՄ-ի հետ բանակցությունները, ստորագրելով Եվրոպական հանձնաժողովի հետ նախատեսված Համաձայնագիրը՝ որպեսզի կարողանա սկսել Ստեղծարար Եվրոպա ծրագրին մասնակցությունը: Ծրագրի շրջանակներում ընդգրկվելու գործընթացին զուգահեռ պետք է իրականացվեն անդամակցությանը նախորդող՝ տեղեկատվական և հմտությունների զարգացմանը միտված լայնամասշտաբ քարոզչական աշխատանքներ:

գ) Ձևավորել շարժունակությանը նպաստող դրամաշնորհների արդյունավետ մեխանիզմ՝ միջազգային ասպարեզում մասնակցության համար:

Անհրաժեշտ է ստեղծել տարեկան կտրվածքով մի քանի անգամ պարբերաբար իրականացվող մրցույթների հիման վրա դրամաշնորհների տրամադրման ճկուն և արագ արձագանքող մեխանիզմ՝ գործընկերներ գտնելու և նրանց հետ հանդիպումներ կազմակերպելու, ցանցերում ներգրավվելու, ստաժավորումներին մասնակցելու և միջազգային տոնավաճառներում, առաքելություններում և փառատոներում ներկայանալու համար միջազգային ուղևորությունների հարցում աջակցելու և դրանք դյուրացնելու նպատակով:

դ) Ձևավորել մշակութային զբոսաշրջության միջազգային հարթակ։

Այս հարթակը պետք է լինի դեպի Հայաստանի զբոսաշրջության ոլորտ ուղղորդող «մուտքի դարպասը՝ ներկայացնելով երկրի հարուստ մշակութային ժառանգությունը և ժամանակակից ստեղծարար արտադրանքն ու ծառայությունները։

ե) Ստեղծել «ազգային ֆիլմ» հասկացության սահմանման իրավական շրջանակ՝ պաշտոնական համատեղ արտադրության առավելություններից օգտվելու համար։

Eurimages-ին անդամակցելուց հետո Հայաստանը պետք է իրավական դաշտ ստեղծի «ազգային ֆիլմ» հասկացության սահմանման համար, ինչն իրավական պահանջ է պաշտոնական համատեղ արտադրությունների հնարավորություններից օգտվելու համար։

զ) Արվեստագետների և ստեղծարարության միջազգային ստաժավորման ծրագիր սկսել մարզերում։

Աջակցել արվեստագետներին և ստեղծարար համայնքի ներկայացուցիչներին՝ քաղաքներում և շրջաններում միջազգային ստաժավորման ծրագրեր նախաձեռնելու և դրանք խթանելու համար։ Այս ծրագրերի շրջանակներում պետք է ներառվեն տեղի մասնագիտական համայնքի հետ աշխատանքային հանդիպումները և փոխանակման ծրագրերը, ինչպես նաև կոնկրետ վայրի համար նախատեսված նպատակային նախագծերի մշակումը։

է) Զարգացնել և ամրապնդել համագործակցությունն արևելյան գործընկերության շրջանակներում

Արևելյան գործընկերության երկրներում ՄՍԾ-ների ներուժը զարգացնելու համար շարունակել և խթանել «հավասարը հավասարին» մեթոդով ուսուցումը, գիտելիքների ու տեղեկատվության փոխանցումը, քաղաքականության մշակումը, հաղորդակցությունը, քարոզչությունն ու իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները։ Նախաձեռնել ու շարունակել իրականացնել կարողությունների զարգացմանը միտված շարժունակության համատեղ ծրագրեր՝ կապված նախագծերի համար դրամաշնորհների տրամադրման և տեղական տաղանդն ու ռեսուրսները ներկայացնելու համար ընդհանուր հարթակների հետ։

5.4.2 Միջնաժամկետ գործողությունները

ա) Առաջ տանել Հայաստանը որպես նկարահանման հրապարակ և ֆիլմարտադրության հարթակ ներկայացնող ծրագիր՝ Ազգային կինոկենտրոնն օգտագործելով որպես «մեկ պատուհան»։

Հարկային արտոնությունների փաթեթ և այլ նպաստավոր պայմաններ պետք է առաջարկվեն երկիրը ֆիլմարտադրության այնպիսի հանգույց դարձնելու համար, ինչպես դա իրականացվեց հարևան Վրաստանի դեպքում, որի հետ կարելի է փոխգործակցություն հաստատել և առավելագույնս օգտագործել նրա բազմազան մշակութային և բնական լանդշաֆտը։

բ) Նախաձեռնել աշխատանքի տեղավորման միջազգային ծրագիր նորահայտ երիտասարդ ստեղծարար շրջանավարտների և ձեռնարկատերերի համար՝ շեշտը դնելով սփյուռքի գործարար համայնքի վրա։

Այս ծրագիրը երիտասարդ շրջանավարտներին և ձեռնարկատերերին հնարավորություն կտա միջազգային փորձ ձեռք բերել, արտերկրում ծանոթություններ և կապեր հաստատել սփյուռքի և այլ մշակույթների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև իրերին նոր և այլ տեսանկյունից նայել։ Սփյուռքի գործարար համայնքը պետք է թիրախավորվի՝ աշխատանքի տեղավորման նման առաջարկներ ապահովելու տեսանկյունից։

գ) Ստեղծել համակարգող մարմին՝ միջազգայնացմանն աջակցելու և այն խթանելու համար։

Այս համակարգող մարմինը պետք է գործի որպես միջնորդ օղակ, որն ունի երկու հստակ սահմանված առաքելություն՝ ոլորտի ներսում բարձրացնել տեղեկացվածությունն ու զարգացնել կարողությունները, և արտերկրում առաջ մղել Հայաստանի ՄՍՃ-ները։ Միջազգային նախագծերի համար ոլորտին պահանջվում է աջակցություն՝ տեղեկատվության և կոնտակտային տվյալների տրամադրում, մասնավորապես՝ գործընկերների, ներդրողների, ցանցերի, միությունների և նախագծերի տվյալների թարմացված բազա վարելու միջոցով, միջազգային ընկերությունների հետ կապերի հաստատում, համագործակցության և արտահանման ընթացակարգերի և «նոու հաու»-ի հարցերում ուղղորդում և վերապատրաստում, ֆինանսավորման միջազգային հնարավորությունների նախանշում և դրանց համար դիմելու ձևերի մշակում։ Այնուհետև, այդ մարմինը պետք է մշակի հաղորդակցության և բրենդավորման պլան՝ երկիրն իր ՄՍՃ-ների կադրային ներուժի, բովանդակության, արտադրանքի և ծառայությունների միջոցով ներկայացնելու համար։ Երկրի ներսում և արտերկրում պետք է կազմակերպել ցուցադրություններ և միջոցառումներ ՄՍՃ-ների վերաբերյալ։ Այս ջանքերը պետք է համատեղվեն նաև զբոսաշրջության հարցերով մարմինների աշխատանքների հետ՝ մշակութային զբոսաշրջությունը թիրախներից մեկը դարձնելու համար։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայում մշակութային քաղաքականության և միտումների կոմպենդիում (2015) «Երկրի նկարագրություն. Հայաստան», Յուլիա Անտոնյան և Հայկուհի Մուրադյան, Եվրոպայի խորհուրդ, ERICarts, Ստրասբուրգ

http://www.culturalpolicies.net/down/armenia_012015.pdf

Եվրոպական միության խորհուրդ (2015) «Մշակութային և ստեղծարար կամուրջները՝ նորարարությունները, տնտեսական կայունությունը և սոցիալական ինտեգրումը խթանելու համար», Խորհրդի եզրակացություններ, Բրյուսել

http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52015XG0527(03)&from=EN

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում (2015) «Զեկույց Արևելյան գործընկերության երկրներում հանրային լրատվամիջոցների վերաբերյալ» Եվրոպական հանձնաժողով, Բրյուսել

https://baj.by/sites/default/files/analytics/files/report_on_state_of_media_in_eap_countries_final_version.pdf

Տարածաշրջանային մոնիթորինգի և կարողությունների զարգացման կառույց (ՏՄԿԶԿ) «Հայաստանի մշակույթի ոլորտի և մշակութային քաղաքականության հիմնարար վերլուծական զեկույց» (2013a), Կիև

http://library.euneighbours.eu/content/analytical-base-line-report-culture-sector-and-cultural-policy-armenia

Արևելյան գործընկերության Մշակութային ծրագիր (2013b) «Մշակույթի՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժի ըմբռնումը. նոր մոտեցում Հարավային Կովկասի համար», Միջազգային խորհրդաժողով, Թբիլիսի, սեպտեմբերի 26-28

http://gaccgeorgia.org/schc/Conference%20Proceedings.pdf

Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագիր (2017) «Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշներ, Հայաստանի վերլուծական և տեխնիկական զեկույցներ

https://www.culturepartnership.eu/upload/editor/2017/Policy%20Briefs/171128%20CDIS%20Armenia%20Technical%20Report%20English.pdf

https://www.culturepartnership.eu/upload/editor/2017/Policy%20Briefs/171128%20CDIS%20Armenia%20Analytical%20Report%20English.pdf

«Էրնսթ ընդ Յանգ» (Ernst & Young) (2015) «Մշակութային ժամանակներ. մշակութային և ստեղծարար ոլորտների առաջին գլոբալ նկարագրությունը», CISAC՝ «Հեղինակների և կոմպոզիտորների միությունների միջազգային կոնֆեդերացիա»

http://www.ey.com/Publication/vwLUAssets/ey-cultural-times-2015/$FILE/ey-cultural-times-2015.pdf

Eurocities, Kea (2016) «Արդյունավետ ներդրումներ եվրոպական քաղաքների ու

տարածաշրջանների մշակույթում. կոնկրետ դեպքերի ուսումնասիրությունների ցանկ», Եվրոպական հանձնաժողով, Բրյուսել

http://nws.eurocities.eu/MediaShell/media/Catalogue_03122015.pdf

Եվրոպական հանձնաժողով (2016a) «Դեպի առավել արդյունավետ ֆինանսական էկոհամակարգեր. ֆինանսավորման հնարավորությունների դյուրացման նորարարական գործիքներ մշակութային և ստեղծարար ոլորտների համար», Համակարգման բաց մեթոդ (OMC), ՄՍՃ-ների համար ֆինանսների հասանելիության ապահովման գծով աշխատանքային խումբ, Բրյուսել

http://ced-slovenia.eu/wp-content/uploads/2016/03/2015-Good-PracticeReport_CCS_Access-to-Finance.pdf

Եվրոպական հանձնաժողով (2016b) «Դեպի միջազգային մշակութային հարաբերություններին ուղղված ԵՄ ռազմավարություն», համատեղ հաղորդագրություն Եվրոպական պառլամենտին և խորհրդին, Բրյուսել

http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52016JC0029&from=EN

Եվրոպական հանձնաժողով (2017a) «Ուսումնասիրություն թիրախ լսարանի ձևավորման վերաբերյալ. ինչպես թիրախ լսարանները դարձնել մշակութային կազմակերպությունների գործունեության կենտրոնական ուղղությունը», Բրյուսել

https://publications.europa.eu/en/publication-detail/-/publication/cc36509d-19c6-11e7-808e-01aa75ed71a1

Եվրոպական հանձնաժողով (2017b) «Ստեղծարար արժեքային շղթաների բացահայտում. ուսումնասիրություն թվային դարաշրջանում մշակույթի տնտեսության վերաբերյալ», IDEA, KEA, imec-SMIT-VUB, Բրյուսել

http://www.keanet.eu/wp-content/uploads/Final-report-Creative-Value-Chains.pdf

Եվրոպական հանձնաժողով (2017c) «Մշակութային և ստեղծարար քաղաքների մոնիթոր», Հետազոտությունների համատեղ կենտրոն, Բրյուսել

https://composite-indicators.jrc.ec.europa.eu/cultural-creative-cities-monitor/media/c3monitor2017.pdf

Եվրոպական պառլամենտ (2016) «Մշակութային ու ստեղծարար ճյուղերի վերաբերյալ ԵՄ համաձայնեցված քաղաքականության մասին» զեկույցի նախագիծ, Բրյուսել

http://www.epgencms.europarl.europa.eu/cmsdata/upload/917376cb-a70a-4a9c-8d26-375ca5a730ff/Morgano_Ehler_report.pdf

Եվրոպական ստեղծարար հանգույցների ցանց (2016) «Ինչպես է աշխատանքը գործում. ազդեցությունների գնահատում», Nova Iskra/Kulturni Kod, Բելգրադ

http://creativehubs.eu/wp-content/uploads/2016/10/How_Work_Works-Publication-PDF_Preview.pdf

Հայաստանում ԵՄ պատվիրակություն (2017) «Օժանդակություն ԵՄ պատվիրակությանն էլեկտրոնային կառավարման և սոցիալական նորարարությունների հարցում», Իմպաքթ Հաբ Երևան, Հայաստանի գծով ԵՄ-ի 2014 թվականի ընդհանուր հատկացումը, Երևան

http://yerevan.impacthub.net/wp-content/uploads/sites/105/2017/02/FinalReportofSEsEcosysteminArmenia.pdf

GIZ՝ Գերմանիայի զարգացման գործակալություն (2017) «Հայաստանում մշակութային և ստեղծարար ճյուղերում խնդիրների գնահատում և հնարավոր միջամտություններ», «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA), ԵՄ-ն բիզնեսի համար (EU4Business), Երևան

https://www.smeda.am/en/media-center/library

ԿԱՆՏՈՐ (2015) «Կինոարտադրության և տեսալսողական ոլորտներում առկա իրավիճակն արևելյան գործընկերության երկրներում», Եվրոպական հանձնաժողով, Բրյուսել

https://europa.eu/capacity4dev/hiqstep/document/situation-cinema-and-audiovisual-industries-eastern-partnership-countries

ՊՐԱՎԻԼՈ, Օլենա (2017) «Ստեղծարար քաղաքների և շրջանների նախաձեռնություն. զեկույց Սիսիանի վերաբերյալ», ԵՄ-Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագիր, Կիև

https://www.culturepartnership.eu/upload/editor/2017/Research/170926%20Report%20for%20Sisian%20(ENG).pdf

ՊԻԿԱՐԴ Ռոբերտ (2017) «Զեկույց Հայաստանի մշակութային ժառանգության ոլորտի մրցունակության բարձրացման վերաբերյալ», ԵՄ-Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագիր, Կիև

https://www.culturepartnership.eu/upload/editor/2017/Subsector_report_Arm.pdf

Նախապատրաստական աշխատանքներ «Մշակույթը ԵՄ արտաքին հարաբերություններում» (2014) Հայաստանի վերաբերյալ զեկույց, Դեմիեն Հելլի և Յ. Ռաջ Իսար, Բրյուսել

http://ec.europa.eu/assets/eac/culture/policy/international-cooperation/documents/country-reports/armenia_en.pdf

ՍԱԿԿՈ, Պիեռ Լուիջի (2011) «Մշակույթ 3.0՝ Նոր տեսանկյուն ԵՄ Կառուցվածքային հիմնադրամների 2014-2020թթ. պլանավորման համար», Մշակույթի ոլորտի փորձագետների եվրոպական ցանց, Բրյուսել

http://www.interarts.net/descargas/interarts2577.pdf

«Թիէֆ քրիեյթիվ քոնսալթընսի» (TF Creative Consultancy) (2015) «Մշակութային և ստեղծարար ոլորտների լայն ազդեցությունը Եվրոպայում», Լոնդոն

https://ccspillovers.wikispaces.com/file/view/Cultural+and+creative+spillovers+in+Europe+-+full+report.pdf

Տերա Քոնսալթանտս (Tera Consultants) (2014) «ՀՆԱ-ի ու զբաղվածության մասով ստեղծարար ճյուղերի դերը ԵՄ-ում»

http://www.teraconsultants.fr/en/issues/The-Economic-Contribution-of-the-Creative-Industries-to-EU-in-GDP-and-Employment

The Programme is funded by
the European Union

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԵՒ ԱՅՑԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Երևան, 2016 թվականի հոկտեմբերի 31-նոյեմբերի 1

Կազմակերպչական աշխատանքներ

Նարեկ Թովմասյան, Բրիտանական խորհուրդ Հայաստան
Նորայր Երզնկյան, ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագիր

Հարցազրույցներ ու հանդիպումներ

Էմին Թորոսյան, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն
Իրինա Մովսեսյան, Հայաստանում ԵՄ պատվիրակություն
Սարա Անջարգոլյան, Իմփաքթ հաբ Երևան
Շուշան Փարեմուզյան, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն
Սվետլանա Սահակյան, Մշակույթի նախարարության արտաքին կապերի վարչություն
Վարդուհի Սարգսյան, Հայաստանում ԵՄ պատվիրակություն

Ենթառոլորտին առնչվող հետազոտական կլոր սեղաններ

Անահիտ Թարխանյան, A3 Արքիտեքտս
Աննա Կ. Գարգարյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն/HAYP փոփ-ափ պատկերասրահ
Անուշ Բեգլոյան, Մարքեթինգի ու հաղորդակցման փորձագետ
Արմեն Մարտիրոսյան, Անթարես Մեդիա Հոլդինգ
Արթուր Ղուկասյան, Հայ Ֆեսթ HIGH FEST International Performing Arts Festival
Իզաբելա Մերաբովա, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
Մարի Բարսեղյան, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)
Նազարեթ Կարոյան, Ժամանակակից արվեստի ինստիտուտ
Նիկա Բաբայան, «Կադանս» երաժշտության կենտրոն
Ռիմա Սարգսյան, Դասարան
Ռաֆֆի Մովսիսյան, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն
Ռուբեն Արևշատյան, Արվեստի քննադատների ազգային ասոցիացիա («ԱԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»)
Ստեֆանի Գյոկչյան, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն
Վիգեն Շիրվանյան, «Հայաստանի Մանուկներ» հիմնադրամ (COAF)

Այլեր

Բյուրոկրատ գրախանութ
Իմփաքթ հաբ Երևան
ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն

Culture & Creativity
EU-Eastern Partnership Programme

ՆՇՈՒՄ

Զեկույցը մշակվել է ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Սույն զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Զեկույցում զետեղված տեղեկատվության և տեսակետների համար ողջ պատասխանատվությունը կրում է հեղինակը:

ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նպատակն է՝ աջակցել մշակութային ու ստեղծարար ճյուղերի ներդրման մեծացմանը կայուն մարդասիրական, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ Հայաստանում, Բելառուսում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում:

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից